

23 -24(313-314)
06.08.2012թ.
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից


ԼՍԱՐԱՐ

Լусарар

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ, ՈՐ ԿԱՆԻԱՏԵՍԵԼԻ ԷՆՆ



Ետևում է մնացել ակտիվ քննադատական, պետական ավարտական ու միասնական քննությունները հանրակրթական դպրոցներում և ընդունելությունը բուհերում: Ինձեռորդ դասարանների շրջանավարտներն ուսումը կշարունակեն ավագ դպրոցում, քոլեջում կամ արհեստագործական ուսումնական հաստատություններում, 12-րդ դասարանների շրջանավարտների շատերն արդեն բուհերի ուսանողներ են, իսկ ոմանք էլ դեռ շարունակում են վերջին հանրակրթություններն օգտագործել այդ կարգավիճակը ծեռ բերելու համար: Ով որտեղ է ինչքան՝ այս ամենի մասին պատկերացում կազմելու համար գրուցեցիք LՂՀ գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրեն Յուրի ՔԱՐԱՍՅԱՆԻ հետ:

- Ինչից սկսենք, պարոն Քարայան:
- Գիմորդների հայտագրումից: Նախ ասենք, որ այս ուսումնական տարվա առանձնահատկությունն այն էր, որ 12-ամյա կրթության շրջանավարտներ ունեցանք: Նրանք մի մասը առանձնացված ավագ (Ստեփանակերտի հ. 8, 11, Շուշիի և Աբովյանի ամվան) և հոսքային ուսուցման (շրջկենտրոններ, ճարտարի հ. 1), դպրոցների, իսկ մյուս մասը սովորական միջնակարգ դպրոցի շրջանավարտներ են: 1762 հոգի, որից 777-ը (44%) հոսքային դասարաններից են, 985-ը (56%)՝ միջնակարգ դպրոցներից: Միասնական քննությանը հայտագրվել է 1261 դիմորդ, որից 682 հոգի՝ հոսքային դպրոցներից, 536-ը՝ միջնակարգ, իսկ մնացածը նախորդ տարվա շրջանավարտներ են: Փաստորեն շրջանավարտների 47%-ը հիմնական դպրոցն ավարտելուց հետո երեք տարի շարունակել է սովորել դպրոցում, բայց ավարտելուց հետո չի դիմել բուհ: Տրամաբանական հարց է առաջանում. ինչու են երեք տարի իզուր ժամանակ կորցրել, եթե բուհ ընդունվելու մտադրություն չունեին, կարող էին այդ ընթացքում որևէ մասնագիտություն սովորել արհեստագործական կամ միջին մասնագիտական հաստատությունում: Այդ երևույթը նկատվում է հիմնականում գյուղական դպրոցներում, ինչը ոչ ճիշտ քարոզչության արդյունք է (ուսուցիչները համոզում են 9-րդի շրջանավարտներին, անկախ մակարդակից, նստել 10-րդ դասարանում և շարունակել միջնակարգ կրթությունը):
- Քննություններն անցան համազգիստ, հասարակության կողմից կարծես առանց հետաքրքրության, որպիսին սովոր էինք տեսնել նախկինում: Ինչու էլ եք դա բացատրում:

- Քննություններին աժիտած ստեղծելը սխալ է: Ես միշտ ասում եմ, որ ցանկացած քննություն սովորական երևույթ է, ինչպես, օրինակ, երբ երեխան մանկապարտեզ է գնում, այնուհետև՝ տարրական, հիմնական, ավագ դպրոց կամ միջին մասնագիտական ու արհեստագործական հաստատություն: Նույնն էլ պետք է լինի բուհ ընդունվելը: Երեխան կրթական մի աստիճանից տեղափոխվում է մի այլ աստիճան: Իհարկե, քննական այդ «հանգստությունը» ինքն իրեն չի առաջացել. դա կրթական բարեփոխումների արդյունք է, մասնավորապես՝ միասնական քննությունների, որտեղ մարդկային գործոնը բացառվում է: Երբ ամեն ինչ պարզ ու թափանցիկ է, ինչո՞ւ պիտի աղմուկ ստեղծվի: Կազմակերպական առումով թերություններ չկային: Բովանդակային առումով՝ թեստերը հիմնականում կազմված էին ճիշտ: Բողոքներ գրեթե չկային: Մի քանի բողոքներ եղան կենսաբանության քննությունից մի համեմարարության առնչությամբ, բայց դա էական նշանակություն չունեցավ:
- Ընդհանուր առմամբ՝ ինչպե՞ս կգնահատեիք արդյունքները:
- Ճիշտն ասած՝ քննությունների արդյունքները մեզ համար անսպասելի չէին. տարեկան երկու անգամ բոլոր դպրոցներում անցկացվող արտաքին ընթացիկ գնահատումները ճշտորեն արտացոլում են իրավիճակը, և հունիսին անցկացված քննություններն ընդամենը վերահաստատեցին իրողությունը: Այնուամենայնիվ, այսպես ասենք՝ արդյունքները վատ չեն, բայց լավ էլ չեն: Վատ չեն այն իմաստով, որ, համեմատած 2010թ. արդյունքների հետ, բոլոր առարկաներից առաջընթաց է գրանցվել: «Անբավարար» գնահատականների քանակը նվազել է, «լավ»-երի քանակը մեծացել կամ մնացել նույնը, «գերազանց»-ներ էլ արդեն ունենք: Նախորդ տարիներին «գերազանց» ունեինք միայն ռուսաց և անգլերեն լեզուներից, իսկ այս տարի՝ բոլոր առարկաներից, ընդ որում, ունեցանք նաև առավելագույն մեկ՝ քսան միավոր. հայոց լեզու և գրականությունից: Հասկանալի կուզենայի առանձնացնել մաթեմատիկայի քննությունը: «Անբավարար»-ների քանակը նախորդ քննաշրջանի համեմատ նվազել է 19 %-ով, ունեցանք անգամ «գերազանց»՝ 19,25 միավոր: Վերջին տարիներից նման ցուցանիշներ չունեինք: Եվ նախարարությունն այն ժամանակ ստիպված էր դրական շեղում իջեցնել մինչև 6 միավոր: Այս տարի շեղում չեղանք, և դա համարում են որակի առումով առաջին ձեռքբերումը: Հաջորդ տարիներին կարող ենք նաև շեղ բարձրացնել: Մեր շրջանավարտներն արդեն մրցակցում են ՀՀ դիմորդների հետ: Կարող են ընդունվել հայաստանյան բուհեր՝ ոչ Արցախին հատկացված նպատակային տեղերի հաշվին, և եղան նաև այդպիսիք: Մյուս կողմից էլ արդյունքները լավ չեն այն տեսակետից, որ առաջարկները միջնակարգ դպրոցի մակարդակով լինելու պարագայում հոսքային ուսուցման սովորողների արդյունքները պետք է ավելի բարձր լինեին միայն «լավ» ու «գերազանց»:
- Բնականաբար, միասնական քննությունների գնահատականների հիման վրա էլ ընդունելություն է կազմակերպվել պետական և մասնավոր բուհերում: Ինչպիսի՞ն է պատկերը:
- Ամենաշատ՝ շուրջ 800 դիմորդ ունեցել է պետական համալսարանը, 110 դիմորդ՝ ՀՀ ագրարային համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղը, ոչ պետական բուհերը քիչ դի-

մորդներ են ունեցել: ԱրՊՀ առկա բաժին ընդունվել է 555 դիմորդ, մյուսները մրցույթից դուրս են մնացել: Ագրարային համալսարան ընդունվել է 99 հոգի: Ընդունվածների ցուցակները հուլիսի 16-ին կախված էին: Հուլիսի 15-20-ը մրցույթից դուրս մնացած դիմորդներին լրացուցիչ հնարավորություն է տրվել թափուր տեղերի համար, ինչը նորույթ էր: Դրա շնորհիվ 6 հոգի ընդունվել են ԱրՊՀ, և ընդհանուր թիվը կազմել է 561: Որոշ չափով համալրում կա մասնավոր բուհերում:
- Ո՞ր մասնագիտություններն են մրցութային:
- ԱրՊՀ-ում մեծ մրցույթ կար երեք մասնագիտություններում, որտեղ սահմանված տեղերից 2-3 անգամ ավելի շատ դիմորդներ են եղել՝ իրավագիտություն, տնտեսագիտության տեսություն, անգլերեն բաժնիներում: «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությունից այնքան էլ մեծ մրցույթ չի եղել «Հայ ժողովրդի պատմություն» առարկայի միասնական քննության ցածր արդյունքների պատճառով (կտրվողները շատ են եղել, և դրական գնահատականներ ստացողները դիմել են իրավագիտության բաժնի):
- Իսկ վերլուծություն կատարել է, թե որ շրջանավարտներն են վերին հորիզոնականները զբաղեցրել:
- ՀՀ բուհեր (ի դեպ, նախատեսված 60-ի փոխարեն ընդունվել է 84 դիմորդ, ավելացումը կատարվել է վճարովի տեղերի հաշվին) ընդունվածների 79 տոկոսը՝ 66 դիմորդ, հոսքային դպրոցների շրջանավարտներ են: Անվճար 63 տեղերից 52-ը բաժին է ընկել հոսքայինի շրջանավարտներին:
Բերենք ուրիշ տվյալներ էլ. ԱրՊՀ իրավագիտության բաժին ընդունվել է 39 հոգի, որի 92 %-ը (36 հոգի) հոսքային ուսուցմամբ շրջանավարտներ են: Միայն երեք հոգի ոչ հոսքայինից են: Անվճար 13 տեղերից 11-ը հոսքայինի շրջանավարտներ են: «Տնտեսագիտության տեսություն» բաժնի 68 ընդունվածներից 52-ը հոսքային դպրոցից են: Անվճար 14 տեղերից 12-ը՝ նմանապես: Կամ վերցնենք անվերելք. 53 ընդունվածներից 47-ը հոսքային դպրոցներից են: Եզակի դեպքեր կան, որ բարձր միավորներով սովորական միջնակարգ դպրոցի շրջանավարտներ լինեն: Այսինքն՝ դա այն է, ինչ կանխատեսում էինք. անհավասար մրցակցային պայմաններում են հոսքային և միջնակարգ դպրոցների շրջանավարտները:
Երեք առարկաների համագումարով ունենք 55-ից բարձր միավորներ (60 հնարավորից), 2 քննությունից ունենք 37, 75 (40-ից): Եվ այդպիսի միավորների քանակը շատ է:
- Իսկ ո՞ր բաժնիներում են թափուր տեղերը:
- Հիմնականում խնդիր ունենք ֆիզիկա մասնագիտությունից՝ ինչպես միշտ (4 դիմորդ), քիմիայից (3 դիմորդ), դեղագործական քիմիայից: Լրագրության բաժնում էլ թափուր տեղեր կան: Ստեղծագործական շարադրությունից քննությամբ 35 դիմորդից 25-ն է մասնակցել. երկի ինչպե՞ս են քննությունը տեսաձայնագրվում է, դրա համար էլ չեն ներկայացել: Մաթեմատիկայի, ինֆորմատիկայի բաժնիներում էլ կան թափուր տեղեր, բայց ոչ այնքան:
Ագրարային համալսարանում նույնպես թափուր տեղեր կան, բայց համեմատած նախորդ տարվա հետ՝ վիճակը բավարար է. ընդունվել է 99 հոգի: Ընդհանրապես, մրցույթի ժամանակ պահպանվել է մեկ սկզբունք.

պահուստային տեղերի հաշվին, որոնք նախատեսված են գոհված ազատամարտիկների, հաշմանդամ երեխաների համար, ավելացվել են անվճար տեղերը, բայց վճարովի տեղերը լրիվ պահպանված են:
- Ոչ պետական բուհերի ռեկտորները դժգոհ են ընդունելությունից՝ քիչ դիմորդներ հավաքագրելու համար: Նրանց ասելով՝ դիմորդներին միտումնավոր ուղղորդել են պետական համալսարան: Ինչպե՞ս է իրականացվել մրցույթը:
- Դիմորդն իրավունք ունի միանգամից մի քանի բուհերի համար հայտագրվել, բոլոր բուհերում ստեղծված են ընդունող համեմատողներ: Դիմորդը դիմում-հայտը գրում է այն բուհում, որն առաջին հայտով ներկայացված է: Բայց մրցույթը կազմակերպել է գնահատման և թեստավորման կենտրոնը՝ համաձայն կարգի: Օրվա դիմում-հայտերը բերվել են ԳԹԿ, որտեղ էլ մրցույթը կատարվել է: Դիմում-հայտերում քիչ են եղել ոչ պետական համալսարանները: Նախնական մրցույթը կատարվել է ըստ մասնագիտությունների, այնուհետև հանրապետական ընդունող համեմատողի հետ, որը նստում է ԿԳ նախարարությունում, ստուգվել են դիմորդների գործերը, ճշտվել փաստաթղթերը (ատեստատը, վկայագիրը, արտոնությունները), որից հետո կազմել ենք ցուցակները՝ ստորագրված իմ, հաստատված՝ հանձնաժողովի նախագահ ԿԳ նախարարի կողմից: Բուհի ռեկտորների հետ անցկացված խորհրդակցությունում նրանց ծանոթացրել ենք կառավարության հաստատած կարգին, որում գրված է, որ բուհը ԳԹԿ է ուղարկում ներկայացուցիչներ: Բայց ոչ մի մասնավոր բուհ չի ներկայացրել, ասել են՝ վստահում ենք ձեռք:
- Բուհերը հնարավորություն ունեն համալրվելու նաև հեռակային հաշվին: Այս տարի էլ զիջողականություն ցուցաբերվեց. հեռակային ընդունելությունը կատարվել է ոչ միասնական քննություններով:
- Հնարավորություն տրված է, բայց սկզբունքը մեկն է (կարգը հաստատված է նախարարի կողմից)՝ գերակայությունը մի միասնական և կենտրոնացված քննություններին: Մոտ 200 հոգի ունենք մրցույթից դուրս մնացած: Ես համամիտ եմ, որ առկա թե հեռակային պետք է ընդունվեն այն երեխաները, որոնք գիտելիք ունեն, համապատասխանում են չափորոշիչներին: Ի վերջո, նույն դիպվածն են տալիս, նույն մասնագետը դառնում:
- Իսկ ի՞նչ թերություններ եք նկատել, որ դուք, որպես ԳԹԿ տնօրեն, կուզենայիք վերացնել:
- Բուհերի ընդունելության փաստաթղթերը պետք է համեմատվեն մինչև միասնական քննությունների սկիզբը, ինչպես ՀՀ-ում է, որպեսզի ժամանակ ունենանք գործընթացն ավելի ճիշտ կազմակերպել: Այլապես՝ հունիսի 25-ին ավարտում ենք բուհերի ընդունելության քննությունները, 28-ին կենտրոնացված քննություններն են. պետք է ժամանակ լինի բավարար չափով պատրաստվելու: Չպետք է ստեղծել մի վիճակ, երբ մտածել ինչպես «հետոսաբար» հաղթահարել, պետք է ամեն ինչ իր ժամկետներով գնա: Դա է գլխավորը, որ պետք է փոխենք: Ես միշտ ասում եմ, որ 12-րդ դասարաններում պետական ավարտական քննություններն ավելորդ են, պետք է ընդհանրապես վերացնել: Իմաստ չունի դրանք անցկացնել. եթե երկու աստղանիշով առարկաները համարվում են տարեկան գնահատականներ, որոնք ընդունելություն ժամանակ փո-

խանցվում են ատեստացից, էլ ինչի՞ համար են պետական ավարտական քննություններ անցկացվում, ավելորդ ծախս է: Դրա փոխարեն պետք է ավելի ուժեղացնենք 9-րդ դասարանի քննությունները: Առաջարկությունն է՝ անցկացնել բոլոր առարկաներից (չեն ասում կենտրոնացնենք), ընտրովի առարկաներ չլինեն: Եթե աշակերտը դեռ պետք է կողմնորոշվի, ինչո՞ւ բնագիտական առարկաներից մեկնում էլը համեմատել ոչ բոլորը: 9-րդ դասարանում կարևորենք այդ հարցը, որպեսզի երեխան զգա, որ հիմնական դպրոցում է ստանում հիմնարար գիտելիքներ:
Մի հարցի վրա էլ կուզենայի ուշադրություն հրավիրել. դիմորդները հայտագրումը ճիշտ չեն պատկերացնում: Չմայած կարգը հրապարակված է, բուհերում ստեղծված է «Դիմորդի անկյուն», որտեղ հանգամանակից նշված է հայտագրման կարգը. առանց ընթերցելու գալիս են փաստաթղթերը հանձնելու: Եթե, օրինակ, նա տնտեսագետ է ուզում դառնալ, հայտագրումը պետք կատարի այնպես, որ շարունակի պայթյալը տնտեսագետ դառնալու համար, այլ ոչ թե մտածի, թե իր գնահատականներով որ բաժին կարող է ընդունվել: Ստացվում է, որ մարդը ոչ թե մասնագիտություն է ընտրում, այլ՝ թե որտեղ կարող է ընդունվել: Դա թերություն է: Դպրոցներում պետք է աշխատանք տանեն դիմում-հայտերի լրացման ուղղությամբ:
- Հետաքրքիր է իմանալ նաև 9-րդ դասարանի քննությունների արդյունքների մասին:
- Բերեն երկու կենտրոնացված քննությունների տվյալները: Մաթեմատիկային մասնակցել է 1999 հոգի, «անբավարար»-ների թիվը 6 % է, բայց դա էլ իր պատճառն ունի. նվազագույն չեն իջեցվել է մինչև 12 միավոր: Շուրջ 250 հոգի վերաքննություն կհանձնի տարբեր առարկաներից՝ օգոստոսի 20-30-ը: Սակայն մտահոգիչը ոչ թե «անբավարար», այլ «լավ» և «գերազանց» գնահատականների քանակն է. համապատասխանաբար՝ 14 % և 6 հոգի, որը 1 % էլ չի կազմում: Հայոց լեզու, գրականություն հանձնաժողովը 1987 հոգուց 5 %-ը «անբավարար» է ստացել, 18 %-ը՝ «լավ», «գերազանց»՝ 1 % (23 հոգի): Ստացվում է՝ մոտ 4000 աշխատանքից միայն 29 հոգի է «գերազանց» ստացել: Հիմնական դպրոցների վրա պետք է առավելազույն ուշադրություն դարձվի: Գերխնդիրը հիմա դա է: Եթե մրցակցությունը շարունակվի, շեղում չիջեցվի, այլ հակառակը, բարձրացվի, թեստերը կազմվեն ոչ թե միջնակարգ դպրոցի ծրագրով, այլ իրական մակարդակով, ծնողները հասկանան, որ մրցակցություն կա, և բոլոր դիմածները չէ, որ պետք է ընդունվեն, իհարկե, որակը կբարձրանա:
- Պարոն Քարայան, դպրոցները կտեղեկացվե՞ն արդյունքների մասին:
- Կատարվում է բովանդակային և տարածքային վերլուծություն: Արդեն ավանդույթ է դարձել օգոստոսյան խորհրդակցություններում ներկայացնել ըստ շրջանների ու դպրոցների, գյուղական ու քաղաքային բնակավայրերի: Թերությունների և ընդհանրապես կազմակերպչական հարցերն ավելի մանրամասն կքննարկվեն յուրաքանչյուր շրջանում: Առաջարկությունները կներկայացվեն նախարարին, ՀՀ ԳԹԿ-ին, որպեսզի ի հայտ եկած թերությունները մյուս տարի չկրկնվեն:

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՏԵՍՉԱԿԱՆ

Տոնի ստեղծագործությունը կարևորելով նաև հեղինակի լեզվաոճական առանձնահատկությունները:

- հաշվի առնելով յուրաքանչյուր երեխայի առանձնահատկությունները՝ սովորողների մոտ դաստիարակել ընթերցասիրություն. նրանց գիտակցել տալ, որ տեղեկատվական ոչ մի աղբյուր չի կարող փոխարինել գրքին. կրտսեր համակարգում լուրջ աշխատանք կատարել՝ մշակելու աշակերտների ընթերցանության տեխնիկան:

- դասերը դարձնել հնարավորինս դիտողական. համատեղ ուժերով պատրաստել և օգտագործել քարտադարաններ, զծապատկերներ, ուսումնասիրվող հեղինակներին նվիրված ալբոմներ, այլ ուսումնադիտողական նյութեր:

- պարբերաբար՝ զոնե ամիսը մեկ ամգամ, կազմակերպել համակարգչային դասեր. համացանցի հնարավորությունների հմտորեն օգտագործումը դասերը դարձնում է հետաքրքիր ու տապալիրիչ:

- ճիշտ կիրառել միավորային գնահատման համակարգը, պահպանել գրավոր աշխատանքների ստուգման որակական կողմը:

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼՂԻ ԿՈՆ ԿՊՏ ՎԵՏԱԿ

ՊՐՈԴՐԱԿԱՐՈՒԹՅՈՒՆ, ՊԱՏՈՒԹՅՈՒՆ

Համաձայն ԼՂԻ ԿԳ նախարարության ԿՊՏ ընդհանուր աշխատանքային պլանի, 2011-2012 ուսումնական տարում համընդհանուր տեսչական և թեմատիկ ստուգումներ են իրականացրել համարապետության տարածքում գործող 31 հանրակրթական դպրոցներում և Ստեփանակերտի ՄՊՍԿ-ում: Տեսչական ստուգումների ընթացքում երեք դպրոցներում /Քաշաթաղի շրջանի Ներքին Սուսի և Քաշուհիքի, Մարտակերտի շրջանի Ներքին Հոռաթաղի միջնակարգ դպրոցներ/, որպես համոնախմբի ղեկավար՝ դպրոցավարության հետ միաժամանակ ստուգել են նաև պատմության դասավանդման դրվածքը: Նշված դպրոցներում մանկավարժական խորհրդի նիստերում քննարկվել են տեսչական ստուգումների արդյունքները և տրվել համապատասխան հանձնարարականներ:

Վերոնշյալ տեսչավորված դպրոցների մանկավարժական կոլեկտիվներում տիրում է առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ, կոլեկտիվները որոշակի աշխատանքներ են կատարել ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման և բարելավման ուղղությամբ:

Նշված դպրոցներից երկուսում /Քաշուհիք, Ն. Հոռաթաղ/ ջեռուցումն իրականացվում է վառարանների միջոցով, ինչի համար ժամանակին մթերվել է անհրաժեշտ չափով վառելափայտ, իսկ Ն. Սուսի դպրոցում ջեռուցումն իրականացվում է էլեկտրաջեռուցիչների միջոցով: Ն. Հոռաթաղի միջնակարգ դպրոցի շենքը տիպային է, երկհարկանի, կառուցվել է 2000 թվականին: Ընդհանուր շենքային պայմանները բավարար են ուսումնադաստիարակչական գործընթացը կազմակերպելու համար, սակայն անհրաժեշտություն կա ունենալ նաև դաշլիճ՝ համարպրոցական միջոցառումների կազմակերպման համար: Դպրոցն ունի մարզադահլիճ, սակայն ձմռան շրջանում ջերմային ռեժիմը անբավարար է, չնայած ֆիզկուլտուրայի դասերը կազմակերպվում են այնտեղ: Տարածքում ստեղծված է բավականին հարմարավետ բացօթյա մարզահրապարակ: Ն. Սուսի դպրոցի շենքային պայմաններն անբավարար են՝ չեն հերիքում դասասենյակները: Անհրաժեշտ է կցակառուցել առնվազն երկու սենյակ, ինչպես նաև ուշադրություն դարձնել տարածքի ցանկապատմանը: Չնայած Քաշուհիքի դպրոցի շենքային պայմաններն ընդհանուր առմամբ բավարար են, սակայն կարիք կա դպրոցի շենքի ընդհանուր վերանորոգման, առանձնապես տանիքի որոշ հատվածներին: Նշված դպրոցները չունեն մարզադահլիճ, ձմռան շրջանում Ն. Սուսում ֆիզկուլտուրայի դասերը կազմակերպվում են դասարաններում, իսկ Քաշուհիքում՝ հարմարեցված դահլիճում:

Տեսչավորված դպրոցներում առկա են դպրոցավարությանն առնչվող բոլոր հիմնական փաստաթղթերը: Պետք է նշել, որ բավարար չափով չեն աշխատում տնօրենին կից խորհուրդները կամ էլ՝ բացակայում են այդ խորհուրդներում քննարկված հարցերի արձանագրությունները: Չնայած տնօրենության կողմից պարտադիր կերպով տրվում են գրավոր աշխատանքներ տարբեր առարկաներից, սակայն դրանց արդյունքները միշտ չեն քննարկվում մանկավարժական խորհրդի նիստերում կամ տնօրենին կից խորհրդակցություններում:

Հարկ է նշել, որ ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը զգալի չափով խանգարում են ոչ միայն շենքային անբավարար պայմանները, այլև անհրաժեշտ մեթոդական գրականության պակասը, մի շարք դպրոցներում տարբեր առարկաներից դասագրքերի անբավարությունը, որոշ դեպքերում ոչ մասնագետ ուսուցիչների դասավանդումը, ինչպես նաև անբավարար ուսումնանյութական բազան:

Համակողմանի տեսչավորված դպրոցներում բավարար հիմքերի վրա են նախարարի հրամանների և կարգադրությունների ուղղությամբ տարվող աշխատանքները: Բոլոր դպրոցներում առավելագույն իրականացվում են լիցքային վարժությունները, յուրաքանչյուր երկուշաբթի օրվա առաջին դասը սկսում են Լրցախի օրհներգով, ստեղծված են պետականության և փառքի անկյուններ: Որոշակի աշխատանքներ են կատարվել արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների ուղղությամբ: Պարտադիր կերպով նշվում են տոն և հիշատակի օրերը, կազմակերպվում են տարաբնույթ միջոցառումներ: Ստեղծված է «Ձախրոնք» մանկապատանեկան կազմակերպությունը:

Համակողմանի տեսչավորման ընթացքում ստուգվել է նաև պատմություն, հասարակագիտություն և ՀեՊ առարկաների դասավանդման դրվածքը Ստեփանակերտի հ. 5, 7 հիմնական, Սևերյանի շրջանի Սևերյանի միջնակարգ հոսքային, Պատարայի, Այգեստանի, Խնածախի, Շոշի միջնակարգ, Քաշաթաղի շրջանի Ն. Սուսի, Քաշուհիքի միջնակարգ, Մարտունու շրջանի Կարաթու, Կարմիր Շուկայի, Թաղավարի միջնակարգ և Թաղավար-Կալերի, ճարտարի հ. 2, 3 հիմնական, Շահունյանի շրջանի Ակնաղբյուրի միջնակարգ, Մարտակերտի շրջանի Ջազիկի, Չլդրանի, Կիչանի, Ն. Հոռաթաղի, միջնակարգ, Հաղորթի շրջանի Ակնաղբյուրի միջնակարգ և Քուրաթաղի հիմնական դպրոցներում: Զուգահեռաբար՝ ԿԳ նախարարի հանձնարարականով թեմատիկ ստուգումներ են իրականացվել Ստեփանակերտի հ. 8, 11, Շուշիի Մուրազյանի անվան ավագ դպրոցներում: Բոլոր կրթօջախներն ապահովված են ուսումնական ծրագրերով ու պլաններով, ուսուցիչները ծանոթ են առարկաների ծրագրային փոփոխություններին, ունեն ըստ առարկաների թեմատիկ պլանավորումներ: Ուսուցիչները դասի են ներկայացնում պատրաստ՝ օրվա դասի պլան-սեղմագրերով, իսկ որոշ ուսուցիչներ՝ նաև հանգամանորեն կազմված պլան-սեղմագրով, դասապրոցեսում օգտագործում են դպրոցում առկա դիտողական պարագաները՝ համապատասխան թեմատիկ քարտեզներ, իսկ դրանց բացակայության դեպքում՝ աշխարհի քաղաքական քարտեզն ու թեմատիկ ատլասները: Աշակերտները հիմնականում ապահովված են դասագրքերով, պահում են պատմության տետրեր, որտեղ գրի են առնում ինչպես տնային առաջադրանքները, այնպես էլ նոր հասկացություններն ու տարեթվերը, բացի դրանից, ունեն առանձնացված տետրեր գործնական ու թեմատիկ աշխատանքների համար, իսկ որոշ դպրոցներում աշակերտներն ունեն նաև աշխատանքային տետրեր: Գրեթե բոլոր դպրոցներում ուսուցիչները պահում են թղթապանակներ, որտեղ գետեղված են ըստ դասավանդման մեթոդիկային տիրապետող ուսուցիչներ, որտեղ էլ առարկայի դասավանդման

դրվածքը համեմատաբար ավելի բարվոք է: Իրենց աշխատանքով ուշադրության են արժանի Ֆ. Ավագյանը /Թաղավար/, Ս. Հարությունյանը /Կարմիր Շուկա/, Ս. Սարգսյանը /Ակնաղբյուր/, Ն. Օսիպյանը /Ակնաղբյուր/, Կ. Արիյանը /Կիչան/, Զ. Բալայանը /Շոշ/, Ա. Հայրապետյանը /Ստեփանակերտի հ. 5 հ/դ/, Լ. Ավանեսյանը /Ստեփանակերտի հ. 7 հ/դ/: Տեսչավորման արդյունքում պարզվել է նաև, որ կան երիտասարդ, բայց բավականին խոստումնալից ուսուցիչներ, ովքեր պարբերական ինքնակրթության և հետևողական աշխատանքի դեպքում կարող են ունենալ լուրջ հաջողություններ և դառնալ լավ մասնագետներ /Ս. Ավագյան-Այգեստան, Գ. Վերդյան-Շոշ, Գ. Կաֆյան-Կիչան, Ա. Սահակյան-Չլդրան, Է. Մակարյան-Ակնաղբյուր, Լ. Բաղդասարյան-ճարտարի հ. 3 հ/դ, Ա. Սարգսյան-Նոր Սեյսուլան, Է. Մարգարյան-Քուրաթաղ, Օ. Գասպարյան, Հ. Քոչարյան-Կարմիր Շուկա, Դ. Հարությունյան-Կոճողոտ, Ա. Խաչատրյան-Ն. Հոռաթաղ/:

Ըստ կատարված դասալսումների և համապատասխան վերլուծությունների՝ առկա դրական երևույթներով հանդերձ, ի հայտ են բերվել նաև որոշ թերություններ և բացթողումներ, որոնց մի մասն ուներ օբյեկտիվ, մի մասն էլ՝ սուբյեկտիվ պատճառներ: Այսպես, որոշ սկսնակ ուսուցիչներ ճիշտ չէին գրում օրվա դասի պլան-սեղմագրերը, որոշ դպրոցներում 12-րդ դասարանի երկրորդ կիսամյակի կրկնությունը կատարում էին 6-9-րդ դասարանի դասագրքերով: Նշված և այլ բացթողումների շտկման ու վերացման համար տրվել են համապատասխան ցուցումներ ու հանձնարարականներ: Ընդհանուր առմամբ, թույլ է դպրոցների նյութատեխնիկական բազան, չեն հերիքում համապատասխան թեմատիկ քարտեզներն ու դիտողական պարագաները, չնայած պետք է նշել, որ վերջին տարիներին ԼՂԻ ԿԳ նախարարությունը սկսել է լուրջ ուշադրություն դարձնել ուսումնական հաստատությունները դիտողական պարագաներով հարստացնելու խնդրին: Հարկ է նշել նաև, որ մի շարք դպրոցներում պահպանվել են խորհրդային տարիների որոշ չափով թեմատիկ քարտեզներ ու պատասխաններ՝ շնորհիվ տվյալ դպրոցների ուսուցիչների հոգատար վերաբերմունքի, ինչպես նաև ստեղծվել են ինքնաշեն դիտողական պարագաներ ու գյուղերի պատմությանն առնչվող փոքր թանգարաններ /Ս. Հոռաթաղ, Ակնաղբյուր /Հարթաթ/, ճարտարի հ. 3 հ/դ/:

Համակողմանի ստուգումների ընթացքում պարզվել է, որ որոշ դպրոցներում պատմության դասավանդման դրվածքը, մեղմ ասած, պատշաճ մակարդակի վրա չէ /Քաշուհիք, Ն. Սուս/: Նման դպրոցներում առարկան դասավանդում են կամ ոչ մասնագետներ, կամ էլ սկսնակ ուսուցիչներ: Նպատակահարմար է երիտասարդ ուսուցիչներին պարբերաբար ընդգրկել ԼՂԻ ԿԳ նախարարության և Կրթության ազգային ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղի կողմից կազմակերպվող դասընթացներին:

Ընդհանուր առմամբ, պատմության դասավանդման դրվածքը համակողմանի տեսչավորման ենթարկված դպրոցներում գնահատվել է բավարար:

Մ. ՄՆԻԹԱՐՅԱՆ ԿՊՏ ԱՎԱԳ ԱՎԵՐԱԿԱՆ ՎԵՏԱԿ

ՈՒՒՍԱՑ ԼԵՋՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Արցախի երեխաները տարիներ ի վեր դպրոցներում բացահայտել են իրենց ոչ միայն որպես ընդունակ աշակերտներ, այլև գերազանց տիրապետել են ռուսերենին, ինչի մասին վկայում են օլիմպիադաների արդյունքները ռուսերենից, ինչպես նաև «Ռուսական արձույթ» մրցույթի արդյունքները, որը առաջին անգամ այս տարի անցկացվեց Դարաբաղում, և 483 մասնակիցներից 14-ը դարձան մրցանակակիրներ, իսկ մեկն արժանացավ դիպլոմի:

2011-12 ուստարում հանրապետության 31 դպրոցներում տեսչավորվել է ռուսաց լեզու և գրականության դասավանդումը: Նշված դպրոցներում առարկան դասավանդել են 61 ու-

սուցիչներ: Մինչ դասալսումներ կատարելը ստուգել են ուսուցիչների թեմատիկ պլանավորումները, դասալսումներից հետո յուրաքանչյուր դաս մանրամասն քննարկվել է, ցույց է տրվել մեթոդական օգնություն:

Ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչները ղեկավարվում են ՀՀ և ԼՂԻ ԿԳ նախարարության նորմատիվ փաստաթղթերով, առարկայի գործող ծրագրերով ու դասագրքերով:

Յուրաքանչյուր ուսուցիչ ունի ինքնակրթության թղթապանակ և ուստարվա ընթացքում աշխատում է որոշակի թեմայի վրա: Մեթոդիկավորումների աշխատանքում հատուկ տեղ է հատկացվում առաջավոր մանկավարժական փորձի ուսումնասիրմանը, ամփոփմանը և կիրառմանը: Ուշադրություն է դարձվում և երիտասարդ ուսուցիչների պատրաստմանը. նրանք կցվում են առավել փորձառու ուսուցիչներին:

Ստուգումների ընթացքում նկատելիորեն աչքի են ընկել Ասկերանի հոսքային, Պատարայի, Շոշի, Խնածախի միջնակարգ, Մարտակերտի շրջանի Ս.Սեյսուլանի միջնակարգ, Ստեփանակերտի հ. 5 և 7 հիմնական դպրոցների սովորողները:

Ստեփանակերտի հ. 8 և 11, Շուշիի Մուրազյանի անվան ավագ դպրոցների թեմատիկ ստուգումները ցույց տվեցին, որ ուսուցիչները հիմնականում պատրաստվում են դասերին, տիրապետում են դասավանդման մեթոդներին: Այս դպրոցների սովորողներն առանձնապես են ջանասիրությամբ, հիմնականում ունեն գիտելիքների միջին մակարդակ: Նկատելի առանձնանում են բնագիտական հոսքի սովորողները, որոնք ազատ արտահայտվում են ռուսերենով, վստահորեն մեկնաբանություններ են անում: Նրանցից շատերը ռուսաց լեզվի օլիմպիադաների հաղթողներ են:

Նկատի ունենալով, որ ավագ դպրոցում կան և՛ ուժեղ, և՛ թույլ սովորողներ, ուսուցիչը պետք է բացահայտի իր վարպետությունը՝ դասը կազմակերպելով այնպես, որ և՛ առաջինները, և՛ երկրորդները դասից դուրս գան բավարարված, չնստեն ձեռքերը ծալած: Դասագործընթացում անհրաժեշտ է ընդգրկել առաջադրանքներ տարբեր մակարդակի աշակերտների համար, ինչը թույլ կտա իրականացնել շերտավորված մոտեցում սովորողների գիտելիքների գնահատման ժամանակ /այլ խոսքով՝ դասի նկատմամբ ունենալ ստեղծագործական մոտեցում/:

Տեսչավորումը ընթացիկ ուստարում ցույց տվեց, որ առանձնապես ազգային դպրոցի պայմաններում ամենաբարձր տեսակներից մեկն է գրավոր խոսքը:

Ռուսաց լեզվի ուսուցիչները բավարար ուշադրություն չեն հատկացնում քերականական նյութին: Ոչ միշտ է ուսուցիչ կողմից նոր նյութը մատուցվում պատշաճ մակարդակով /ինչի մասին վկայում են աշակերտների աշխատանքային տետրերը/: Թեմայի բացատրության ընթացքում գրառումներ չեն կատարվում ուսուցիչ կողմից՝ գրատախտակին, աշակերտների կողմից՝ տետրերում:

Տեսչավորման ընթացքում թերթել են աշակերտների տետրերը և կատարել հետևյալ եզրակացությունները.

- տետրերը հաճախակի չեն ստուգվում /անհրաժեշտ է 1-6-րդ դասարաններում ստուգումն իրականացնել պարբերաբար, իսկ 7-9-րդ դասարաններում՝ ընտրովի, բայց ոչ ուշ, քան երկու շաբաթ մեկ, իսկ թույլ սովորողներին՝ առավել հաճախադեպ/,
- ոչ բոլոր տետրերն են բավարար վիճակում,

ա/ սովորողներն ամփոփյ չեն կատարում գրառումները տետրերում, թույլ են տալիս ջնջումներ, չեն պահում լուսանցքը,

բ/ գրառումները /տանը, դպրոցում/ կատարում են կարճ,

գ/ չեն կատարվում բազմաբնույթ աշխատանքներ /կատարում են միայն վարժություններ/,

դ/ դասարանական աշխատանքների ծավալը չի համապատասխանում նախատեսված չափանիշներին:

Ցավոք, ոչ բոլոր ուսուցիչներն են ուշադրություն դարձնում ընթերցանության տեխնիկային: Ընթերցելիս աշակերտները կուլ են տալիս վերջավորությունները, սխալ շեշտադ-

ՏԵՏԱԿԱՆ

րությանը աղավաղում են բառը: Նրանք պետք է պարզ ու հստակ արտասանեն բառը, պահպանեն ուղղախոսության կանոնները: Ցանկալի է երկու ամիսը մեկ անցկացնել ընթերցանության տեխնիկայի մշակում:

Առարկայի դասերին կենտրոնական տեղ է գրավում բառային աշխատանքը: Գյուղական դպրոցի ուսուցիչները հիմնականում սահմանափակվում են հայերեն թարգմանությամբ: Տեղին է հիշեցնել չինական առածը, որն ասում է. «Մի նկարը լավ է, քան հազար խոսքը»: Անհրաժեշտ է փորձել համատեղել նոր բառերի բացատրությունը նկարների ցուցադրությանը /2-4-րդ դասարաններ/, ուսուցչի ձեռնարկ, 2008թ., Ն. Բայբուրյան, Ի. Յակուբովա, էջ 23/: Բառային աշխատանքի անցկացման ժամանակ ընտրել հոմանիշներ, հակահիշներ, բացատրել բառը, կազմել բառակապակցություններ, նախադասություններ: Եթե ուսուցիչները հաշվի առնեն նշյալ հանձնարարությունները, այդ դեպքում նրանց աշակերտները կհասնեն դրական արդյունքի:

Արդեն ավանդույթ են դարձել ԼՂՀ ԿԳ նախարարության կողմից կազմակերպված Ռուսական խոսքի օրերը. նրանց սպասում են ինչպես դպրոցականները, այնպես էլ ռուսաստանյան հյուրերը, որոնք դարձել են միջոցառման մշտական մասնակիցները: Արդեն երկրորդ տարին է՝ միջոցառմանը մասնակցելու համար Սիմնի Նովոդոլինյոյի Արցախի է ժամանում ռուս բանաստեղծ Արցախի Կոնստանտին Կոնստանտինովիչը՝ հետևյալ խոսքերի հեղինակը. «Իմ Արցախ, ես մասնիկն եմ քո, ինչպես բոլոր նրանք, ովքեր դարձրել պաշտպանել են քեզ, ապրել միասնական ճակատագրով»:

Ընթացիկ տարում Ռուսական խոսքի օրերի անցկացմանը իր գործուն մասնակցություն է ունեցել Արցախի պետական նախարարը, որտեղ մեծ ուշադրություն է դարձվում ռուսերենի ուսուցմանը՝ էլեկտրոնային ամսագրի անվանումով՝ «Ռուսական խոսքի օրեր»:

Միջոցառման բացման օրը անցկացվեց ասուների մրցույթ: Այս տարին հորեքական կերպով էր քանի որ այն անց էր կացվում հինգերորդ անգամ: Մրցույթին մասնակցել են համրապետության ավագ դպրոցների սովորողները, որոնք բոլորն էլ գերազանց պատրաստվել էին իրենց ուսուցիչների կողմից:

Մրցատյանի անդամները, բոլոր ներկաները տեսան արտիստիկ ասուները՝ ընդունակ արտահայտելու հեղինակի գեղարվեստական հնարանքը:

Մրցույթի հաղթողները պարգևատրվել են ԼՂՀ ԿԳ նախարարության պատվոգրերով, նվերներով, գրքերով՝ Հայաստանի հետ բարեկամության և համագործակցության Ռուսաստանյան ընկերության կողմից և մրցանակներով՝ ԱրՊՀ ռեկտոր Մ. Դադայանի և «Մեքոպ Մաշտոց» համալսարանի ռեկտոր Դ. Գաբրիելյանի կողմից:

Միջոցառման ծրագիրը բավական ընդարձակ էր. Մարտունու տեղի ունեցավ ռուսաց լեզվի ուսուցիչների մեթոդական խորհրդակցություն, Հաղորդում՝ ռուսական մշակույթի և ռուս ժողովրդի ավանդույթների իմացության մրցույթ, Շուշիում՝ «Պատերազմի ուղիներով» միջոցառումը՝ նվիրված Հայրենական պատերազմին և Շուշիի ազատագրմանը, Բերձորում՝ «Գարուն... Գարուն... Գարուն...» թեմայով միջոցառումը, Ի. և 2 դպրոցների մասնակցությամբ, և «Յոթ հեղափոխության սիրտ մասին» ստեղծագործական երեկոն՝ նվիրված ռուս գրող, հայ ժողովրդի մեծ բարեկամ Կիմ Բակչիին, որը պատրաստել է Ստեփանակերտի հ. 3 դպրոցը: Բոլոր մասնակից ուսուցիչները ցուցաբերել են բարձր վարպետություն, մեթոդական պատրաստվածություն, իսկ դպրոցականները ազատ տիրապետում են ռուսերենին՝ որպես միջազգային հաղորդակցման լեզվի:

Միջոցառման արտերկրյա հյուրերին ընդունել է ԼՂՀ նախագահ Բ. Սահակյանը, որը մշել է. «Այս հողում մենք՝ ռուսները և հայերը, միասին ենք՝ համուն Արցախի»:

Իմ երախտագիտությունն են հղում ԼՂՀ ԿԳ նախարար Վ. Խաչատրյանին, շրջվարչակազմների ղեկավարներին, կրթության բաժնիների վարիչներին, ԱրՊՀ ռեկտորին, ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի վարիչներին:

Խնամքով վերաբերվելով այլ ժողովուրդների մշակույթներին՝ հայ երեխաներն ուժ և

հզորություն են հաղորդում սեփական մշակույթին: Տիրապետել էր այդպիսի ժողովրդի լեզվին և մշտապես մենք կրկնակի ենք հարստանում:

Ռ. ՕՍԻՊՈՎ ԿԳՏ փեսույ

ՕՏԱՐ ԼԵՋՈՒ (ԱՆՂԵՐԵՆ)

2011-2012 ուստարում կրթության տեսչության հանձնախմբի կազմում 13 դպրոցներում /այդ թվում՝ երեք ավագ և 10 հիմնական/ իրականացրել են անգլերենի դասավանդման դրվածքի ստուգումը: Ամփոփելով կատարածը՝ կարելի է նշել, որ տեսչավորված դպրոցներում՝ Ստեփանակերտ քաղաքում և գյուղական բնակավայրերում, կա մեծ տարբերություն և մասնագետների գիտելիքների և սովորողների գիտելիքների մակարդակների միջև: Ստուգված դպրոցների ուսուցիչներից հարկ է նշել Քրիստինե Ասրյանին /Ստեփանակերտի հ. 9 հիմն. դ. /, Լուսինե Գասպարյանին /Մարտակերտի շրջանի Նոր Սեյտլումի միջն. դ./: Նշված ուսուցիչներն ունեն հաջողություններ, իսկ գրագիտությունը, սովորողների ձեռք բերած գիտելիքները, գրավորների արդյունքները բավարար են: Նշենք նաև, որ Լուսինե Գասպարյանը ավարտել է «Գերմաներեն լեզու» բաժինը, իսկ մագիստրատուրան շարունակել «Անգլերեն լեզու» մասնագիտությամբ: Ստեփանակերտի հ. 7 հիմնական դպրոցում ունենք աշխատող մասնագետներ, սակայն գրավորների արդյունքները ցածր են: Ստեփանակերտի հ. 5 հիմնական դպրոցում կան դասարաններ, որտեղ սովորողների գիտելիքները բավարար մակարդակի վրա են, իսկ ուսուցիչների աշխատանքը տարեցուսի փոխվում է դեպի լավը /Գայանե Հայրիյան և Քրիստինե Բալայան/:

Ասկերանի հոսքային, Շուշիի Մուրացանի անվան ավագ, Մարտունու շրջանի Ճարտարի հ. 2 և 3 հիմնական, Ասկերանի շրջանի Շուշի դպրոցներում անգլերենի ուսուցումը արդեն ունի հիմքեր, բայց դեռ աշխատանքներ և անելիքներ շատ ունեն սովորողների անգլերենի իմացության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ: Ուսուցիչները հիմնականում աշխատող են, զբաղվում են ինքնակրթությամբ, աշխատանքներ են տանում անգլերենի կաբինետի ստեղծման ուղղությամբ, բայց անհրաժեշտ է ըստ հնարավորին համագործակցել:

Ստեփանակերտի հ. 8 և 11 ավագ դպրոցներում, որտեղ պարբերաբար կատարվում են ստուգումներ, որոշակի տարբերություն զգացվում է սկսման ուսուցիչների աշխատանքում, կան նաև նորանշանակ ուսուցիչներ: Դրանցից ոմանք ունեն գիտելիքներ, իսկ դասավանդման արդյունքի մասին դեռ վաղ է խոսել: Նշված դպրոցներում ունենք փորձառու ուսուցիչներ, կան նաև պատրաստ երիտասարդ մասնագետներ, որոնց աշխատանքի արդյունքներն արտացոլվում են և համրապետական օլիմպիադաներում և միասնական քննություններում: Այսպես, 2011-2012 ուստարում կազմակերպված դպրոցականների առարկայական օլիմպիադայի տարբեր փուլերում մասնակցել են ստուգված դպրոցներից Ստեփանակերտի հ. 8 և 11 ավագ, հ. 9 հիմնական, Շուշիի Մուրացանի անվան ավագ դպրոցների սաները, գրավել մրցանակային տեղեր և ստացել գովասանագրեր: Ցավալի է, որ չկան մասնակիցներ գյուղական դպրոցներից:

Տեսչավորված համարյա բոլոր դպրոցներում թույլ է և՛ դասավանդող ուսուցիչների, և՛ սովորողների բանավոր խոսքը, իսկ պատճառը պետք է փնտրել նրանում, որ ուսուցիչները շատ քիչ են օգտագործում, կամ ընդհանրապես չեն օգտագործում անգլերենը դասագործընթացում, այստեղից էլ պարզ է՝ սովորողը չի լսում և դժվարանք է խոսել: Քիչ է կատարվում աշխատանք ինքնակրթության ուղղությամբ, կամ էլ ուսուցիչն ընտրում է սխալ ուղղություն: Ձբաղվելով ինքնակրթությամբ՝ ուսուցիչն աստիճանաբար պիտի վերացնի մասնագիտական թերությունները, սովորի չիմացածը:

Ստուգված դպրոցների շարքում կան նաև դպրոցներ, որտեղ դեռ մեկ կամ երկու տարի

է, ինչ ուսումնասիրվում է անգլերենը: Նման դպրոցներում գրավոր աշխատանքներով չի կատարվում ստուգումը, ստուգվում են պարզապես տարրական գիտելիքները՝ տառաձայնաշարքում, կարդալ և գրել /Նոր Այգեստանի հիմն. դպրոց/:

Ռ. ՍԱԿԱՐՅԱՆ ԿԳՏ փեսույ

ՍԱԹԵՄԱՏԻԿԱ

2011/12 ուստարում համակողմանի ստուգումներ են անցկացվել հանրապետության 30 դպրոցներում: Ստեփանակերտի հ. 9 հիմնական դպրոցում անց են կացվել թեմատիկ ստուգումներ, իսկ Ստեփանակերտի հ. 8, 11, Շուշիի Մուրացանի անվան ավագ դպրոցներում ուսումնասիրվել է առարկայի ընթացքը: Տեսչավորվել են Ստեփանակերտ քաղաքում՝ 2, Ասկերանի շրջանում՝ 7, Մարտակերտի շրջանում՝ 9, Մարտունու շրջանում՝ 6, Հաղորդի շրջանում՝ 1, Շահումյանի շրջանում՝ 1, Քաշաթաղի շրջանում՝ 4 դպրոցներ:

Այդ դպրոցներում աշխատում են առարկայի 92 ուսուցիչներ, որից 90-ն ունեն բարձրագույն կրթություն, այդ թվում 75-ը՝ մասնագիտական կրթություն, 2-ը ուսանողներ են:

Ուսուցիչներն ապահովված են գործող դասագրքին համապատասխան ուսուցչի ձեռնարկներով, ունեն օրինակելի թեմատիկ պլանավորումներ, ապահովվում են ծրագրային նյութի կատարումը: Բոլոր ուսուցիչների մոտ կատարվել են 320 ժամ դասալսումներ՝ յուրաքանչյուրի մոտ՝ 3-4 ժամ, տեսչավորված դպրոցների 210 դասարաններում տրվել են գրավոր աշխատանքներ: Գրավոր աշխատանքների արդյունքները ցույց տվեցին, որ աշակերտների շուրջ 2/3-ը մաթեմատիկա առարկայից ունեն անբավարար գիտելիքներ, ցածր է ուսման որակը, ուսուցիչների կողմից նշանակված ընթացիկ և կիսամյակային գնահատականների մեծ մասը չի համապատասխանում աշակերտների փաստացի գիտելիքներին:

Գրավոր աշխատանքներ տրված դասարանների 2021 աշակերտներից գրավորների մասնակցել է 1880-ը (93%): Դրական գնահատականներից համարժեք միավորներ է ստացել 631 աշակերտ (33,6%), 7-10 միավորներ՝ 124-ը (6,6%): Գրավորներից բացակայած 141 աշակերտներից (7%) ամենաշատը բաժին է ընկնում Ստեփանակերտի հ. 7 (31 աշակերտ), Ասկերանի շրջանի տրոնի (32 աշակերտ) և Ասկերանի շրջանի Այգեստանի (18 աշակերտ) դպրոցներին:

Համեմատաբար բարձր առաջադիմություն է գրանցվել (հանրապետական՝ 33,6%-ից բարձր) Ստեփանակերտի հ. 7 (44%), հ. 5 (40,5%), Մարտակերտի շրջանի Նոր Այգեստանի (44%), Կոճողոտի (38%), Ջազիկի (42%), Ասկերանի շրջանի Լեռնավանի (37,8%), Շոշի (41%), Մարտունու շրջանի Թաղավարդ-Կալերի (44,4%), Ճարտարի հ. 2 (46%), հ. 3 (42,3%), Կաղարծու (61%), Քաշաթաղի շրջանի Կունայրի (37%), Քաշունիքի (66,6%), դպրոցներում: Ուսման որակը (այն աշակերտները, որոնք ստացել են 7-10 միավորներ) համեմատաբար բարձր է եղել Ստեփանակերտի հ. 7 (16,3%), Մարտակերտի շրջանի Նոր Այգեստանի (12%), Չլդրանի (11%), Կոճողոտի (11%) Ասկերանի շրջանի Լեռնավանի (13,5%), Շոշի (22%), Այգեստանի (11%), Մարտունու շրջանի Կաղարծու (18%), Ճարտարի հ. 2 (11%), հ.3 (11,5%) դպրոցներում:

Ոչ մի աշակերտ 7-10 միավորներ չի ստացել, կամ գրո տոկոս ուսման որակ է գրանցվել Մարտակերտի շրջանի Կիչանի, Շահմասուրի, Ծակահողի, Ասկերանի շրջանի Խանցքի, Կարմիր գյուղի, Քաշաթաղի շրջանի Աղավնոյի, Քաշունիքի, Սուսի, Կունայրիի դպրոցներում:

Սպասվածից ցածր առաջադիմություն և ուսման որակ է արձանագրվել Ասկերանի միջնակարգ հոսքային (32,6% և 3%), Մարտունու շրջանի Կարմիր Շուկայի (19% և 2%) դպրոցներում:

ԼՂՀ ԿԳ նախարարի հանձնարարությամբ մայիս ամսին կրկնակի գրավորներ են անցկացվել Ասկերանի միջնակարգ հոսքային և

Ասկերանի շրջանի Այգեստանի միջնակարգ դպրոցների այն դասարաններում, որտեղ տեսչական ստուգումների ժամանակ գրանցվել է ցածր առաջադիմություն: Ասկերանի միջնակարգ հոսքային դպրոցի 5 դասարաններում, այդ թվում՝ բնագիտական 10-12- րդ դասարաններում տրված գրավորների առաջադիմությունը կազմել է 25%, ուսումնա որակը՝ 2%, այսինքն՝ տեսչական ստուգումների արդյունքները հիմնականում պահպանվել են, իսկ Այգեստանի միջնակարգ դպրոցում գրանցվել է առաջադիմության և ուսման որակի աճ: Տեսչական ստուգման ժամանակ առաջադիմությունը եղել է 27,2%, ուսման որակը՝ 9,3% , իսկ կրկնակի գրավորներից 5-րդ, 7-9-րդ և 12-րդ դասարանների աշակերտների 45% -ը ստացել է դրական միավորներ, իսկ 12% -ը՝ 7-10 միավորներ:

Մաթեմատիկա առարկայի դասավանդման դրվածքը ստուգվել է Ստեփանակերտի հ. 9 հիմնական դպրոցում, և միաժամանակ գրավոր աշխատանքներ են տրվել 5-9-րդ դասարաններում: Այդ դասարաններում սովորող 230 աշակերտներից գրավորներին մասնակցել է 214-ը: Առաջադիմությունը կազմել է 30%, ուսման որակը՝ 9%:

Կատարված դասալսումները ցույց տվեցին, որ բարեխղճորեն և բավարար մակարդակի դասեր են վարում ուսուցիչներ Լ. Սարգսյանը (Ստեփանակերտի հ. 7 հիմն. դպրոց,) Լ. Հովսեփյանը (Ստեփանակերտի հ. 5 հիմն. դպրոց), Յու. Խաչատրյանը, Ա. Հայրապետյանը, Ռ. Հարությունյանը (Ստեփանակերտի հ. 8 ավագ դպրոց), Մ. Ավագիմյանը, Ջ. Կարապետյանը (Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոց), Մ. Սարգսյանը (Շուշիի Մուրացանի անվան ավագ դպրոց), Գ. Արզումանյանը (Ասկերանի շրջանի Լեռնավանի միջն. դպրոց), Դ. Առուստամյանը, Ս. Նազարյանը (Մարտակերտի շրջանի Նոր Այգեստանի միջն. դպրոց): Նրանք դասերը կազմակերպում են՝ գիտական բարձր մակարդակով, զարգացնում են աշակերտների տրամաբանական մտածողությունը, ձգտում են, որ աշակերտներն իրենց տեսական գիտելիքները կիրառեն խնդիրների և վարժությունների լուծման ժամանակ, ապահովում են աշակերտների ստեղծագործական և ինքնուրույն աշխատանքները, սիստեմատիկաբար զբաղվում են իրենց մասնագիտական և մեթոդական պատրաստակամությամբ բարձրացմամբ:

Միաժամանակ կատարված դասալսումներից պարզվել է, որ առարկայի դասավանդման դրվածքը ցածր հիմքի վրա է Ասկերանի շրջանի Խանցքի, Ասկերանի միջնակարգ հոսքային, Կարմիր գյուղի, Մարտակերտի շրջանի Շահմասուրի, Ծակահողի, Կիչանի, Ներքին Հոռաթաղի, Շահումյանի շրջանի Ալամաբերդի, Քաշաթաղի շրջանի Աղավնոյի, Մարտունու շրջանի Կարմիր Շուկայի և այլ դպրոցներում:

Այդ դպրոցներում դասավանդող ուսուցիչներն ամենայն լրջությամբ չեն նախապատրաստվում օրվա դասերին, դասավանդում են ավանդական մեթոդներով, դասերին աշակերտներն ակտիվ և ուշադիր չեն, չեն ապահովում աշակերտների ինքնուրույն և ստեղծագործական աշխատանքը, տնային աշխատանքներն ուսուցիչները չեն ստուգում, առավելագույն չեն ապահովում հետադարձ կապը, նպատակային չեն օգտագործում դասերի յուրաքանչյուր րոպեն:

Օ. ԱՍՐՅԱՆ Նախարարի խորհրդական Ա.ՎԱՆԻՅԱՆ ԿԳՏ փեսույ

ՖԻԶԻԿԱ

Հաշվետու ժամանակաշրջանում՝ սեպտեմբերից մինչև մայիս, ԿԳ նախարարի հրամանների համաձայն, ստուգվեց առարկայի դասավանդման դրվածքը 9 հիմնական, 16 միջնակարգ, 3 ավագ դպրոցներում:

Ստուգումներից պարզ դարձավ, որ ուսուցիչներն առաջնորդվում են գործող ծրագրերով ու ծրագրային նյութին համապատասխան դասագրքերով, խնդրագրքերով: Ծրագրային նյութի կատարման գործում

ՏԵՍՉԱԿԱՆ

5 կան սխալներ L.Մխիթարյանի /Կի-
զանի մ/ր/, Օ.Հակոբյանի /Աղավնոյի
մ/ր/, Բ.Մադուխայանի /Կոճողոտի մ/ր/,
Լ.Բաղդասարյանի /Շահմասուրի հ/ր/ մոտ,
չի պահպանվել ծրագրով նախատեսված
թեմատիկ գրավոր ու գործնական աշխատանքների քա-
նակը, ճիշտ չի պլանավորվել 12-րդ դասարանի
2-րդ կիսամյակի համար կրկնողության
ծրագիրը: Կարելի է ասել, որ ստուգված գրե-
թե բոլոր դպրոցներում կան թերություններ ու
բացթողումներ ծրագրային նյութի կատարման
գործում: Ուսուցիչների մեծ մասը ճիշտ չի
ընտրում թեմատիկ և կիսամյակային ամփո-
փիչ աշխատանքների տեքստերը, ստուգում,
գնահատում է առանց պահպանելու գնա-
հատման չափանիշները, ու ընդհանրա-
պես, ճիշտ չի կիրառում գնահատման նոր հա-
մակարգը: Ուսուցիչների մոտ կան թերույթու-
ններ, սխալներ, բացթողումներ նոր նյութի հա-
ղորդման, խնդիրների լուծման, գրաֆիկների
կառուցման, տնային աշխատանքների տր-
ման ու ստուգման գործում: Որոշ դպրոցնե-
րում դասամատյանների համապատասխան
էջի գնահատականները չեն համապատաս-
խանում վերջում նշանակված բաղադրիչ
գնահատականներին:

Աշակերտները հիմնականում ապահով-
ված են դասագրքերով, ունեն աշխատանքա-
յին, որոնց մեջ գրանցում են տնային ու դասա-
րանական աշխատանքները, թեմատիկ գրա-
վոր ու գործնական աշխատանքների համար
նախատեսված տետրեր:

Ստուգումներից պարզվեց, որ մի շարք
դպրոցներ չունեն ֆիզիկայի կաբինետ, լաբո-
րատորիա. այդ թվում են Ասկերանի շրջանի
Խնածախի միջնակարգ, Մարտունու շրջանի
Կաղարծու միջնակարգ, Մարտակերտի շրջա-
նի Կիչանի, Չլդրանի, Ջազիկի, Նոր Սեյսու-
լանի միջնակարգ, Շահմասուրի հիմնական,
Քաջաթաղի շրջանի Աղավնոյի միջնակարգ
դպրոցները: Մի շարք դպրոցներում առկա է
ծրագրով նախատեսված ցուցադրական ու
գործնական աշխատանքները կատարելու
համար անհրաժեշտ սարքերի մի մասը կամ էլ
պատասառների մի չնչին մասը: Կան դպրոց-
ներ, որոնք ունեն կահավորված կաբինետ-
լաբորատորիա, սակայն ձեռնային շրջանում
այն չի ջեռուցվում, ու այդ պատճառով ֆիզի-
կայի դասաժամերը չեն իրականացվում
տվյալ կաբինետում: Ուրախալի է, որ առան-
ձին դպրոցներ ունեն և կաբինետ, և լաբորա-
տորիա, որտեղ էլ իրականացվում են ֆիզի-
կայի դասաժամերը. այդ թվում են Ստեփանա-
կերտի հ. 5, 9 հիմնական, 8, 11 ավագ, Շուշիի
Մուրացանի անվան ավագ, Պատարայի միջ-
նակարգ դպրոցները, ինչը չի կարելի ասել
Կարմիր Շուկայի կաբինետ-լաբորատորիայի
մասին, որը գտնվում է խոշոր վիճակում:

Այն դպրոցներում, որոնք չունեն կա-
վագույն դեպքում ունեն աղքատ նյութատեխ-
նիկական բազա, կան ծրագրային նյութի կա-
տարման գործի խախտումներ: Չեն կատար-
վում ծրագրով նախատեսված ցուցադրական ու
գործնական աշխատանքները: Հատկապե-
ված դասաժամերին ուսուցիչները կամ կրկ-
նում են անցած թեմաները, կամ լուծում խն-
դիրներ: Հարկ է նշել, որ գործնական /լաբորա-
տոր/ աշխատանքների կատարման հաճա-
խությունը որոշվում է ծրագրով: Գնահատելիս
հաշվի են առնվում յուրաքանչյուր աշակերտի
մասնակցությունը ստորագրող աշխատան-
քին, փորձարարական հմտությունները, ար-
դյունքները ներկայացնելու ու մեկնաբանելու
կարողությունները: Որպես այլընտրանք՝
գործնական աշխատանքների տեսակներ են
համարվում նաև ինքնաշեն սարքերի նախագ-
ծումն ու պատրաստումը, պարզագույն ֆիզի-
կական երևույթների ինքնուրույն ուսումնասի-
րությունը, ռեֆերատները:

Կատարած դասալուծումներից պարզ դար-
ձավ, որ առարկայի դասավանդման դրվածքը
մի շարք դպրոցներում /թվով 10/ շատ ցածր
մակարդակի վրա է: Աշակերտների զգալի մա-
սը չունի խոր ու կայուն գիտելիքներ առարկա-
յից, ցածր է նրանց մոտ տրամաբանական
մտածողությունը, ավելի շատ անգիր են ա-
նում դասը /այն էլ՝ ոչ լրիվությամբ/, չեն կարո-
ղանում բացատրել հենց իրենց կողմից տր-
ված սահմանումների, օրենքների բուն էու-
թյունը, տալ մեծությունների չափման միա-
կորներ ՄՅ-ում ու բացատրել նրանց ֆիզիկա-

կան իմաստը: Բավարար մակարդակի վրա
չեն սովորողների բանավոր խոսքը, պատմե-
լու ոճը, հաճախ խոսում են սխալներով, աղա-
վաղում որոշ ֆիզիկական տեմիններ, ճիշտ
չեն կատարում օրենքների ձևակերպումը: Չեն
կարողանում ինքնուրույն լուծել խնդիրներ,
կառուցել գրաֆիկներ:

Աշակերտների փաստացի գիտելիքները
չեն համապատասխանում նրանց ընթացիկ ու
կիսամյակային գնահատականներին: Ուսու-
ցիչները թույլ են տալիս գնահատականների
արհեստական բարձրացում:

Ուսուցիչների մի մասը հիմնականում տի-
րապետում է առարկային ու նրա դասավանդ-
ման մեթոդներին: Նրանք թվում են Վ.Ղազա-
րյանը, Ն.Հայրապետյանը, Լ.Գասպարյանը,
Շ.Բեգլարյանը, Ռ.Գևորգյանը /Ստեփանակեր-
տի հ. 5, 7, 9 հիմնական դպրոցներ/, Ա.Բաղդա-
սարյանը /Խնածախի միջնակարգ դպրոց/,
Լ.Դանիելյանը /Պատարայի միջնակարգ դպ-
րոց/, Է.Սարգսյանը /Ասկերանի միջնակարգ
հոսքային դպրոց/, Վ.Խաչատրյանը /Ներքին
Հռոտաթաղի միջնակարգ դպրոց/, Լ.Սարգսյա-
նը, Ի.Նասիբյանը, Ա.Գրիգորյանը, Ծ.Գրիգո-
րյանը /Ստեփանակերտի հ. 8, 11 ավագ դպ-
րոցներ/: Մյուս մասը չի կարողանում յուրա-
քանչյուր դասի մեջ առանձնացնել զխավորը
երկրորդականից, չծանրաբեռնել երեխանե-
րին ավելորդ, ոչ էական տվյալներով ու թվե-
րով: Պահանջվող ուշադրություն չի դարձվում
տնային աշխատանքների տրմանն ու ստուգ-
մանը, նոր նյութի հաղորդման ժամանակ չեն
ապահովվում նախորդ ու նոր, ինչպես նաև
միջառարկայական կապերը, քիչ տեղ է տր-
վում խնդրահարույց իրավիճակների ստեղծ-
մանը:

Դասավանդման գործընթացում ուսուցիչ-
ների մի մասը ուշադրության կենտրոնում է
պահում համեմատաբար լավ սովորող 2-3
աշակերտների՝ ուշադրությունից դուրս թող-
նելով դասարանը, ինչը բացասաբար է անդ-
րադառնում ընդհանուր առաջադիմության
վրա, քիչ ուշադրություն է դարձվում խնդիրնե-
րի լուծմանը: Դա է պատճառը, որ աշակերտ-
ները դժվարանում են որոշել՝ որ բանաձև է
պետք օգտագործել խնդիրների լուծման ժա-
մանակ, չեն կարողանում աշխատել տարբեր
համակարգերում տրված չափման միավորնե-
րի հետ, կառուցել գրաֆիկներ: Որոշ ուսուցիչ-
ներ ավելի շատ մատուցում են դասագրքային
նյութը, քան խորանում երևույթների, կառու-
ցությունների, օրենքների բուն էության, ֆիզի-
կական իմաստի բացատրության մեջ: Իրա-
կանում չի գործում ուսուցիչ ինքնակրթության
համակարգը:

Ուսուցիչների մի մասն ունի ոչ ճիշտ ձևով
կազմած թեմատիկ պլան, դասերին ներկայա-
նում են առանց օրվա դասերի պլան-սեղմագ-
րի, իսկ մյուս մասի գրած պլան-սեղմագիրը
կրում է ձևական բնույթ:

Ոչ մասնագետներ են դասավանդում մի
շարք դպրոցներում:

Կան ուսուցիչներ, որոնք, ունենալով ոչ
մասնագիտական կրթություն, դասավանդման
գործընթացում հասնում են որոշակի հաջո-
ղությունների, քանի որ մշտապես զբաղվում
են իրենց մասնագիտական ու մեթոդական
պատրաստվածությամբ: Նրանք թվում են
Գ.Գաբրիելյանը /Շոշի միջնակարգ դպրոց/,
Մ.Գրիգորյանը, Է.Հայրապետյանը /Կաղարծու
միջնակարգ դպրոց/:

Ուրախալի է այն փաստը, որ երիտասարդ
մասնագետ Գ.Առստամյանը /Նոր Այգեստանի
միջնակարգ դպրոց/, չունենալով դասավանդ-
ման անհրաժեշտ փորձ, ունի ձգտում և մշ-
տապես կատարելագործվելով՝ կարող է դառ-
նալ լավ մասնագետ:

Ցածր մակարդակի վրա է առարկայի դր-
վածքը Շահմասուրի հիմնական, Ջազիկի, Կի-
զանի, Կոճողոտի, Այգեստանի, Ալեքսանդրի,
Կարմիր Շուկայի, Կարմիր գյուղի միջնակարգ
դպրոցներում: Մի շարք դպրոցներում, օգտա-
գործելով ընծեռված հնարավորությունները,
տվել ենք նաև ցուցադրական դասեր:

Լաված բոլոր դասերը քննարկվել են ուսու-
ցիչների ու մեթոդիկավորման նախագահների
կամ տնօրենության անդամների հետ: Տրվել
են բազմաթիվ առաջարկություններ ու հանձ-

նարարականներ՝ ուղղված առարկայի դասա-
վանդման դրվածքի բարելավմանը, ինչը, ցա-
վոր, գտնվում է ցածր մակարդակի վրա:

Ս. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ԿՊ ԳԻՏԱԿԱՆԱԿԱՆ ԱՎԵՐ Ն.ԳՐԻԳՈՐՅԱՆ ԿՊՏ ԿԵՏԱԿ

ՔԻՄԻԱ, ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

2011-2012 ուսումնական տարվա ընթաց-
քում կրթության պետական տեսչության կող-
մից իրականացված պլանային ստուգումների
մաս է կազմել նաև քիմիայի և կենսաբանու-
թյան դասավանդման դրվածքի ստուգումը
համակողմանի տեսչավորման ենթարկված
համարյա բոլոր դպրոցներում:

Ստուգումների ընթացքում պարզվել է, որ
տվյալ դպրոցներում դասավանդում են մաս-
նագետ ուսուցիչներ, բացառությամբ Քաջա-
թաղի շրջանի Սուսի միջնակարգ դպրոցի:

Ուսուցիչներն առաջնորդվում են գործող
ծրագրով, ունեն համապատասխան թեմատիկ
պլանավորումներ, գրում են ամենօրյա պլան-
սեղմագիր, օգտվում են ուսումնաստանողակ
ծեռնարկներից, կատարում են թեստային ա-
ռաջարկանքներ, լուծում խնդիրներ, ինչպես
նաև հնարավոր լաբորատոր ու գործնական
առաջադրանքներ: Ուսուցիչների մեծամաս-
նությունը տիրապետում է տեղեկատվական
տեխնոլոգիաներին, դասապրոցեսում կատա-
րում են վիրտուալ փորձեր: Վիրտուալ միջա-
կայրում սովորողը ծանոթանում է լաբորա-
տոր փորձնական նյութերի և դրանց հատկու-
թյունների հետ, սովորողը սովորում է օգտա-
գործել լաբորատոր սարքավորումներն ու
գործիքները. նման աշխատանքները հաջող
են ստացվում մայրաքաղաքի դպրոցներում:
Շրջանների որոշ դպրոցներում (հիմնակա-
նում՝ Քաջաթաղի շրջանում) զգացվում է քի-
միա և կենսաբանություն առարկաների դա-
սագրքերի պակաս:

Կրթական բարեփոխումների ծրագրի պա-
հանջներն իրականացնելու նպատակով լա-
բորատոր սարքավորումներով, հայտանյութե-
րով ապահովված են մայրաքաղաքի դպրոց-
ները, մնացած դպրոցները դրա կարիքն ու-
նեն:

Դիդակտիկ նյութերով ապահովված դպ-
րոցների ուսուցիչները հնարավորություն ու-
նեն կատարելու առարկայական ծրագրով
անրագրված բոլոր լաբորատոր ու գործնա-
կան աշխատանքները, որը ժամանակի պա-
հանջ է:

Կաբինետային համակարգով աշխատում
են մայրաքաղաքի հ. 5, 7, 9 հիմնական, հ. 8, 11
ավագ դպրոցները:

Ասկերանի շրջանի Այգեստանի, Հաղորթի
շրջանի Ալեքսանդրի, Քաջաթաղի, Մարտու-
նու շրջանի Ճարտարի հ. 3 դպրոցներում, կա-
տարվում են միայն պարզագույն ցուցադրա-
կան փորձեր, նկատելի է քարշիչ պահարանի
բացակայությունը, որն անվտանգության
տեսնիկայի կանոնների կոպիտ խախտում է:
Որոշ դպրոցներում ծրագրով նախատեսված
գործնական աշխատանքները փոխարինվում
են փորձարարական խնդիրների լուծմամբ:
Ստուգված դպրոցներից առարկաների դասա-
վանդման վիճակը համեմատաբար բարձր է
մայրաքաղաքի հ. 5, 7 (ուսուցիչներ՝ Վ. Ավե-
տիսյան, Մ. Խաչատրյան, Լ. Շաքարյան, Լ.
Շահբազյան, Գ. Ջաքարյան), Մարտունու շր-
ջանի Թաղավարդի (ուսուցչուհի՝ Լ. Դանիել-
յան) Ճարտարի հ. 3 (ուսուցիչ՝ Լ. Հակոբյան),
Մարտակերտի շրջանի Նոր Սեյսուլանի (ու-
սուցիչ՝ Ա. Ոսկանյան), Շահումյանի շրջանի
Ալեքսանդրի (ուսուցչուհի՝ Ս. Սարգսյան),
դպրոցներում: Նշված դպրոցների ուսուցիչ-
ներն աշխատում են բարեխղճորեն, տիրա-
պետում են առարկաների դասավանդման մե-
թոդներին, կազմակերպում են ժամանակա-
կից դասեր, սակայն ցավալի է, որ այդ դպրոց-
ների սովորողները հաջողություններ չունեն
առարկայական օլիմպիադաներում:

Որոշ դպրոցներում դպրոցական պարտա-
դիր ժամաբանակից մեկ ժամ հատկացված է
քիմիա առարկային 7-րդ դասարանում, որը
կարևոր է, քանի որ ուսումնական պլանով նա-
խատեսված ժամաբանակից չի հերիքում

ծրագրի պահանջի իրականացման համար:

Սովորողների գիտելիքների մակարդակը
համեմատաբար ցածր է Քաջաթաղի շրջանի
Սուսի, Մարտունու շրջանի Թաղավարդ-Կալե-
րի, Կարմիր Շուկայի, Ասկերանի շրջանի Շոշի,
Կարմիր գյուղի, Մարտակերտի շրջանի Չլդ-
րանի, Ծնակահողի դպրոցներում:

Նշված դպրոցների ուսուցիչներն անելիք-
ներ շատ ունեն, նրանք լրացուցիչ աշխա-
տանք պետք է տանեն հաջողության հասնելու
համար:

Սկանակ ուսուցիչներ են աշխատում մար-
տակերտի շրջանի Չլդրանի, Նոր Այգեստանի,
Ծնակահողի, Մարտունու շրջանի Ճարտարի
հ. 2, Ասկերանի շրջանի Կարմիր գյուղի, Լեռ-
նավանի, Հաղորթի շրջանի Ալեքսանդրի դպ-
րոցներում: Նրանք շատ պետք է զբաղվեն
ինքնակրթությամբ, զարգացնեն իրենց մեթո-
դամանակավարժական պատրաստակաճու-
թյունը՝ ժամանակակից դասին ներկայացվող
պահանջներն իրականացնելու և շոշափելի
արդյունքների հասնելու համար:

Թեմատիկ ստուգումներ ենք անցկացրել
Ստեփանակերտի հ. 8, 11 ավագ, հ. 9 հիմնա-
կան, Շուշիի Մուրացանի անվան դպրոցնե-
րում:

Հետաքրքիր, ժամանակակից դասեր են
կազմակերպում ուսուցիչներ Մանուշ Շահբա-
զյանը (հ. 8, քիմիա), Գեղամուշ Գյազունցը (հ.
11, կենսաբանություն): Նրանց աշակերտները
մասնակցել են դպրոցականների օլիմպիա-
դայի մարզային փուլին: Հ. 11 դպրոցի մեկ ա-
շակերտուհի իրավունք է նվաճել մասնակցե-
լու Երևանում կայացած օլիմպիադայի հան-
րապետական փուլին՝ կենսաբանությունից և
արժանացել դիպլոմի:

Տեսչավորված դպրոցներում քիմիա և կեն-
սաբանություն առարկաների դասավանդման
դրվածքը գնահատվում է բավարար, սակայն
մտահոգության առիթ է հանդիսանում սովոր-
ողների գիտելիքների որակի ոչ բարձր մա-
կարդակը, հարց, որի շուրջ ուշադրություն
պետք է դարձնել դասավանդող բոլոր ուսու-
ցիչները և գալիք ուսումնական տարում աշ-
խատեն նորոշի:

Լ. ՍԱՐԳՅԱՆ ԿՊՏ ԿԵՏԱԿ

ԱՆԽԱՆԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կատարելով ԼԳՀ ԿԳ նախարարի հրա-
մանները՝ 2011-2012 ուսումնական տարում
ստուգվել է աշխարհագրություն առարկայի
դասավանդման դրվածքը ԼԳՀ 29 հանրակր-
թական դպրոցներում՝ Այգեստանի, Նոր Սեյ-
սուլանի, Կիչանի, Չլդրանի, Ներքին Հռոտա-
թաղի, Կոճողոտի, Նոր Այգեստանի, Նոր Սեյ-
սուլանի, Ծնակահողի, Շահմասուրի, Հաղոր-
թի շրջանի Քուրաթաղի, Ալեքսանդրի, Շահու-
մյանի շրջանի Ալեքսանդրի, Քաջաթաղի շր-
ջանի Աղավնոյի, Կուրայի դպրոցներում:
Բացի դրանից՝ 2012թ. ապրիլին ուսումնա-
սիրվել է առարկայի դասավանդման դրվածքը
Ստեփանակերտի հ. 8, 11 և Շուշիի Մուրացա-
նի անվան ավագ դպրոցներում: Նշյալ դպրոց-
ների աշխարհագրության ուսուցիչներն ա-
ռաջնորդվում են կազմված թեմատիկ պլան-
ներով, գործող դասագրքերով և ուսումնաօ-
ժանդակ ծեռնարկներով, դասերին ներկայա-
նում են օրվա դասի պլան-կոմպլեկտներով:
Դպրոցական բաղադրիչ ժամաբանակից աշ-
խարհագրությանը հատկացվել էր 8 դպրոցնե-
րում (Շահումյանի շրջանի Ալեքսանդրի, Մար-
տակերտի շրջանի Ջազիկ, Չլդրան, Ներքին
Հռոտաթաղ, Կոճողոտ, Ասկերանի շրջանի
Այգեստան, Հաղորթի շրջանի Քուրաթաղ,
Մարտունու շրջանի Ճարտարի հ. 2): Աշխար-
հագրության խմբակ գործում է 8 դպրոցներում
(Մարտակերտի շրջանի Ներքին Հռոտաթաղ,
Կոճողոտ, Ասկերանի շրջանի Կարմիր գյուղ,
Շոշ, Այգեստան, Մարտակերտի շրջանի Շահ-
մասուր, Մարտունու շրջանի Թաղավարդ,
Հաղորթի շրջանի Ալեքսանդրի): Ստուգումնե-
րը ցույց են տվել, որ 2012թ. մարտի 17-27-ը

ՏԵՍՉԱԿԱՆ

ՀՀ ԿԱԻ Ստեփանակերտի մասնաճյուղի կազմակերպած վերապատրաստման դասընթացներին մասնակցել են աշխարհագրության 11 ուսուցիչներ: Տեսչավորված 29 դպրոցների 39 աշխարհագրության ուսուցիչներից սկսնակ են (1-3 տարի) 9-ը, 3-15 տարվա փորձ ունեն 20-ը, 15-ից ավելի՝ 10-ը: Կաթինետային համակարգ գործում է 10 դպրոցներում (Ստեփանակերտի հ. 9, Մարտակերտի շրջանի Չլղրանի, Մարտունու շրջանի Թաղավարդ-Կալերի, Կաղարծու, Կարմիր Շուկայի, Ասկերանի շրջանի Շոշի, Այգեստանի, Կարմիր գյուղի, Շահունյանի շրջանի Ականաբերդի, Հարդուի շրջանի Ակնադրյուրի): Համեմատաբար լավ են կախվորված Ասկերանի շրջանի Շոշի, Այգեստանի, Մարտակերտի շրջանի Չլղրանի, Մարտունու շրջանի Կաղարծու և Շահունյանի շրջանի Ականաբերդի դպրոցների կաթինետները:

Նշյալ 39 ուսուցիչներից 27-ը ունեն բարձրագույն մասնագիտական կրթություն, իսկ 12-ը՝ բարձրագույն ոչ մասնագիտական կրթություն: Ոչ մասնագետներ են աշխատում Քաջաթաղի շրջանի Աղավնոյի, Կունայրիի, Մարտունու շրջանի Կաղարծու, Ճարտարի հ.2, Մարտակերտի շրջանի Նոր Այգեստանի, Ասկերանի շրջանի Շոշի, Հարդուի շրջանի Քուրաթաղի դպրոցներում: Կան ուսուցիչներ, որոնք ունենալով ոչ մասնագիտական կրթություն և երկար տարիներ դասավանդելով աշխարհագրություն առարկան, մշտապես զբաղվում են իրենց մասնագիտական ու մեթոդական պատրաստվածությամբ և դասավանդման գործընթացում հասնում են որոշակի հաջողությունների: Նրանց թվում են՝ Արման Պողոսյանը (Հարդուի շրջանի Քուրաթաղի դպրոց), Գրիգորի Վերյանը (Ասկերանի շրջանի Շոշի դպրոց), Սիլվա Մանասյանը (Մարտունու շրջանի Ճարտարի հ. 2 դպրոց), Անժելա Բաբայանը (Մարտունու շրջանի Կաղարծու դպրոց): Կատարված դասալուսմանը պարզ դարձավ, որ աշխարհագրության մի շարք ուսուցիչներ տիրապետում են առարկային և նրա դասավանդման մեթոդներին, դասերին կիրառում են հարցման ու գնահատման տարրեր մեթոդներ, ապահովում են միջառարկայական կապը, նոր դասը հաղորդում են մասշտիբ, մեծ ուշադրություն են դարձնում քարտեզների օգտագործմանն ու յուրացմանը: Հետաքրքիր դասեր են անցկացրել հետևյալ մասնագետները՝ Վերյան Ավագիմյանը (Ստեփանակերտի հ. 5 դպրոց), Ալինա Բեգլարյանը (Ստեփանակերտի հ. 7 դպրոց), Սելանյա Սարգսյանը (Ասկերանի հոսքային դպրոց), Անժելա Բաբայանը (Մարտունու շրջանի Կաղարծու դպրոց), Մարինե Պողոսյանը (Մարտակերտի շրջանի Նոր Սեյսուկանի դպրոց), Նուրվարդ Մուսաբեկյանը (Մարտունու շրջանի Թաղավարդի դպրոց), Նուրեն Նալբանդյանը (Մարտակերտի շրջանի Ներքին Հոռաթաղի դպրոց): Մասնավորապես, արժե նշել Ասկերանի դպրոցի աշխարհագրության դասավանդման դրվածքի մասին, որտեղ աշակերտները ցուցաբերեցին ծրագրային նյութի բավարար մակարդակ, ունեն քարտեզագրական գիտելիքներ: Իսկ աշխարհագրության ուսուցիչ Սելանյա Սարգսյանը սովորողների կրթադաստիարակչական աշխատանքում ունեցած հաջողությունների համար վերջին տարիներին պարգևատրվել է Ասկերանի շրջարկաչափի և ԼՂՀ ԿԳ նախարարության պատվոգրերով և դրամական պարգևներով:

Ուրախալի է այն փաստը, որ կան երիտասարդ մասնագետներ, որոնք չունեն դասավանդման անհրաժեշտ փորձ, բայց ունեն ձգտում և մշտապես կատարելագործվելով՝ կարող են դառնալ լավ մասնագետներ: Նրանց թվում են Մարինե Ավագյանը (Ասկերանի շրջանի Լեռնավանի դպրոց), Քրիստինե Ալավերդյանը (Մարտակերտի շրջանի Շմակահողի դպրոց), Քրիստինե Բալայանը (Մարտակերտի շրջանի Շահմասուրի դպրոց): Ցավալի է, որ կան ուսուցիչներ, ովքեր չեն զբաղվում ինքնակրթությամբ, դասերին քիչ են օգտագործում քարտեզները, թույլ է աշակերտների գիտելիքների մակարդակը աշխարհագրությունից, ուսուցիչների նշանակած գնահատականները չեն համապատասխանում նրանց ունեցած փաստացի գիտելիքներին: Այսպես օրինակ, ելենա Թանայանը (Քաջաթաղի շրջանի Աղավնոյի դպրոց), Գարեգին

Ղազարյանը, Սևակ Համբարձումյանը (Քաջաթաղի շրջանի Կունայրիի դպրոց), Արմինե Գրիգորյանը (Ասկերանի շրջանի Խանցքի դպրոց): Նշված դպրոցներում աշխարհագրության դասավանդման դրվածքը գտնվում է ցածր մակարդակի վրա:

Բոլոր դպրոցներում տեսչավորման ընթացքում ցույց են տրվել մեթոդական օգնություն ու ցուցումներ: Ելնելով ստուգման արդյունքներից՝ աշխարհագրության դասավանդման դրվածքը հանրապետությունում կարելի է համարել բավարար:

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԿՊՏ ԳԵՏԱԿ

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ

2011-2012 ուսումնական տարում կրթության պետական տեսչության հանձնաժողովների կազմում հանրապետության տարածքում գործող 33 հանրակրթական դպրոցներում/Ստեփանակերտի հ. 5, 7, 9, 8, 11, Ասկերանի շրջանի Ասկերանի, Այգեստանի, Պատարայի, Կարմիր գյուղի, Շոշի, Լեռնավանի, Մարտունու շրջանի Ճարտարի հ. 2, 3, Կարմիր Շուկայի, Կաղարծու, Թաղավարդի, Թաղավարդ-Կալերի, Քաջաթաղի շրջանի Աղավնոյի, Մուսի, Կունայրիի, Մարտակերտի շրջանի Չլղրանի, Շմակահողի, Կիչան-Ղազանջիի, Կոճողոտի, Ներքին Հոռաթաղի, Նոր Սեյսուկանի, Նոր Այգեստանի, Շահմասուրի, Չափլիկի, Հարդուի շրջանի, Ակնադրյուրի, Քուրաթաղի, Շահունյանի շրջանի Ականաբերդի, Շուշիի ավագ/ իրականացվել է ինֆորմատիկայի դասավանդման դրվածքի ստուգումը:

Ամփոփելով առարկայի դասավանդման դրվածքի ստուգումները տեսչավորված հանրակրթական դպրոցներում՝ կարելի է եզրակացնել, որ նշված դպրոցներում այդ ամիսաժեշտ և ժամանակակից առարկան դասավանդող ուսուցիչների մեծամասնությունը ոչ մասնագետներ են /22-ը կան մասնագիտական ցածր պատրաստվածություն ունեցող ուսուցիչներ, հիմնականում ավարտել են կարճաժամկետ համակարգչային դասընթացներ, լիարժեք չեն տիրապետում ուսումնական ծրագրով նախատեսված բոլոր համակարգչային ծրագրերին, դժվարանում են ինքնուրույն ուսումնասիրել դրանք, կարիք ունեն վերապատրաստման: Ոչ բոլոր ուսուցիչներն են բարեխղճորեն ուսումնասիրում ուստարված մեթոդական ցուցումները, ինչի պատճառով կան ծրագրերի խախտումներ /որոշ դպրոցներում 6-րդ դասարանում շարունակել են առարկան ուսումնասիրել հին դասագրքերով, 11-րդ դասարանի բնագիտամաթեմատիկական հոսքում՝ ընդհանուր և հումանիտար հոսքի համար նախատեսված դասագրքով/, չեն պահպանվել թեմատիկ, գործնական աշխատանքների նվազագույն քանակները:

Թույլ է ինֆորմատիկա առարկայի ուսուցիչների համագործակցությունը, հատկապես շրջաններում, գրեթե չեն կատարվում փոխադարձ դասալուսման, ընդօրինակման տիպի դասեր, չեն կազմակերպվում արտադասարանական միջոցառումներ: Ստուգված դպրոցներից միայն Հարդուի շրջանի Քուրաթաղի հիմնական դպրոցի ուսուցչուհի Արմինե Հասանյանն է /սկսնակ, խոստումնալից ուսուցչուհի/ առարկայից կազմակերպել արտադասարանական միջոցառում՝ վիկտորինա, ինչը խրախուսելի է:

Ստուգված դպրոցների մեծամասնությունում, հաշվի առնելով, որ դասավանդող ուսուցիչը ոչ մասնագետ է, առարկայի դասավանդման դրվածքը՝ առկա թերություններով ու բացթողումներով հանդերձ, համարվել է բավարար: Ցածր է դասավանդման դրվածքը Մարտակերտի շրջանի Կիչան-Ղազանջիի, Ներքին Հոռաթաղի և Չափլիկի միջնակարգ դպրոցներում, որտեղ աշակերտների տեսական գիտելիքները և համակարգչային հմտությունները չեն բավարարում նրանց ներկայացվող նվազագույն պահանջները:

Միաժամանակ հարկ է նշել, որ կան նաև բանիմաց, աշխատասեր ուսուցիչներ, որոնք մշտապես զբաղվում են ինքնակրթությամբ, տիրապետում են առարկային ու նրա դասավանդման ժամանակակից մեթոդներին, կիրա-

ռում են տեղեկատվական տեխնոլոգիաների հնարավորությունները, կարողանում են կազմակերպել հետաքրքիր ու մատչելի դասեր, լիարժեք հասնել դասի նպատակին: Համեմատաբար բարվոք է առարկայի դասավանդման դրվածքը Ստեփանակերտի հ. 5, հ. 9 հիմնական /Մարինե Համբարձումյան/, հ. 11 ավագ /Լիլյա Գևորգյան/, Ասկերանի շրջանի Այգեստանի միջնակարգ /Անահիտ Շունայան/ դպրոցներում: Խրախուսելի է, որ նշված դպրոցների ուսուցիչները չեն բավարարվում դասագրքի գործնական աշխատանքներով, կազմակերպում են հետաքրքիր գործնական աշխատանքներ՝ ապահովելով նաև դաստիարակչական կողմը:

Հարկ է նշել նաև, որ ոչ բոլոր դպրոցներն ունեն ծրագրի իրականացման համար անհրաժեշտ տեխնիկական ապահովում՝ համակարգչային կաթինետ՝ ժամանակակից համակարգիչներով, որտեղ նաև ապահովվում են անվտանգության և առողջության պահպանման նորմերը, ինչը լրացուցիչ դժվարություններ է ստեղծում ուսուցման ժամանակ և թույլ չի տալիս լիարժեք կատարել ծրագրով նախատեսված բոլոր լաբորատոր ու գործնական աշխատանքները, բավարար չափով զարգացնել աշակերտների համակարգչային հմտությունները: Իսկ եղած համակարգչային կաթինետները ոչ միշտ են նպատակային ու լիարժեք օգտագործվում: Այնինչ, ժամանակակից դպրոցներում համակարգիչները պետք է օգտագործվեն որպես դասագործընթացի բաղկացուցիչ մաս ոչ միայն ինֆորմատիկա առարկայի դասավանդման ժամանակ, այլև մյուս առարկաներն ուսուցանելիս՝ ուսումնական նյութը գրավիչ և մատչելի դարձնելու համար: Այդպիսի դասեր դեռևս քիչ են անցկացվում, հատկապես շրջաններում: Դպրոցներում օպերատորի հաստիքը հիմնականում զբաղեցնում են ոչ մասնագետներ, որոնք չեն կարողանում կատարել համակարգիչների պարզագույն տեխնիկական և ծրագրային սպասարկման աշխատանքները, իսկ շատ սակավակազմ դպրոցներում գործակալի հաստիք չլինելու պատճառով օպերատորներն իրենց հիմնական աշխատանքի փոխարեն կատարում են գործակալի պարտականությունները: Հարկ է առանձնացնել Մարտունու շրջանի Ճարտարի հ. 2 հիմնական դպրոցի օպերատոր Գևորգ Թովմասյանի աշխատանքը: Նա բարեխղճորեն և պատշաճ կերպով կատարում է իր պարտականությունները:

Առարկայի հաջողությունները կախված են դասավանդող ուսուցչի հմտություններից ու նրա պատրաստվածության աստիճանից: Ուրեմն՝ ուսուցիչը պետք է մշտապես զբաղվի ինքնակրթությամբ, որպեսզի տեղյակ լինի տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների զարգացման ընթացքին:

Ք. ԻՍՐԱԵՆՅԱՆ ԿՊՏ ԳԵՏԱԿ

ԵՐԱՇՏՈՒԹՅՈՒՆ

Երաժշտություն առարկան հանրակրթական դպրոցում դիտվում է որպես արվեստի դասավանդման միջոց, որի հիմքում ազգային և համամարդկային երաժշտությունն է: Այն կրթության և դաստիարակության բնագավառի կարևոր բաղադրամասերից մեկն է: Մեծ է նաև երաժշտության ճանաչողական նշանակությունը սովորողների աշխարհայացքային և արժեքային կողմնորոշումների ձևավորման գործում: Երաժշտության դասն արվեստի դաս է: Այն կրում է համալիր բնույթ: Անհրաժեշտ է, որ աշակերտները մեկ ժամի ընթացքում ունենան, երգեն, կատարեն երաժշտամիջին շարժումներ, նվագեն և այլն: Դասավանդման ընթացքում ուսուցիչները պետք է ուշադրություն դարձնեն ոչ միայն աշակերտների կողմից երաժշտական գիտելիքների յուրացմանը, այլև նրանց երաժշտական ունակությունների, կարողությունների, երևակայության զարգացմանը, անհատի ստեղծագործական շնորհների բացահայտմանը:

2011-2012 ուսումնական տարում կրթության և գիտության նախարարության տեսչական աշխատանքային պլանի համաձայն, 26 հանրակրթական դպրոցներում տեսչավորվել

է երաժշտություն առարկայի դասավանդման դրվածքը:

Ամփոփելով արդյունքները՝ կարելի է ասել, որ այն ամբողջությամբ մեջ հեռու է բավարար լինելուց, չնայած նախորդ ուսումնական տարվա համեմատությամբ կա դրական տեղաշարժ: Բոլոր դպրոցների 2-5-րդ դասարանների աշակերտները հիմնականում բավարարված են դասագրքերով: Ուսուցիչները ձեռքի տակ ունեն աշակերտների երաժշտական դաստիարակության ուսումնամեթոդական համալիրին ներկայացվող պահանջները բավարարող նյութեր, սակայն ոչ միշտ են կազմում օրվա պլան-սեղմագրերը, ինչն իր բացասական ներգործությունն է ունենում ուսումնադաստիարակչական գործընթացի լիարժեք կազմակերպման վրա:

Ստուգումների արդյունքներն ի ցույց են ածում, որ, ընդհանուր առմամբ, բավարար է որակվում Ստեփանակերտի տեսչավորված հանրակրթական դպրոցներում երաժշտություն առարկայի դասավանդման դրվածքը: Թերևս դրա վառ ապացույցն է Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի կրթության բաժնի կողմից կազմակերպված Փետրվարի 20-ի՝ Արցախյան շարժման 20-ամյակին նվիրված հայրենասիրական երգերի մրցույթ-փառատոնը, որտեղ իրենց անմիջական մասնակցությունն են բերել հանրակրթական դպրոցների երաժշտության ուսուցիչները:

Բոլորովին այլ նկարագիր ունի երաժշտություն առարկայի դասավանդման դրվածքը շրջանների դպրոցներում: Սակայն կան ուսուցիչներ, որոնք ձգտում են որակական բարձր ցուցանիշներ ապահովել առարկայի դասավանդման գործընթացում: Հարկ է առանձնացնել Մարտակերտի շրջանի Նոր Այգեստանի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Ալվարդ Ավթանդիլյանի, Ասկերանի շրջանի Այգեստանի միջնակարգ դպրոցի ուսուցիչ Արթուր Պետրոսյանի, Շոշի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Անահիտ Սաֆարյանի և Ճարտարի հ. 3 հիմնական դպրոցի ուսուցչուհի Էլմիրա Պողոսյանի անունները:

Ցավոք, կան տնօրեններ և ուսուցիչներ, որոնք երաժշտություն առարկան շարունակում են դիտել որպես ուսումնական ծանրաբեռնվածությունը լրացնելու միջոց: Ավելին, մի շարք տնօրենների կողմից չէր արձանագրվել առարկայի և ոչ մի դասալուսման: Օրինակ, Ճարտարի հ. 2 հիմնական դպրոցը, որտեղ տնօրենության կողմից երաժշտություն առարկայի նկատմամբ վերաբերմունքը կարելի է որակել որպես բարձիթողի:

Առկա են նաև այլ ցավոտ այնպիսի խնդիրներ, որոնք նույնպես թողնում են իրենց բացասական հետքը առարկայի դասավանդման որակի բարձրացման վրա: Այն դպրոցներում, որոնք տեսչավորվել են, և առարկայի դասավանդման դրվածքը չի գնահատվել անբավարար, և որտեղ արդեն առարկայի դասավանդման համար ցույց է տրվել մեթոդական օգնություն, չպետք է համապատասխան ժամաքանակը մտցնել այլ դասավանդողի ծանրաբեռնվածության մեջ: Այսինքն, այս կամ այն չափով արդեն իրագրված ուսուցիչը չպետք է վերցնել երաժշտություն առարկայի դասավանդման ժամաքանակը: Այս խնդիրը պետք է առնվի շրջարկաչափային կրթության բաժնի վարիչների անմիջական հսկողության ներքո:

Ուրախալի է, որ որոշ դպրոցներում ուսուցիչները սեփական նախաձեռնությամբ ձեռնամուխ են լինում երաժշտության կաթինետի ձևավորմանը և զբաղվում են ինքնակրթությամբ:

Երաժշտության դասավանդումը աշակերտների ստեղծագործական մտածողության ձևավորման և գեղագիտական դաստիարակության առաջնություն բաղադրիչն է, ուստի ամենայն լրջությամբ պետք է վերաբերվել առարկայի դասավանդմանը՝ հանրակրթության կրթակարգի ամրագրված չափորոշիչներին համապատասխան:

Ռուգա ՎԵՐԳՅԱՆ ԿՊՏ ԳԵՏԱԿ

ՀԱՅԿԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԼԵՁՎԻ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՃԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հաշվետու ժամանակահատվածում լեզվի տեսչության կողմից վերահսկողական գործառնություններ և միջոցառումներ են իրականացվել լեզվական քաղաքականության բնագավառում: Իրականացվել են Տեսչության 2012թ. առաջին կիսամյակի համար նախատեսված պլանային բոլոր կետերը:

Կազմակերպվել են շրջայցեր Ստեփանակերտում և շրջաններում՝ գովազդները, վահանակները և ցուցանակները հայերենով ձևավորելու գործընթացի վերահսկման նպատակով: Անհրաժեշտության դեպքում տրվել են համապատասխան հանձնարարագրեր:

Վերահսկվել է մամուլը («Արհմիություններ», «Լուսարար»), հեռուստատեսության և ռադիոընկերությունների հաղորդումները՝ լեզվական քաղաքականության պետական ծրագրի պահանջների կատարման առումով:

Կազմակերպվել և անց է կացվել Մայրենիի միջազգային օրվան նվիրված հանդիսավոր միջոցառում: Համարայետուքային դպրոցներում հայտարարվել է միջոցառումների միանյակ: Լավագույն միջոցառում կազմակերպած ուսուցիչները պարգևատրվել են նախարարության պատվոգրերով ու նվերներով:

ԼԳՂ պետական մարմիններում, ձեռնարկություններում ու կազմակերպություններում գործավարությունը հայերենով վարելու պահանջները:

հանցի իրականացման վերահսկման նպատակով կազմակերպվել են ստուգայցեր:

1. ԼԳՂ արհեստակցական միությունների ֆեդերացիա (հունվար).
2. ԼԳՂ «Ռուսական համայնք» ՀԿ (հունվար).
3. ԼԳՂ գյուղի և գյուղատնտեսության արհեստագործության հիմնադրամ (մարտ).
4. Արցախի ներդրումային հիմնադրամ (ապրիլ).
5. ԼԳՂ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողով (մայիս).
6. ԼԳՂ ԿԱ ազգային վիճակագրական ծառայություն (մայիս).
7. ԼԳՂ «Պետական արխիվ» ՊՈԱԿ (հունիս).
8. ԼԳՂ ԿԱ զբոսաշրջության վարչություն (հունիս).
9. Մարտունու շրջանի Գյունե ճարտարի գյուղատնտեսարան (մարտ).
10. Մարտունու շրջանի Բերդաշենի գյուղատնտեսարան (ապրիլ):

Ստուգումները ցույց են տվել, որ պետական մարմիններում ու կազմակերպություններում գործավարությունը հիմնականում կատարվում է գրական հայերենով, պահպանվում են «Լեզվի մասին» ԼԳՂ օրենքի պահանջները:

Նկատված մասնակի քերականական բերությունների մասին մեր կողմից տրվել են համապատասխան անփոփառագրեր՝ հետագայում նմանատիպ բերություններից խուսափելու համար:

Կրթական համակարգում դասավանդում են ու դաստիարակությունը գրական հայերենով վարելու՝ «Լեզվի մասին» ԼԳՂ օրենքի պահանջների կատարման վերահսկման նպատակով կազմակերպվել են ստուգայցեր:

1. Մարտունու շրջանի ճարտարի հ. 1 միջնակարգ դպրոց.
2. Մարտունու շրջանի Բերդաշենի միջնակարգ դպրոց:

Հայերենին չտիրապետող անձանց համար կազմակերպվել և անց են կացվել «Հայերենը ոչ հայախոսների համար» դասընթացներ՝ երկու մասնախմբերով:

ա) հայերենին բուլղոզի չտիրապետողների, բ) հայերենին որոշ չափով տիրապետողների:

Գործել է հեռախոսային «Թեժ գիծ»: Կատարվել են քաղաքացիների ընդունելություններ: Տրվել են անհրաժեշտ մեթոդական խորհուրդներ գովազդների, վահանակների, ազդեցիկ լեզվի, տեղադրման կարգի մասին:

Ձեռք են բերվել մասնագիտական բառա-

րաններ և դասագրքեր:

Շարունակվել է համագործակցությունը ՀՀ լեզվի պետական տեսչության հետ:

Տեսչության պետը, որպես հանձնաժողովի անդամ, մասնակցել է.

ա) «Լավագույն ասունքող» մրցույթի քաղաքային փուլին,

բ) Պարույր Սևակին նվիրված հանդիսավոր միջոցառմանը Ստեփանակերտի հ. 1 հիմնական դպրոցում,

գ) Արցախի պետական համալսարանի հայ բանասիրության և լրագրության ֆակուլտետի առկա և հեռակա բաժինների ավարտական պետական քննություններին և մագիստրոսների մագիստրոսական թեզի պաշտպանությանը:

Գործնական օգնություն է ցույց տրվել ԳԹԿ-ին՝ հանրապետության դպրոցներում պետական ավարտական քննությունների կազմակերպման գործում:

Կազմվել է տեսչության 2013-2015թթ. միջնաժամկետ ծրագիրը, կատարվել են համապատասխան հաշվարկներ:

Կատարվել են նախարարի, փոխնախարարի, աշխատակազմի ղեկավարի կողմից տրված ընթացիկ հանձնարարությունները:

Շ. ՀԱՎՈՐՅԱԼ
Լեզվի տեսչության պետ

ԽՈՒՄԱՓԵՆՔ ԲԱՌԵՐԻ ՄԻՍԱԼ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԻՆ

Շատ մարդիկ (այդ թվում նաև՝ ուսուցիչներ, մտավորականներ) գրավոր ու բանավոր խոսքում սխալ են գործածում առանձին գոյականներ, կապեր, դերանուններ, շաղկապներ և այլն:

Ուզում են փոքր-ինչ հանգամանորեն խոսել դրանցից մի քանիսի մասին:

Ես վաղուց նկատել եմ, որ մեզանում «նվաճողական» մեծ ձգտում է դրսևորում ՊՏԵԼ բայը, որը գործածվում է կարծել, ենթադրել, մտածել, թվալ, խորհել, համարել, որոշել, վճռել, եզրակացնել, արձանագրել, հաստատել, պնդել, պարզել, հայտնաբերել, լինել բայերի փոխարեն:

Օրինակ. «Չե՞ք գտնում (կարծում, ենթադրում, մտածում), որ մարդկային հասարակության մեջ այս գործը մի քիչ այլ կերպ է դրված»: «Ումանք գտնում են (կարծում են, ումանք կարծիքով), թե Ֆրանսիայում ավելի շատ հայեր են ապրում, քան Ամերիկայում»:

Եվ այսպես, եթե մտքներումս դնենք, համարյա միշտ կարելի է գտնել այս բառի հայեցի փոխարինիչը: Մինչդեռ սա մենաշնորհ է հանդես բերում ոչ միայն ինքնուրույնաբար գործածելիս: Բազմաթիվ կապակցություններում էլ «նեղում է» լինել ու համարել բայերին՝ ստեղծելով հարադրական անհարազատ ձևեր:

Անկարող լինելը դառնում է անկարող գտնվել, անտարբեր լինելը՝ անտարբեր գտնվել, ներկա լինելը՝ ներկա գտնվել և այլն:

Այս տրամաբանությամբ հավանաբար կարելի է նաև բացակա գտնվել: Գրավոր խոսքից կարելի է մեջբերել բազմաթիվ օրինակներ, բայց դրա անհրաժեշտությունը չկա, քանի որ ամենօրյա խոսքում հնարավոր, անհնարին, գեղեցիկ, տգեղ, շատ, քիչ, մեծ, փոքր և այլն ոչ թե համարում ենք, այլ՝ գտնում: Արդարացի, անարդարացի, չար, բարի, մարդկային, տմարդի և այլն ոչ թե լինում ենք, այլ՝ գտնվում:---

Կարծում եմ, արժե մտածել, թե այսքան գտնել-ով մեր լեզուն գտնում է, թե՛ կորցնում:

«Գորհող» և «նահանջող» բառերի ցանկը հայերենում բայերով չի սահմանափակվում, բայց քանի որ առայժմ խոսք եղավ բայերի մասին, հիշենք մի քանիսը ևս:

ԱՆՏԵԼ բայի ճշման տակ հետզհետե ավելի վարանոտ են դառնում *գնալ, մտնել, այցելել, հաճախել, ներս գալ, ներս մտնել* և ուրիշ

բայեր: Բայց մի՞թե արգելվում է *ասել՝ ես անցա ընկերոջս մոտ*: Իհարկե, ոչ, եթե այցելությունը թուղիկ էր, կարճատև, սակայն մեք հաճախ, անկախ այդ հանգամանքից էլ, «անցնում ենք» մեր աշխատասեյակը, գրադարան, քաղաքապետարան, կինոսրահ և այլուր:

Պակաս չի աշխուժացել նաև ՏՄԵԼ բայը, որի հետևանքով տարվում են կան տանում են և աշխատանքը, և դերը, և պայքարը ու էլի ուրիշ շատ բաներ: «Հանձնաժողովը հարկավոր աշխատանք է տարել այդ բնագավառում»: Իսկ որևէ նպատակով աշխատանք տարվել չի՞ կարող, արդյոք: Կարող է, չէ՞ որ աշխատանքը նաև կատարվում է, և շատ ավելի լավ է *ասել՝ «Դարձրող աշխատանք է կատարում»*, քան՝ աշխատանք է տանում:

Վերը բերված գործածությունների մեջ և ընթերցողը կարող է դիտել թույլատրելի արտահայտություններ, թույլատրելի այնքանով, որքանով որ լայն տարածման պատճառով դրանք բավականաչափ հիմնովին մոծվել են լեզվի մեջ, իսկ մի քանիսը նույնիսկ տեղ են գտել նորագույն բառարաններում:

Ի դեպ, ոչ մի բառ այնքան անսխորժություն չի պատճառում մեր լեզվին, որքան՝ ընդամենը երեք հնչյունից ու երեք տառից կազմված ՄՈՏ-ը: Այո՛, շատ է խոսվել ու գրվել այս բառի անճիշտ ու անցանկալի գործածությունների մասին, բայց և այնպես, օրըստօրե ավելի ու ավելի է մեծանում սրա վնասակարության գործակիցը լեզվի մեջ: «Արդեն նոր մտքեր են ծագում Արամի մոտ»: Սա նշանակում է, որ մտքերը ծագում են Արամից դուրս, նրա կողքին: Բայց չէ՞ որ դա անկարելի է, քանի որ մտքերը ծնվում, ձևավորվում են մարդու ուղեղում, այսինքն՝ նրա ներսում, նրա մեջ: Եվ մի՞թե դա բացատրության կարիք ունի:

«Անահիտի մոտ բավարար է դաստիարակված սերը հայրենիքի նկատմամբ»: Դուրս է գալիս, որ հայրենասիրությունը մարդու մեջ չէ, այլ ինչ-որ տեղ, նրա մոտերքում: Եվ դարձյալ՝ «Երեխայի մոտ պետք է դաստիարակել կարգապահություն», «Պատրանքները վախկոտ մարդու մոտ են լինում»:

Չեխու՞ղ ասել է. «Մարդու ամեն ինչը գեղեցիկ պետք է լինի, իսկ մեզ հրամցնում են «Մարդու մոտ ամեն ինչ պետք է գեղեցիկ լինի»:

Սակավ չէ ՄՈՏ բառի գործածությունը ուրիշ բառերի փոխարեն ևս. «Դա գործը գեներ է քո մոտ» (փոխանակ՝ քեզ համար): «Չեր պատմվածքներն ու վիպակները միշտ էլ բարձր են զնահատվել ընթերցողների մոտ» (փոխանակ՝ կողմից):

Յուրատեսակ կտրակալ է դարձել «մոտ» կապը «բացահայտել» բայի հետ. «Նրանցից շատերի մոտ պատասխանատվությունը պարզապես բացակայում է»:

«Մոտ» կապի անհարկի կիրառությունն իր հետ բարձր է տալիս մեկ ուրիշ խորթ բառագործածություն՝ *կա(չ)կա* բայը՝ ունենալ բայի փոխարեն: «Ինձ մոտ մի վատ սովորություն կա»:

Այնքան շատ են այս բառի «զանցանքներն ու հանցանքները», որ դժվար է մտաբերել բոլորը: «Մոտամոլությունը» մի հիվանդություն է, որի արտահայտիչ ազդեցությունը ուղղված է առաջին հերթին լեզվի համակարգին: Ասում են՝ կաթիլը քար է ծալում: Ու թեև այս կաթիլն ի գորու չէ «ծակելու» մեր լեզուն, բայց և ամփափան է, որ համառ ու հարատև այսպիսի կաթոցից ինչ-որ չափով չեչտաճում, ծաղկատար է դառնում նրա սիրելի դեմքը.

«Մոտ»-ից հետո «ամենասիրված» ու վնասակար կապն է ՀԵՏ-ը: Որքա՛ն է ասվել, թե *ժանրանալ* (հաշտվել, համաձայնել) բայերը անձնանունների զուգորդությամբ կարող են ունենալ կապային խնդրառություն (*ժանրանալ իրար հետ, համաձայնել նրա հետ*), իսկ անշունչ առարկաների ու տարբեր երևույթների զուգորդությամբ նպատակահարմար է առանց կապի խնդրառությունը (*ժանրանալ՝ քաղաքին, աշխատանքին, համաձայնել՝ որոշմանը, կարծիքին*), մինչդեռ հազվադեպ է հաշվի առնվում այս տարբերակը (*ժանրանալով գյուղի հետ, առանց համաձայնելու որոշման հետ* և այլն):

Իսկ հեռուստատեսային ներկայացման հերոսներն իրար հետ խոսում են այսպես. «Ի՞նչ եղավ քեզ հետ, քեզ հետ արել են այն, ինչ որ ինձ հետ են արել...»:

Մի ուրիշ խնդիր:

Վերջին երկու տասնամյակում որոշակիորեն նահանջի ճանձնան է բռնել ՓՈՂՈՏ բառից ներգոյական հոլովածը՝ փողոցում, որին համառորեն փոխարինելու է գալիս *փողոցի վրա* կապակցությունը: Այլևս հազվադեպ կարելի է լսել, թե այսինչ կամ այ-

Մի՞թե նա պահանջ ուներ իր հարևանների նկատմամբ (փոխանակ՝ հարևաններից):

Պատերի փակցված նկարների վրա (փոխանակ՝ նկարներին):

Անշունչ, դժվար է որոշել մակաբույծ բառերի ու արտահայտությունների սահմանը, որովհետև ամեն ոք յուրովի կարող է համարել դրանց տեսականին և՛ խոսելիս, և՛ որ ավելի վատ է, գրելիս:

Եվ, վերջապես, մի հին սխալի մասին.

Ակնոցներ, շալվարներ, մկրատներ...

Եվ ասել, թե «ծերունին ժպտում է ակնոցների տակից, նշանակում է՝ նրա քթին մեկից ավելի ակնոց դնել: Մինչդեռ մեզանում ամեն քայլափոխի կարելի է լսել ու կարդալ՝ ակնոցներով վերցնող, ակնոցներս կորան, առանց ակնոցների չեմ կարողանում կարդալ. նոր ակնոցներ է գնել և այլն: Կան լեզուներ, որոնք չունեն *ակնոց, մկրատ, շալվար*, այլ ունեն միայն *ակնոցներ, մկրատներ, շալվարներ* (очки, очки, ботинки):

Հայոց լեզվին հատուկ չեն այս կարգի անեզական բառերը. հիշյալ բոլոր բառերն էլ ունեն իրենց եզակի ու հոգնակի ձևերը, որոնք համապատասխան գործածություն են պահանջում, և դա վերաբերում է նաև *ակնոց* բառին:

Մեր լեզվում մասնավոր նշանակությամբ են օգտագործվում նաև *արծակուրդ* և *եղանակ* բառերի հոգնակի ձևերը: «Հարությունը գնում է Գորիս՝ արծակուրդներն անցկացնելու»: Մարդը իր *արծակուրդն* է անցկացնում, ոչ թե՛ *արծակուրդները*: Դադիոյով և հեռուստատեսությամբ ամեն օր տրվում է *եղանակի տեսություն* և ոչ՝ *եղանակների*, թեև եղանակը նույնը չի լինում հանրապետության տարբեր շրջաններում:

Իսկ ժամանակ առ ժամանակ լսում ենք. «Եղանակները վատ են»: Սա խոցելի է և՛ հայերենում, և՛ ռուսերենում:

Յուրաքանչյուրը որևէ բառ արտաբերելուց կամ գրելուց առաջ պետք է մի պահ խորհի, մտածի՝ լա՞վ է, արդյոք, այն, թե վատ, չի՞ կարելի փոխարինել մեկ ուրիշ՝ ավելի հաջող բառով:

**Միքայել ԲԱԼՅԱՆ
Թոշակառու ուսուցիչ,
Գ. Մեծ Թաղեր**

ԽՈՍՔ

ՏԱՐԵՑ ՄԱՆԿԱՎԱՐԹԸ ՀԻՇՈՒՄ Ե

Այն, որ տարեց մանկավարժի, իր ուսուցչի հուշերի գիրքը խմբագրում, «Երկու խոսքի» մեջ գեղեցիկ կերպով արժևորում է նրա դերն ու նշանակությունը իր գիտնական աշակերտը, գրիչ բռնողիս համար մեծ խորհուրդ և իմաստ ունի: Խոսքը 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ Վլադիմիր Անտոնյանի «Գիշու դպրոցն իմ հուշերում» (ԱրՊՀ հրատարակչություն, Ստեփանակերտ, 2012) և պատմական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Վահրամ Բալայանի մասին է:

«Դարերի ընթացքում գիշեցին փայլել է ուսյալ սերունդ ունենալ-կարդում ենք «Երկու խոսքում»: Եվ իրական երազի իրագործման ճանապարհին գիշեցին չի խնայել միջոց, ուժ ու եռանդ: Հիշարժան այդ իրադարձությունների մասին է պատմում այս գիրքը: Հեղինակը՝ Վ. Անտոնյանը, մեր հանրապետության կրթության ասպարեզի երախտավորներից մեկը, դեպքերի մասնակցի և ակնմատեսի արժանապատվությամբ գեղեցիկ հուշապատումի ձևով ապագա սերունդներին է թողնում գիշեցու հայրենաշեն գործի դրվագները:

«Համառոտ տեղեկություններ Արցախի հնագույն բնակավայր Գիշի գյուղի մասին», «Գիշի գյուղում բացված առաջին դպրոցի համառոտ պատմությունը», «Գիշու միջնակարգ դպրոցի պատմությունն իմ հուշերում 1938-39 ուստարուց սկսած», «Գիշի գյուղը և դպրոցը Հայրենական մեծ պատերազմի օրերին և նրանից հետո», «Գիշու դպրոցի 80-ամյա հոբելյանի մասին», «Ներածականն ու «Վերջաբանի փոխարեն» բաժիններն են կազմում գրքի հենքն ու հյուսվածքը: Եվ այդ ամենը՝ ոսկեգեղեցիկ հայերենով, բանաստեղծական ներշնչանքով:

Վ. Անտոնյանը հայրենի գյուղի կրթության սանն է և շուրջ երեք տասնամյակ զվիպարել է նրա մանկավարժական կոլեկտիվի բեղմնավոր աշխատանքները: Նա ուշի ուշով թերթել է մագաղաթները, ակնաստեսն ու մասնակիցն է նոր, նորագույն իրադարձությունների՝ այդ ամենը շաղկապված հասարակական-քա-

ղաքական իրադարձությունների, հեղաբեկումների ու վայրիվերումների հետ:

Հեղինակը քաջ գիտե բառի նշանակությունը («Ամեն բառ մի աշխարհ է»,- Թունանյանն է պատգամել), սրտի կայծ, տրոփյուն կա նրա տողերում:

«Գիշի գյուղի մոտ, ճանապարհի եզրին, փոքրիկ բլրի վրա կանգնած էին նրանք՝ 184 խիզախ գիշեցիները, վերադարձել էին նրանք, ավա՜ղ, հուշարժան դարձած: Որդեկորույս մայրերի ողբը, հեծկտոցը, դեմ առնելով հանդիպակաց լեռներին, փշո՜ր-փշուր էր լինում՝ առաջացնելով ցավի և հպարտության արցունքի առուներ: Ձուկածների հիշատակին կանգնեցրած քարե հուշարձանը, ողբացող, միաժամանակ հպարտացող գիշեցիների արարմունքը հայրենասիրական անմոռաց մի դաս է մատաղ սերունդի համար: Հայրենասիրական սխրանքի այդ դասը սկիզբ առավ Հայկ Նահապետի սլացիկ նետի հետ, հինգերորդ դարի երկրորդ կեսին Ավարայր դաշտում, Տղմուտ գետի ափին,- գրում է հեղինակը և հավելում դրան Երևանի և Արևիկայի անվան մանկավարժական ինստիտուտի ուսանողի (1976-1980թթ.), այժմ Մարտունի քաղաքի թիվ 1 միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Հասմիկ Անտոնյանի՝ «Տասնիսուներորդի արցունքները» ազատ թեմայով շարադրությունը: Որ, իրավ, հնարավոր չէ կարդալ առանց հուզմունքի ու... արցունքների:

Տիայր Վլադիմիր Անտոնյան, շնորհակալություն ընթերցողի սեղանին նման գիրք դնելու համար, որ ես ճանաչում եմ բարոյական սխրանքի պես մի բան: Շարադրելով թո անմոռաց հուշերը՝ տողերիս հեղինակի առջև սեփական հուշերի դուռն ես կրնի վրա բացում: Կարդում եմ, ու դեմս համոզում եմ (սիրելի դեմքեր, որ հիմի չկան) Թևան, Հովհաննես և Մարգարա Ջավադյանները, Հրայր Աբալյանն ու Ռաֆայել Սահակյանը, Նիկոլայ Ավագունյանն ու Կառլեն Աբալյանը, Անդրեյ Հայրապետյանը, Հենրիկ Գրիգորյանը, որոնց հետ բազմիցս առնչություններ եմ ունեցել, շատ բան ուսանել նրանցից և հարգանքի ու երախտա-

գիտության զգացումով եմ լցված նրանց հիշատակի հանդեպ:

Ու այդ աստղաբույլի մեջ և պայծառ, շրջապատը ջերմացնող մի արև, Մեծն գիշեցի Արտեմ Բաբայանը: Երևանում ուսումնառության տարիներին (1957-62թթ.) նա դեկան էր հայկական պետական հեռակա մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետի և դասախոսը գրաբարի: Ընդմիջումներին շրջապատված ուսանող-ուսանողուհիներով, շուրթերին՝ բարբառը Ղարաբաղի: Մենք նրանից բույրեր էինք առնում. հողի բույր, գիտնականի բույր, մարդու բույր...

«1968թ., երբ պատրաստվում էինք տոնելու դպրոցի 80-ամյակը, ես նամակով խնդրեցի հարգարժան Արտեմ Բաբայանին՝ տեղեկություններ հաղորդել Գիշու դպրոցի մասին: Նա սիրով պատասխանեց: Արխիվային տվյալներ հաղորդելուց հետո նամակի վերջում ահա թե ինչ է գրում.

«1920-1921, 1921-1922, 1922-1923 ուստարիներին դպրոցի վարիչը ես եմ եղել, ուսուցիչները՝ Աշխեն Քամայանը և Մաշո Քամայանը: Բայց ստացած փողերը խառնում էինք, նորից հալալ ճոթ առնում: Իսկական հալալարյուն էր:

Բոլու բարևներ Ձեր կոլեկտիվին: Արտեմ Բաբայան, 17.02.1968թ. ք. Երևան»:


Եվ նման շատ ու շատ, սիրտ ու հոգի ազնվացնող տեղեկություններ, սրտաբաց գրույցներ, քնարական շեղումներ:

Ընթերցելով Վ. Անտոնյանի հիշյալ գիրքը և ունկնդիր մեր 60-ամյա անխաբ մտերմության ծայրին, գտնում եմ, որ կյանքի ինքնբերող տասնամյակն ապրող մարդն իրավունք ունի յուր հասցեին կրկնելու.

- Ապրածս տարիները իմ ծով հարստությունն են:

Նորայր ԱՎԵՏԻՍՅԱՆ
Թոշակառու մանկավարժ
գ. Հաղորդի

ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԱՆՏՈՆՅԱՆ



81-րդ տարում երկրային կյանքին հրաժեշտ տվեց Արցախի մտավորականության լավագույն ներկայացուցիչներից մեկը՝ Վլադիմիր Հարությունի Անտոնյանը, որի անունը մտել է հայ կրթական համակարգի պատմության մեջ որպես 20-րդ դարի լավագույն մանկավարժ, բազմապատասխան տնօրեն, ժամանակի ակտիվ հասարակական գործիչ, «Գիշու դպրոցը իմ հուշերում» գրքի, բազմաթիվ հոդվածների հեղինակ:

Վլադիմիր Անտոնյանը ծնվել է 1931թ. նոյեմբերի 21-ին, Մարտունու շրջանի Գիշի գյուղում, կոլտնտեսականի ընտանիքում: Տեղի միջնակարգ ավարտելուց հետո ուսանել է Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտում, իսկ հետո նաև ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի «Հայոց լեզու և գրականություն» բաժինը:

Վ. Անտոնյանը մանկավարժական աշխատանքի մկրտությունը ստացել է Բերդաշենի միջնակարգ դպրոցում: Աշխատել է նաև Մարտունու կոմերիտի միջնակարգ շրջկոմում՝ ընդհուպ մինչև առաջին քարտուղար: 60-ականների սկզբներին տեղափոխվել է հարազատ գյուղ, աշխատել դպրոցում. նախ՝ շարքային ուսուցիչ, հետո՝ փոխտնօրեն: 1964-1992թթ. Վ. Անտոնյանը գլխավորել է Գիշու միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվը: Նրա տնօրենության ընթացքում կոլեկտիվը բազմաթիվ հաջողություններ է ունեցել: Նա այդ կրթությանը դարձրել է մանկավարժական կադրերի իսկական դարբնոց. շատ ուսուցիչներ հանուններ հայտնի դարձան նախկին ինքնավար մարզում:

Վ. Անտոնյանը հմուտ, սկզբունքային դեկավար էր, հիանալի մասնագետ, լավ ընկեր ու բարի խորհրդատու: Նա մեկն էր այն մարդկանցից, որ դարաբաղցու կողորհտ էր ստեղծում իր օջախում, իր գյուղում, իր շրջապատում:

Վ. Անտոնյանը կյանքից հեռացավ միայն ֆիզիկապես. նրա բարի անունը միշտ էլ թևավորելու է մարդկանց, ուղղորդելու է դեպի բարին, ազնվիվ:

Գիշու միջնակարգ դպրոցի
մանկավարժական կոլեկտիվ

ԲԱՐԵՎԱՍՈՒԹՅԱՆ ԿԱՄՈՒՐՋ՝ ԱՐՑԱԽ-ՀԱՅԱՍՏԱՆ-ՋԱՎԱԽՔ

Ծաղիկներին դեռ չբացված, դեռ չկիզված հոգիներին, Մանուկներին վառ, խլրտուն, առում են ես՝ մնաք բարով, Գնում են ես մի մութ աշխարհ, հեռու երկիր, էլ չեն գալու, Բարի հիշեք ինձ ձեր սրտում, մնաք բարով, մնաք բարով... Վ. Տերյան

մակցել Ջավախքում կազմակերպվող Տերյանական օրերին: Իսկ «Արցախի բալիկներ» համույթի տնօրեն Սերգեյ Հարությունյանը սկսեց պարավունքները մեկնող երեխաների հետ, որպեսզի Արցախի երգն ու պարն իրենց բարձունքից ներկայացվեն այնտեղ: Եկավ սպասված օրը: Երբ տեղ

վովց Տերյանի պոեզիայի սիրահարների զգացմունքներին: Ելույթ ունեցան նաև գրողներ Հայաստանից ու Վրաստանից, Վրաստանի կառավարության ներկայացուցիչներ: Իսկ երբ բեմահարթակը տրամադրվեց «Կարին» ազգագրական համույթին, շրջակայքում զուռնա-դիոլի ծայրով թևա-

մադրությանը խառնելով իր կատակները: Իսկ երբ նազանքով պարում էր «Արցախի բալիկներ» պարի խումբը (գեղ. դեկավար՝ Սուրեն Վարդանյան), նրբությունն ու բարությունը միանգամից իրար խառնվեցին:

Ելույթ ունեցան նաև տեղական համույթները, իսկ միջոցառման վերջում բեմահարթակը նորից տրամադրվեց «Արցախի բալիկներին»:

«Ժպիտ» երգով Արցախի բոլոր բալիկների անունից Աննա Մկրտչյանը արև ու ժպիտներ պարզեց Ջավախքի մանուկներին, որ տերյանական աչքերով ժպտան աշխարհին, և խաղաղության մեջ լինեն մոլորակի բոլոր ծագերում ապրող երեխաները:

Ամբողջ միջոցառման ընթացքում անմկատ չմնացին ջավախքիցների աչքերում բոցկլտացող հիացմունքն ու զարմանքը, հպարտությունն ու երազանքը: Օրը լցված էր տերյանական սիրով ու կարոտով...

Միջոցառման ավարտից հետո շարժվեցինք դեպի Փարվանա: Կախարդական հրապուրանք, մոգական ուժ-տիրության մշուշն էր կապել հոգիներս, վերադարձի ափսոսանքը: Ընդամենը մի քանի ժամ այդ հողում, և այդքան ջերմություն ու հարազատի կանչ...

Իսկ երբ վերադառնում էինք Հայաստան, թվաց, թե մի ծայր ամբողջ ճանապարհին մեզ հետ էր

կանչում... Եվ դա կապված է մի թանկահուն ամվան հետ: Անուն, որ հայ ժողովրդի հպարտությունն է, նրա ազնիվ զավակը՝ Վահան Տերյան...

Այսօր նորից իմ հայրենի հողում եմ, իմ Արցախում և աշխարհին նայում եմ հպարտությամբ լեցուն մի ջահով. և մեկ քայլ, և մեկ հարթ բազուկ, և մեկ հնարավորություն՝ քայլել այն կամրջով, որ կոչվում է Արցախ-Հայաստան-Ջավախք:

Արցախյան երկարակեցություն և բարեմաղթանքներս եմ հղում այն մարդկանց, ովքեր ստեղծել են այդ կամրջը, որով հնարավորություն ունեցան քայլել նաև Արցախի բալիկները... Ընդհանրապես «Վահան Տերյան» մշակութային կենտրոնի նախագահ Առուշան Հակոբյանին, տնօրեն Լիլիթ Մելիքյանին, «Կարին» ազգագրական համույթի գեղարվեստական դեկավար Գագիկ Գիմոսյանին, «Արցախի բալիկներ» մանկապատանեկան համույթի տնօրեն Սերգեյ Հարությունյանին, Շառլ Ազնավուրի անվան մշակութային կենտրոնի տնօրեն Արմեն Հովսեփյանին, ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարար Նարինե Աղաբալյանին և բոլոր այն մարդկանց, ովքեր իրենց ներդրումն են ունեցել այդ միջոցառմանը մեր մասնակցության համար: Թող այն շարունակական լինի:

Ստեղծվեց բարեկամության կամրջը, որը պիտի ամրապնդվի:

Արև ԽՐԱՅԵՆՅԱՆ



հասանք, այն տարածքում, որտեղ մշվում է Տերյանական օրը, ասեղ գցելու տեղ չկար՝ մարդաշատ էր, ու տոնական տրամադրություն էր ամենուր:

Միջոցառումը վարում էր ՀՀ ժողովրդական դերասան Ազատ Գասպարյանը, ով իր գեղեցիկ ելույթով ու ասմունքով նորից կենդանություն

ծեց ազգային ոգին, նրա խրոխտ կամքը: Համերգի մասնակիցներին մեծ զարմանք և հիացմունք պատճառեց Արցախից ժամանած Նախշուն բաջին, որը հիանալի ներկայացրեց էլեն Հովհաննիսյանը: Նախշուն բաջին եկել էր Ջավախք և իր բարի մաղթանքներն էր հղում ջավախքիցներին՝ տոնական տրա-

ՔՆԱՐԱԿԱՆ

ԵՐԲ ՄԻՏՔԸ ԹԵՎԵՐ ՈՒՆԻ...



Սուսան ԳԱԼՍՅԱՆ՝ ուսուցչուհի, ով կյանքում ցանկացած գործի ստեղծագործաբար է մոտենում: Ծննդով Նորագյուղից է. արմատները խորն են, ինչպես ասում են՝ յոթը պորտով այդ հող ու ջրի ծնունդ է, և թանկ է այդ հողակտորը նրա համար, քանզի այն պապերի արյուն-քրտինքով է ոռոգվել ու սրբացել նրանց աճյուններով: Նախնիներից ամենամեծ ժառանգությունը մեծ տատից է ստացել, ով իր գրույցներով հոգևորի տիրույթներն է դարս առ դարս բացել նրա առջև: Բարեպաշտ ու աստվածասեր այդ կինը ոչ մի կրթություն չէր ստացել և Տիրոջ հանդեպ տածած իր սիրով ու հավատով է հունցել աղջկա էությունը:

Մանկուց երագուն էր բժշկուհի դառնալ, հետո գրավեց լրագրողի աշխատանքը, բայց քանի որ ընտանիքը չհամակերպվեց այն մտքի հետ, որ իրենց աղջիկը պիտի մեկնի Երևան և ապրի ու սովորի տնից հեռու, Սուսանը թղթերը հանձնեց մանկավարժականի բանասիրական բաժին: Արդեն 30 տարի է, ինչ աշխատում է ծննդավարի դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի:

Այսօր ամենամեծ մտահոգությունն այն է, որ դպրոցականները քիչ են ընթերցում: «Յուրաքանչյուր հայ երեխա պիտի անպայման կարդա մեր պատմավեպերը», - ասում է նա ու հավելում, որ ինքը դեմ է դրանց սեղմագիր հրատարակությանը: «Կարոցական ծրագրերն են սեղմում, առանձին գրողների հատկացված ժամաքանակը, հատկապես արևմտահայ գրողներին, շատ քիչ է, արդյունքում՝ աշակերտներն ավարտում են դպրոցը՝ այդպես էլ չընկալելով արևմտահայերենի ողջ գեղեցկությունն ու շքեղությունը, հպանցիկ, մակերեսային գիտելիքներ ունենալով արևմտահայ գրականությունից»:

Մի առանձին հպարտություն է ապրում, երբ իր սաներն ամեն տարի մասնակցում են հայոց լեզվի և գրականության առարկայական օլիմպիադաներին, հաղթում շրջանային փուլում, անցնում հանրապետական փուլ, առաջնություն գրավում շարադրությունների մրցույթում: Նրանցից շատերը մտերիմ են գրչի հետ՝ ստեղծագործում են, բանաստեղծություններ գրում, հաղթում «Լավագույն բանաստեղծություն» և «Վերադարձի հորդոր» անվանակարգերում: Հատկանշական է, որ ուսուցչուհու աշակերտներից շատերը քայլում են նրա հետքերով, ոմանք արդեն դասավանդում են դպրոցում, ոմանք դեռ ուսանողական մտադրանքներ են (Անուշ Հակոբյան, Ալյոնա Ենգիբարյան, Նամար Գրիգորյան, Գոհար Հայրապետյան, Անահիտ Գասպարյան): Հաճախ ինքն է ուղղորդում աշակերտներին՝ նրանց մեջ հայտնաբերելով ու զարգացնելով լեզվական ու ստեղծագործական հակումները: Իսկ դա ամենակարևորն է, որովհետև շատ հաճախ մեզնից յուրաքանչյուրը չի էլ կասկածում, թե ինչի է ընդունակ ինքը, ինչ ներուժ ունի: Այս գործում անզգահատելի է իսկական ուսուցչի դերը, ով կարողանում է տեսնել և ճիշտ հունով ուղղորդել աշակերտի պոտենցիալը: Սաների ձեռքբերումներն իրենը համարող ուսուցչուհին ուրախանում է նրանց հաջողություններով և ասում, որ լավ աշակերտը անպայման պիտի գերազանցի ուսուցչին:

Չնայած գյուղաբնակ ուսուցչուհու բազմաբաղ ու հոգսաշատ առօրյային՝ հինգ երեխայի մայր է, երջանիկ տատիկ: «Աստված ինձ այնքան շատ բարիքներ է տվել, որ հաճախ չեմ հասցրել դրանք լիովին գնահատել ու վայելել», - ավստասանքով, մաս գոհունակությամբ խոստովանում է նա: Հիրավի, բազմաշնորհ կին է: Երբ երեխաները փոքր էին, խանութներում ոչինչ հնարավոր չէր գտնել, պատերազմական այն դժվար տարիներին ինքն իր ձեռքերով էր հագցնում երեխաներին, բուրդ մանում, հագուստներ գործում, և երբեք նույն գործվածքը կամ նախազարգը չէր կրկնում, անգամ ամենահասարակ, առտնին գործերին յուրովի ու ստեղծագործաբար է վերաբերվում: Աստված նրան նաև նկարելու ձիրքով է օժտել: Սակայն կյանքի դժվարությունները նրան երբեք թևաթափ չեն անում, ավելին՝ չի զլանում և իր տագնապներին ու երազանքներին էլ հանգ ու չափ է տալիս: Ու երբ միտքը թև է առնում, ծնվում են գողտրիկ բանաստեղծություններ, որոնք ասես հոգու օրագրությունն է լինում...

Մելանյա ՄԻՆՈՆՅԱՆ

ՀՈԳՆԵԼ ԵՄ

Այնքան են հոգնել ուժեղ լինելուց, Ցավը իմ ներսում թաքուն եփելուց, Սին-թյուր ծափերից, ծափողջույններից, Լավը լինելու տվյալաբաններից, Ազնիվ լինելու ներքին պահանջից, Արդար ապրելու ունայնությունից, Ճակատագրի անարդարացի Հանուն -բաշխումից, Նրա տվածից չըժգոհելուց, Խավար ճամփեքին լույսեր վառելուց, Այնքան են հոգնել ուժեղ լինելուց, Թույլերին նեցուկ, պատնեշ լինելուց, Չարերի դեմը հրաբխվելուց, Քարի հետ ճամփին կռիվ բռնելուց, Ուրիշի համար ճամփա հարթելուց, Այս եսակենտրոն եսասիրությունից հեռու փախչելուց, Թույլ-արդարների պատիվ պահելուց, Լացին ծիծաղով պատասխանելուց, Անթիվ վազքերից, շտապումներից, Մարդու մեջ լավը միայն տեսնելուց, Սև-մութ բծերը գունագարդելուց, Ամեն ինչ սիրո նժար հանելու, Սիրելի-ներելուց...
...Այնքան են հոգնել ուժեղ լինելուց...

Ցողերը իջել ծաղկունքի աչքին Արցունք են դարձել, Արևը վերից լեռան կատարին Ջահեր է վառել: Հավքերը եկել զմրուխտ դաշտերին Լույսեր են ցանել, Հույզերը շիկնել, մարդկանց քնարին երգեր են դարձել...

Արևն է ժպտում մորս աչքերով, Այդ ծիծաղի մեջ անսահման գորով, Քամին փարվում է անհուն քնքշանքով Ու ինձ շնչում խոսքեր սիրաթով:

Ծաղկի աչքերում մորս հայացքն է, Ծաղկի բուրմունքը՝ կարոտի հյուլէ... Մեկը ժպտում է, մյուսը՝ կանչում. Այդ լույս ժպիտով ի՞նչ են ինձ ասում...

Դու ամեն տեղ ես, ամեն ինչի մեջ Եվ միշտ ինձ հետ ես, և ինձնից հեռու, Կարծես ականջիս՝ ձայնդ անընդմեջ. Դու միշտ ինձ հետ ես և ինձնից հեռու...

Քամին ինձ փարվեց մորս քնքշությամբ Ու նորից բացվեց սրտիս դուռը փակ, Մայրիկ, քեզ տեսա, լուռ ու զխիստակ, Նորից ըմպեցի հայացքներդ տաք:

Նորից բառերիդ ծովը սուզվեցի Ու խորհուրդներդ մեկ-մեկ հիշեցի... Մայրիկ՝ իմ անուշ, իմ ծով բարություն, Այս աշխարհի մեջ՝ ծով համբերություն, Սիրո անպարփակ անսահմանություն...

Երագիս ձիու բաշին են հավել Անեանալու չափ. Երկինք սլացել՝ Աստղահոտ երկնի լույս ճամփաներին Հուսո մի շողիկ գտնելու հույսով... Լուռ ինձ մատնել են երագ-տարերքի Ցնորք կածանին: Այնքան դյուքող է երագիս ուղին, Սլացքս՝ ձիու հեքին համաչափ... Եվ եթեբային աստղահուռ բարձրում Լուսացնորք օբևանին հետամուտ, Երկինք են թռչում Առանց ցավի, սարսափի, ավստասանքի...

Ամեն ինչ այստեղ ուրիշ է, Ամեն քար այստեղ մի հուշ է, Ամեն մի ծաղիկ մի հույս է, Ամեն մի ծաղիկ՝ մի գարուն, Ամեն մայրամուտ մի սիրուն, Մի նոր հեքիաթ է անանուն:

Մանկան ծիծաղը գունավոր Հաղթանակի երգ է թևավոր, Մեր սերն ու հավատը՝ գորավոր, Գալիք ճամփա փառավոր:

Ամեն ինչ այստեղ հեքիաթ է, ցնորք, Ամեն տաղ այստեղ՝ և՛ ցավ, և՛ մորմոք, Եվ սառած վիշտ է, և՛ քարոտ կարոտ...

Հառաչն այստեղ՝ սպիացած վերք, Արցունքն այստեղ՝ ջրվեժող կսկիծ, Հառաչանքն այստեղ՝ լեռնացած բողբոջ, Ծիծաղը այստեղ՝ հաղթանակի երգ:

Ամեն ինչ այստեղ ուրիշ է, Հայտո կարոտ է, վերհուշ է, Հուշը թևավոր, կյանքի ավիշ է... Ուրիշ է, ուրիշ է, ուրիշ է...

Բառերի անհատակ ծովում Ես մենակ մավակս եմ վարում, Եվ մտքիս ուռվանն եմ ձգում Ու տաղիս բառերը որսում:

Մենակ իմ ծովում մենավոր Կորսամ ես երգեր թևավոր. Կգտնե՞մ մտքիս օազիս, Որ ցնծա ու երգի հոգիս...

Ծաղկի թերթերին իջել է ցողը, Սիրտս բռնել է վաղեմի դողը, Խենթացած հոգուս ծալ-ծալ փեշերին Լուռ մտնում է հուշերիս սուսին:

Մի երգ է շրշում մանկության ուռին, Ինձ ետ է կանչում մանկության ուղին. Ավա՜ղ ետդարձի ոչ մի արահետ, Ու ոչ մի հրաշք ինձ չի տանի ետ:

Մանկության քնքուշ բոցեղեն հեռվում, Կուսական, մաքուր բնության գրկում Մի աղջնակ է դաշտում վազվզում, Ամեն ծաղկի հետ խոսում ու հրճվում:

Առվի խոխոջին խառնվում է մի երգ, Հավքի դայլայլին ձուլվում է մի երգ, Քամու թևերին պարում է մի երգ... Ա՛խ, լուսացնորք մանկության իմ երգ...

Արևը հենվեց սարին Ու ժպտաց մի պահ, Շողը դիպավ ցողին, Կայծկլտաց մի պահ:

Արևը բարձրացավ երկինք, Թրթռաց մի պահ, Երգը խառնվեց հողին, Ձրնգաց վստահ:

Ամեն ինչ լույսով բռնվեց, Օրը խենթացած պարեց, Նոր օրվա երգ երգեցին Ամենքը՝ ջահել ու տարեց:

Նորից լույս բացվեց աշխարհի վրա, Նորից «բարի լույս» մրմնջաց հոգիս, Մեղմ հովը պարեց ծառերի վրա, Հոգուս լարերին գարունը թնդաց...

Լույս բացվեց կրկին աշխարհի վրա, Արևի շողը հրճվեց իր փայլից, Ցնծուն պար բռնեց դաշտերի վրա Եվ իր կենսատու երգը բարբառեց...

Արտույտը լույսով կտուցը սրբեց, Երգով սկսեց իր լույսը բարի, Հողս բարեբեր երկնքին պարզվեց, Իր աղոթքի մեջ՝ նորից լույս բարին...

- Բարի՜ - շնչաց մայր հողն իր խորքից, - Բարի՜, - հոխորտաց երկինքը վերից, - Բարի՜, - մի մանուկ մեկեն թոթովեց. - Բարի՜ ու բարև, երկիր ու արև...

ՃԱՄԲԱՐ

ՄԱՐՏՈՒՆԱԿ ԲԱՆԱԿԻ ՀԻՄՔԵՐԸ՝ ՆԱԵՎ ԱՅՄՊԵՆ

ԼՂՀ պաշտպանության և կրթության ու գիտության նախարարությունների «Ասպետ» ռազմամարզական ճամբարին սփյուռքահայ երիտասարդների մասնակցությունը դարձել է ավանդական: Այս տարի էլ Լիբանանի ու Սիրիայի հայկական վարժարանների երիտասարդները միացան Արցախի իրենց հասակակիցներին՝ մասնակցելու նախագորակոչային վարժանքների և ռազմական գիտելիքների գործնական յուրացման համար Ասկերանի շրջանի Այգեստան գյուղի գեղատեսիլ տարածքում արդեն 5 տարի գործող «Ասպետ» ռազմամարզական ճամբարին: «Մենք հպարտ ենք, որ կարճ ժամանակամիջոցում սփյուռքահայ երիտասարդները տիրապետել են շարային քայլվածքին և հարմարվել մեր առօրյային»,- ասաց ճամբարի պետ, պահեստազորի մայոր Արսեն Գարությունյանը: Իսկ առօրյան մոտ է զինվորական կարգացուցակին, որի կատարումը ՊՆ հրամանով համարվում է կարևորագույն խնդիր. վաղ առավոտյան ջրկերի վերկաց, շարվել առավոտյան մարմնամարզության, պարապմունքների՝ երկու ժամ, ռազմամարզական միջոցառումներ՝ ծանոթություն կից զորամասի սպառազինությանն ու տեխնիկայի պատրաստությանը, հրաձգություն օդամղիչ հրացանով, ԱԿ ավտոմատով, ինչպես նաև բազմաթիվ մշակութային, այդ թվում՝ հայրենագիտական (էքսկուրսիա Գանձասար, Ամարաս, Տիգրանակերտ, Շուշի, Նիկոլ Դումանի տուն-թանգարան և այլն) ու մարզական միջոցառումներ:

Յամբ, ճամբարականները, որ պատրաստ են հաղթահարել ամեն արգելք: Կարդացել են



արցախցիների քաջագործությունների մասին և հիմա, տեսնելով նրանց երիտասարդ սերունդին, համոզվում են այս հողի անպարտելիության մեջ: «Սփյուռքի մեջ Ղարաբաղը կդիտենք որպես մեր հայրենիք,- ասում է Միհրան Ներսիսյանը:- Վերջիվերջո, օտարը չէ, մենք պիտի բարելավենք, զարգացնենք Ղարաբաղը: Գայրենիքը կարիք ունի ամեն մեկի օգնության»:

Դրո Քելեբոզյանը վստահեցնում է. «Մեր սրտի խորքում միշտ կլինի Ղարաբաղը: Պատերազմի մասին շատ ենք լսել, կարդացել, որ շատ դժվար օրեր եք անցկացրել դուք այս հողը պաշտպանելու համար: Մենք մեզ վրա մեծ պատասխանատվություն պետք է զգանք այս հողը զարգացնելու»:

Լիբանանահայ պատանիները մասնակցեցին ճամբարի երկրորդ, իսկ սիրիահայերը՝ երրորդ հերթափոխին: Առանց հպարտության և պաշտպանված լինելու զգացումի անհնար էր նայել շարային քայլքով, հայրենասիրական խրոխտ երգերով անցնող պատանիների կուռ շարքերին և նրանց մեջ՝ Սփյուռքի մեր հայրենակիցներին ու համոզվել, որ մարտունակ բանակի հիմքերը նաև այսպես են ամրացվում: Եվ «Արցախը համայն հայության հայրենիքն է» կարգախոսը գործնականում նաև այսպես է արտահայտվում:

Ճամբարային հերթափոխի փակման հանդիսավոր արարողության ժամանակ անձնական կարգապահության, հրաձգության և մարզական բարձր ցուցանիշների հասնելու, ճամբարի հասարակական կյանքում ակտիվություն ցուցաբերելու և բարեխիղճ աշխատանքի համար եղան պարգևատրումներ: Զենք միայն անվանակարգերի երկար թվարկումը հուշում է, թե ռազմական, մարզական, մշակութային ինչ հազեցած առօրյայով են ապրել ճամբարականները, որ նրանց համար ձգտել են անսոսք դարձնել ճամբարի պետ

Արսեն Գարությունյանը, նրա տեղակալներ՝ ռազմական գծով՝ Վարուժան Աղաջանյանը, մարզական աշխատանքների գծով՝ Ալեքսանդր Սիմոնյանը, մշակութաժամանցային գծով՝ Մանվել Մխիթարյանը, ճամբարի մյուս աշխատակիցները: Իսկ ԿԳ ռազմահայրենասիրական բաժինը՝ նրա պետ Վալերի Գրիգորյանի գլխավորությամբ, ինչպես նաև պաշտպանության նախարարության համապատասխան բաժինը և ճամբարին կից զորամասի ղեկավարությունը ամենօրյա ուշադրության կենտրոնում են պահում ճամբարի կյանքը՝ սկսած սանիտարահիգիենիկ պայմաններից, սննդից մինչև միջոցառումներ:

րը և ճամբարականներին խրախուսելու միջոցները: Արցախցիների հետ միասին խրախուսվեցին ու շնորհակալական նամակներ ստացան նաև սփյուռքահայ ճամբարականները, որոնք կհանձնեն իրենց վարժարաններին: Իսկ ստանալու պահին նրանց պատասխան էր. «Պատրաստ ենք ծառայելու հայրենիքին»: Գավատում ես, որ այդպես էլ կլինի, քանզի նրանք սերունդն են Սփյուռքի մեր այն հայրենակիցների, ովքեր Արցախյան պատերազմի տարիներին առանց վարանելու եկան իրենց բազկի ուժով դիմագրավելու ոսոխին՝ չխնայելով անգամ կյանքը:

Երեկոյան աստղազարդ երկնքի տակ տարածվում են հայրենասիրական երգ-երաժշտության հնչյունները: Եվ առաջինը՝ որպես օրհներգ, հնչում է «Քոչարին», ու առաջինը ասպարեզ են մտնում սփյուռքահայ ճամբարականները՝ ուս ուսի տված: Եվ շրջանն աստիճանաբար մեծանում է Մարտակերտի, Շուշիի, Շահումյանի և Արցախի մյուս շրջանների պատանիների միանալով: Արցախի մտավորականներից մեկը, ներկա գտնվելով ճամբարում, նկատել է՝ այստեղ սաղմնավորվում են համահայկական բանակի ծիլերը...

Ս. ԽԱԶՍՏՐՅԱՆ



ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Արցախի պետական համալսարանը հայտարարում է ընդունելություն հեռակա ուսուցման համակարգում հետևյալ մասնագիտությունների գծով.

1. Մաթեմատիկա: Համակարգչային գիտելիքներ
2. Ֆիզիկա
3. Քիմիա, կենսաբանություն
4. Աշխարհագրություն
5. Պատմություն
6. Հայոց լեզու և գրականություն
7. Ռուսաց լեզու և գրականություն
8. Նախագորակոչային և ֆիզիկական պատրաստություն
9. Զինվորական մանկավարժություն և հոգեբանություն
10. Մանկավարժություն և մեթոդիկա (Տարրական կրթություն)
11. Իրավագիտություն
12. Տնտեսագիտության տեսություն
13. Էլեկտրաէներգետիկա
14. Տրանսպորտային ուղիների, միջոցների շինարարություն, կառավարում և դրանց շահագործում

Փաստաթղթերն ընդունվում են ս.թ. օգոստոսի 1-ից մինչև 10-ը: Ընդունելության քննությունները կկազմակերպվեն ս.թ. օգոստոսի 15-ից-25-ը:

Տեղեկությունների համար զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝ (047) 94-91-50:



բարձր առաջադիմությամբ և կարգապահությամբ աչքի ընկած սովորողներին խրախուսելու լավագույն ձևերից մեկը Սփյուռքի հայկական վարժարաններում:

Իսկ ի՞նչ զգացողություններ ունեն, ի՞նչ տպավորություններ կտանեն Արցախից: Վաշտի ղեկավար՝ Բեյրութի Գ. Հարությունի բարձրագույն վարժարանի սան Նարեկ Ջենանյանի խոսքով՝ միայն Ղարաբաղի բնությունը չէ, որ գրավեց նրանց, այլ ավելի շատ մարդիկ՝ իրենց բարյացակամությամբ, հյուրասիրու-

ՀԱՅՏԱՐԱՐ
 Խմբագիր՝
 ՍԿԵՏԼԱՆԱ ԽԱԶՍՏՐՅԱՆ

Հիմնադիր՝
«Լուսարար»
 ՓԲԸ

Ստեփանակերտ,
 Հ. Թումանյան փ. 111, ☎ 94-38-99,
 E-mail: gorctert@mail.ru

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Տպագրակ՝ 3205: Ծավալը՝ տպագրական 3 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 04.08.2012թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ:

ՄԵԹՈԴԱՍԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ՊԱՍԱՎԱՆՊՄԱՆ ԱՐՎԵՍՏԸ ՄԻԱՅՆ ԱՌԱՐԿԱՅԻՆ

Իմ մանկավարժական-ստեղծագործական որոնումների ճանապարհին առնչվել են տարբեր ուսուցիչների ու աշակերտների հետ, ակամաստեղ դարձել տարբեր երևույթների, որոնք ինձ անչափ զարմացրել են, բայց որոշ դեպքերում էլ ուսանելի են դարձրել իմ աշխատանքը:

ԲԱՐԵՎԱՍՏԻԹՅԱՆ ԿԱՍՈՒՐԶ ԱՐՑԱԽ-ՉԱՅԱՍՏԱՆ-ՋԱԿԱՆՔ

Բոլորիս հայտնի է, թե երեխայի վրա ինչ ազդեցություն ունի ուսուցիչը, ուստի նպատակ չունեն ստեղծելու իդեալական ուսուցչի և իդեալական աշակերտի կերպար: Տարբեր են ուսումնական առարկաների ուսուցիչները, որոնք սովորողների ստեղծագործական երևույթները, մտածողությունը, ստեղծագործական մոտեցումը, որը դարձնում է այդ դասը իմացակամորեն և հուզականորեն հագեցած:

10-րդ հունամիտար դասարանում Պ. Դուրյան էր անցնում: Նախապատրաստվում էի բաց դասի՝ նվիրված բանաստեղծի մահվան 140-րդ տարելիցին:

Իմ հարցին, թե Դուրյանի երևակայական գեղեցկուհին լի-նելու դեպքում աղ-ջիկներն ինչ կանեին, բաշին եկել էր Ջավախը և իր բարի մտաբաններն էր հղում Ջավախքից: «Մա-տից էին բխում այս խոսքերը: «Պա-տից կլիներ ինձ համար լինել Մեծ Դուրյանի բանաստեղծությունների երևակայական գեղեցկուհին, լսել բանաստեղծի գեղեցիկ և խորհրդավոր երգերը:

Բույլ մը նայվածք, փունջ մը ծալիս, Քուրա մը խոսք դյուրեք իմ սիրտ... Չետաբքի որ էն Անուշ Մինայանի մտքերը: Այդ ինքնամփոփ և համեստ աղջիկը հուզումնառատ տողեր էր գրել «Օ», սիրելիս, այդ խոսքերն ինձ են հասցեագրված, դրանք այնքան ու-

մանտիկ են և լցված սիրո բույրով ու քնքշանքով: Կուզեմայի աշնան ոսկե-զօծ գորգի վրայով, իրար ձեռք բռնած, քանու նվագակցությամբ պարեհնք մեր սիրո և հիշողության վալսը...»:

Աշակերտուհիներից Աննա Օհա-սերով, իմ խոսքով և ինչպես ինքն է ա-սում, դյուրական հայացքով: Նա համ-բուրում է ճակատս և ասում. «Ես չեմ ուզիլ մեռնիլ և կփրկվիմ միայն քեզ-նով»:

Այս խոսքերն ապշեցնում են ինձ, տանում մի ուրիշ աշխարհ: Փորձում եմ փրկել նրան, բայց հոգուս և մարմնիս անհաշտ հակառակությունից սաստիկ այեկոծվում է իմ ներքնաշ-խարհը:

Մեր բնության կողմից մարդուն պարզապես ամենա-թանկ արժեքներից է, որը սովորաբար նկատվում է բարձր դասարանցիների մոտ: Իրար հանդես տաժած համակարգ-քը փորձում են սկզբում գաղտնի պահել ուրիշներից, բայց միշտ չէ, որ հաջողվում է: Ես՝ որպես ուսուցիչ և դաս-ղեկ, չափազանց զգույշ և նր-բանկատ եմ այդ հարցում:

Մեզ առանձնապես ա-նակնկալի բերեց դասարանի տղաներից Վարդանը, որն ընդհանրապես հեռու էր ստեղծագործելուց, թույլ կարողությունների տեր աշա-կերտ էր, կարելի է ասել, դաս չէր սովորում: Նա խնդրեց, որ ես կարդամ իր գրած տողերը: Անպատասխան սիրո խոստո-վանություն էր դա: «Ես էլ Դու-րյանի ման մերժված և ան-փոխադարձ սիրո զգացումն ունեմ: Մեր դպրոցի գեղեցկու-հին վաղուց է գրավել իմ ու-շադրությունը, և այսօր առիթ է, որ կարողանամ անկեղծա-նալ. «Դու դարձար իմ կյանքի հիմաստը, երջանկությունը, ես խոստանում եմ անդամաճան նվիրվել քեզ: Չանուն քեզ պատրաստ եմ ամեն ինչի: Քո մեջ տեսնում եմ բարության, ազնվության, հպարտության, համեստության գուգակցում»:

Մեփական ուժերի նկատ-մամբ միշտ անվտանգ էր նա: Բայց այդ աշակերտի ոգևո-րությունը այդ օրն այնքան բարձր էր, որ ինձ հանձնեց նաև ինչ-որ թերթեր: Սկզբում չհասկացա, պարզվեց՝ ռեֆե-րատ էր գրել: Դուրյանի կյանքն ու գրական գործու-նությունը էր ներկայացրել: Չետո պարզվեց, որ ուսման մեջ ետ մնացող այս աշա-կերտն այնքան էլ հետ չի մնում իր ուսուցչի վերաբեր-մունքը վերլուծելու մեջ, որն ինձ չափազանց ուրախաց-րեց:

Ինքնաբերաբար հիշեցի Տարիներ առաջ 5-րդ դա-սարանում սովորող Արտաշե-սի ծնողը, հակառակ իմ կար-ծիքի, փորձում էր ինձ համո-նյանը հիանալի պատկեր էր ստեղծել. «Երախտագիտությամբ ես, երկ-նագույն երկնքի ճերմակ ամպի վրա նստած, հասա խավար սիրո տունը: Մեծ բանաստեղծը գամված էր մահ-ճակալին, լուռ հառաչանքներ էր հղում բոլորին, նրա դեմքին մթություն էր, բայց երբ տեսավ իր երևակայական սիրո տիրուհուն, կյանքի լույս բացվեց նրա դեմքին...»:

Որքան նրբություն և հուզումնք կար Լիլիթ Չարությունյանի տողերում: Չայնի մեղմ ելևէջները մեզ տարան Սկյուտարի տխրակի համեստ բնակա-րանը: «Երևակայությամբ ես Դուրյանի մոտ էի, նույն սենյակում: Նա արդեն անկողնային վիճակում էր: Ես նստեցի նրա կողքին, նա բռնեց իմ ձեռքը և շշմջաց. «Գեղեցիկ կյանք մ'ալ կա, սերն է այդ...»: Նա հիանում էր իմ վար-

սերով, իմ խոսքով և ինչպես ինքն է ա-սում, դյուրական հայացքով: Նա համ-բուրում է ճակատս և ասում. «Ես չեմ ուզիլ մեռնիլ և կփրկվիմ միայն քեզ-նով»:

Այս խոսքերն ապշեցնում են ինձ, տանում մի ուրիշ աշխարհ: Փորձում եմ փրկել նրան, բայց հոգուս և մարմնիս անհաշտ հակառակությունից սաստիկ այեկոծվում է իմ ներքնաշ-խարհը:

Մեր բնության կողմից մարդուն պարզապես ամենա-թանկ արժեքներից է, որը սովորաբար նկատվում է բարձր դասարանցիների մոտ: Իրար հանդես տաժած համակարգ-քը փորձում են սկզբում գաղտնի պահել ուրիշներից, բայց միշտ չէ, որ հաջողվում է: Ես՝ որպես ուսուցիչ և դաս-ղեկ, չափազանց զգույշ և նր-բանկատ եմ այդ հարցում:

Մեզ առանձնապես ա-նակնկալի բերեց դասարանի տղաներից Վարդանը, որն ընդհանրապես հեռու էր ստեղծագործելուց, թույլ կարողությունների տեր աշա-կերտ էր, կարելի է ասել, դաս չէր սովորում: Նա խնդրեց, որ ես կարդամ իր գրած տողերը: Անպատասխան սիրո խոստո-վանություն էր դա: «Ես էլ Դու-րյանի ման մերժված և ան-փոխադարձ սիրո զգացումն ունեմ: Մեր դպրոցի գեղեցկու-հին վաղուց է գրավել իմ ու-շադրությունը, և այսօր առիթ է, որ կարողանամ անկեղծա-նալ. «Դու դարձար իմ կյանքի հիմաստը, երջանկությունը, ես խոստանում եմ անդամաճան նվիրվել քեզ: Չանուն քեզ պատրաստ եմ ամեն ինչի: Քո մեջ տեսնում եմ բարության, ազնվության, հպարտության, համեստության գուգակցում»:


Մեփական ուժերի նկատ-մամբ միշտ անվտանգ էր նա: Բայց այդ աշակերտի ոգևո-րությունը այդ օրն այնքան բարձր էր, որ ինձ հանձնեց նաև ինչ-որ թերթեր: Սկզբում չհասկացա, պարզվեց՝ ռեֆե-րատ էր գրել: Դուրյանի կյանքն ու գրական գործու-նությունը էր ներկայացրել: Չետո պարզվեց, որ ուսման մեջ ետ մնացող այս աշա-կերտն այնքան էլ հետ չի մնում իր ուսուցչի վերաբեր-մունքը վերլուծելու մեջ, որն ինձ չափազանց ուրախաց-րեց:

Ինքնաբերաբար հիշեցի Տարիներ առաջ 5-րդ դա-սարանում սովորող Արտաշե-սի ծնողը, հակառակ իմ կար-ծիքի, փորձում էր ինձ համո-նյանը հիանալի պատկեր էր ստեղծել. «Երախտագիտությամբ ես, երկ-նագույն երկնքի ճերմակ ամպի վրա նստած, հասա խավար սիրո տունը: Մեծ բանաստեղծը գամված էր մահ-ճակալին, լուռ հառաչանքներ էր հղում բոլորին, նրա դեմքին մթություն էր, բայց երբ տեսավ իր երևակայական սիրո տիրուհուն, կյանքի լույս բացվեց նրա դեմքին...»:

Որքան նրբություն և հուզումնք կար Լիլիթ Չարությունյանի տողերում: Չայնի մեղմ ելևէջները մեզ տարան Սկյուտարի տխրակի համեստ բնակա-րանը: «Երևակայությամբ ես Դուրյանի մոտ էի, նույն սենյակում: Նա արդեն անկողնային վիճակում էր: Ես նստեցի նրա կողքին, նա բռնեց իմ ձեռքը և շշմջաց. «Գեղեցիկ կյանք մ'ալ կա, սերն է այդ...»: Նա հիանում էր իմ վար-

Շնորհավորանք

ԲԱՉԱՓՈՐՉ ՀՄՈՒՏ ՄԱՆԿԱՎԱՐԺԸ



Միջակ ուսուցիչը շարադրում է լավ ուսուցիչը՝ բացատրում, անվանի ուսուցիչը՝ ցույց տալիս, մեծ ուսուցիչը՝ ուզեցնում:

Ու. Ուրդ

Ուսուցիչ մեծությունը չափվում է աշակերտներով: Դրա լավագույն առիավատյան Մարտակերտի շրջանի Չափար գյուղի միջնակարգ դպրոցի քիմիայի թոշակառու ուսուցիչ Նիկոլայ Սադյանն է: Նա դպրոցում աշխատում է 1962 թվականից: Հիմա մի քանի ժամ է դասավանդում երեխաներին գիտապես հմուտ դիմելու և մրցույթներին մասնակից դարձնելու: Նա այն երջանակ ուսուցիչներից է, ում բախտ է վիճակվել իր մասնագիտությամբ ակադեմիկոս սան ունենալ (Երևանի գիտու-թյան կաճառի այդ երեկին իր եղբորորդի Աշոտ Սադյանն է):

Ինձ՝ 62-ամյա լեզվաբան-դոցենտին, բախտ է վիճակվել 1965-1966թթ., 10-րդ դասարանում աշակերտել նրան, թեև ցածր դասարաննե-րից արդեն սովորելու բաներ ճաշակել էի: Այն ժամանակներում դպրոցի բակի մի մասը ներկա հատվածի նման չէր: Մանկապարտեզի ու ակումբի երկհարկանի շենքը չկար: Հայաստա-նի թաղի միջնակարգ դպրոցից այցելության ժա-մանակ տնկած ընկուզենիների մի խիտ պուրակ էր: Սպորտի համար ե-ղած մարմնակրթական պարագաները շատ տարածք էին զբաղեցնում: Ընդարձակ էր հատկապես վոլեյբոլի հրապարակը: Իսկ Սադյան Նիկոլա-յը վոլեյբոլի մեծ սիրահար էր ու շատ էր վարակած պահում դպրոցի երե-խաներին ու երիտասարդներին: Իրենից մեծ եղբայրը ֆիզկուլտուրայի ինստիտուտում էր սովորում և միջազգային մրցումների էր մասնակցում, ուստի վարակն անասհման էր: Հիմա այդ եղբայրը՝ Բորիս Սադյան, սպորտի մեթոդիկայի գծով ակադեմիկոս է:

Երիտասարդ Ն. Սադյանի խոսքը առիթնուղ էր: Չայնի երանգը կիսա-մեղմ էր, որ աստիճանաբար ազդու էր դառնում, և ինչ թեմա խոսելիս լի-նել, ակամա դիմացի ուշադրությունը գրավում էր: Վերջում ազդու հն-չեղանգը նպատակին էր հասնում, ի բնե օժտված էր մանկավարժի հատ-կանիչներով: Դպրոցահասակ տարիներին, հիշում եմ, չէր լինում մի հան-դիպում, մի խոսք, որ չկապեր մասնագիտության հետ: Երիտասարդ մասնագետը կարողանում էր գրավել, միշտ որևէ նոր բան սովորեցնել: Օրինակ՝ երբ դպրոցի բանջարանոցի սերմերը պետք է հավաքվեին, աշակերտներին շուրջն էր խմբում, գրույցով, կատակով վա-րակում ու բանջարանոց տանում: Սովորեցնում էր ցանկացած բույսի տե-սակը, տեսքը, գույնը, չափը և ձևը և այլն ու հարցնում սերմի կամ այլ բաղադրիչի մասերը: Եվ յուրաքանչյուր բույս պոկել էր տալիս, պատմում ու բացատրում:

Մեզ՝ աշակերտներին, հաճախ հարևան գյուղերն էր տանում թատե-րական ներկայացումների, ասումնից, երգ ու պարի: Գնալիս երբեք մեր ուշադրությունը չէր շեղում, բայց հետդարձի ճանապարհին անհնար էր, որ գրույցն իր մասնագիտության հետ չկապեր: Մեքենայի թափքում էին կանգնում, և ճանապարհի եզրի ծառերից ճանկում էր տերև կամ ծաղիկ և հմուտ գրույցով կենսաբանության, բուսաբանության դասերի հետ կա-պում: Չգտնում էր գիտելիք ավելացնել: Երբ 10-րդ դասարանում մեզ քի-միա էր դասավանդում, արդեն գիտական ուղղվածության տարերքն ամ-բողջական էր: Յուրաքանչյուր միտք գրատախտակի գրածից, նշածից էր բխեցնում, նյութը, ռեակցիան անպայման տեսանելի, ընկալելի դարձ-նում: Սլացիկ հասակ, հաճելի ծայրահեղ երանգ, մասնագիտական կիրթ լեզու, մանկավարժական նուրբ տակտ, ու այդ ամենը զուգակցված գի-տականորեն մատուցմանը՝ սիրելի էին դարձնում ուսուցչին, դրանից էլ՝ առարկան: Դա բացատրելու նրա յուրահատկությունը շատ էր տարբեր-վում մյուս ուսուցիչներից: Հարցումների ժամանակ էլ և պահանջում էր, և ոգևորում: Գնահատելիս վերջում բոլորս գոհ էինք մնում:

Եվ այսպես, որպես լավագույն ուսուցիչ, հետևում էր իր մասնագիտու-թյան գծով բարձրագույն գնացող աշակերտների արդյունքներին: Առաջ-սոր նրա աշակերտներից 19-ը միայն բժշկական են ընդունվել, 20-ից ա-վելին՝ քիմիայի և կենսաբանության գծով:

Նրա բազմաթիվ աշակերտներ կենսաբանությունից և քիմիայից հան-րապետական մրցույթներում մրցանակային տեղեր են գրավել և այսօր էլ շարունակում են:

Ինչպես Նիկոլայ Սադյանի, այնպես էլ մեր բոլորի պարծանքը ակադե-միկոս Աշոտ Սադյանն է: Նա օժանդակում է իր ուսուցչին՝ քիմիայի նորու-թյուններին հմտորեն տեղեկանալու հարցում:

Ն. Սադյանը՝ որպես հմուտ մասնագետ, միջոցաբանային, միջդպրո-ցական, միջշրջանային ուսուցչական մասնագիտական ընթերցումների ամենամյա լավագույն մասնակիցն է: Շուրջ 25 տարի՝ 1972-1984 և 1994-2007թթ., նա ղեկավարել է դպրոցը:

Նիկոլայ Սադյանը գնահատվել ու մեծարվել է ըստ արժանվույն՝ ա-վագ ուսուցիչ, դարի լավագույն մանկավարժ, նախարարության պատ-վոգրեր, ԼՂՀ վարչապետի մեդալ:

Մեր այդ լավագույն ուսուցիչն Արցախյան գոյապայքարի առաջին իսկ օրից նրա գիտակից, գործուն մասնակիցն էր: Առաջին գեներ «Մոսին» էր, որ երևանից էին գաղտնի բերել և իրեն վստահել, առաջին ինքնաձիգը նա էր փորձարկել, բոլորն էլ՝ գաղտնի:

Գյուղը երկու ամսամյա ծեռք ընկնելու ժամանակ Ն. Սադյանը ամենավերջին դուրս եկողներից է եղել, անձնվիրաբար կատարել է հայ-րենիքի նկատմամբ իր այրական պարտականությունները:

Ն. Սադյանը նաև հմուտ որսորդ է, անհնար է որսորդական խմբի որևէ գործողություն առանց նրա մասնակցության: Նա նաև գյուղում հարսա-նյաց և սզո արարողությունների հացկերույթների հարգված ղեկավարողն է:

Ն. Սադյանը հայր է չորս զավակների՝ Լիլիթ, Գայանե, Թաթուլ, Բորիս և պապիկ բազմաթիվ թոռների: Առողջություն և արցախյան երկարակեցություն մարդենք մեր բազմա-փորձ 70-ամյա հմուտ մանկավարժին:

Սիլվա ՄԻՆԱՍՅԱՆ Ն. Սադյան Նախկին սան

ՀԱՅՈՒՑ ՇՈՒՆԻ ԱՆՊԱՐՏԵԼԻ ՊՈՒՍՐԸ

Կարինե Դանիելյանի կյանքում մեր Շարժումն ու Ազատամարտը բախտորոշ դեր խաղացին՝ նորովի իմաստավորելով ապրած յուրաքանչյուր օրն ու ժամը: Երբ եկավ վճռական պահը, աղջիկը զինվորագրվեց առանց վարանելու, իսկ մորն այսպես համոզեց. «Ամեն տնից մեկը պիտի կռվի, մեր տնից էլ ես եմ զնայու»: Երբ պատերազմի մեջ մտավ որպես զինվոր՝ կարճ ժամանակում տիրապետելով ավտոմատին, իսկ հարկ եղած դեպքում ձեռքն էր առնում սանիտարական պայուսակը, փոխարինում բուժօրություններին: Այդ խիզախ ու անվերաբեկ հայուհուն պատերազմը չխնայեց. առաջին կարգի հաշմանդամ է ու թեպետ անհաստատ է նրա քայլը այս հողին, բայց ապրում է հպարտ ու բացձակատ, քանզի այսօրվա փրկումն իսկապես խաղաղության համար նա արյամբ է հատուցել:

աղջկան հայրենասիրական ոգով էր թրծել՝ նրա մեջ բորբոք պահելով ազգային արժանապատվությունն ու աղջկական հպարտությունը: Մի անգամ դպրոցում թուրքի լամուկներից մեկը ծեծել էր եղբորը, և երբ ինքը փորձել էր պաշտպանել նրան, դպրոցի կին ուսուսակուհի, որը սովորաբար աջակցություն էր խոստում հայ աշակերտների հետ, իրենց թուրքին պաշտպանեց՝ ասելով. «Երանսին հո՛վա, վեր թորքը նրան ենթարկվե, թորքը պիտի միշտ էլ հային թակե»: Սակայն Կարինեն կուլ չտվեց վիրավորանքը և կուստեց նրան՝ հաշվի չառնելով ոչ դիրքը, ոչ էլ տարիքը: Հոգեկերտվածքի ձևավորման գործում անչափ մեծ էր հոր դերը: Հայր ու աղջիկ դեռ այն տարիներին հստակ գիտակցում էին թուրքի նպատակը, որն այնքան դիպուկ ձևակերպել էր Բ. Սահյանը. «Եթե մեկը անցյալը է ու



Կոմանդոսի հես

Կարինեն ծնվել ու հասակ է առել Շուշում, ավարտել է քաղաքի հ. 2 ֆիզմաթ թեքունով միջնակարգ դպրոցը: Լավ էր սովորում, առարկայական օլիմպիադաների ակտիվ մասնակցին էր, շատ էր սիրում մաթեմատիկան, հուզում էր բոլորին իր գեղեցիկ ասումներով, մասնակցում սպորտային մրցումներին, իսկ շախմատում միշտ առաջինն էր: Երբ զորք էր իրավաբան դառնալ, բայց ծնողներին համոզել չհաջողվեց, և երազանքն անկատար մնաց: Ընդունվեց հաշվապահական դպրոց, որն ավարտեց գերազանց գնահատականներով: Աջքաբաց աղջիկ էր, սրտոտ, ամեն գործի վստահությամբ էր ձեռք գարկում. հաշվապահ, թարգմանիչ, գործավար, գանձապահ... ոչ լրիվ ցանկն է Շուշում նրա կատարած աշխատանքների: Աշխատանքային վերջին հասցեն Շուշիի հացի գործարանն էր: Ազգամիջյան բախումները, ազգային արժանապատվության ուսնահարումը շուշեցի հայերի համար իրենց ճնշողությամբ դարձնում էին անձուկ ու անհեռանկարային միջավայր: Կարինեն չդիմացավ և 1984թ. մեկնեց Պյատիգորսկ, որտեղ մեկ ամիս անց արդեն աշխատանքի էր անցել: 88-ին, երբ սկսվեց Արցախյան շարժումը, Մոսկվայից Կենտրոնական հեռուստատեսությունը սկսեց արվավայրված ու ստապատիր իր հաղորդագրություններով մուրկություն մեջ գցել խորհրդային երկրի քաղաքացիներին: Պյատիգորսկում Կարինեն աշխատում էր կարի ֆաբրիկայում. 5-րդ արտադրամասի բրիգադի վարչատեսուր էր և չէր կարողանում անտարբեր նայել օրավար աճող հակախայկական հիստերիային:

զում գողանալ և վերագրել իրեն, ինչ ասել կուզի, պատրաստվում է գրկել քեզ ապագայից»: Հայ ժողովրդի պատմությանն ու ազգային գործիչներին ծանոթ էր հոր պատմածներից, Չորավար Անդրանիկի մասին էլ առաջին անգամ հորից էր լսել: Մինչև այսօր էլ նրա համար առեղծված է մնացել, թե ինչ ճանապարհով էին իրենց տանը հայտնվում արտասահմանում հրատարակվող հայկական թերթերն ու ամսագրերը, որոնց խումբացած էջերից Կարինեն տեղեկանում էր աշխարհասփյուռ հայության կյանքից, հայ գաղթօջախների առաջին ի հայանքի նշանավոր գործիչներին: Աշխարհագրությունից աղջկա գիտելիքները ստուգելիս հայրը միշտ հարցնում էր նաև, թե որ երկրում ինչքան հայ է ապրում: Փոքրամարմին այդ մարդու մեջ մեծ ոգի էր ապրում: Քաղաքի փոստատան հեռագրության բաժնի պետն էր և Բաքու կամ Մոսկվա ուղարկվելիք հեռագրերը սովորաբար ինքն էր ձևակերպում, վերջնական տեսքի բերում: Եվ ահա 89-ին, երբ Արցախյան շարժումը գնալով թափ էր առնում, Շուշիի ղեկավարությունը Բաքվից հրահանգ է ստանում հերթական ստահող հեռագիրն ուղարկելու Մոսկվա, որով Շուշիի հայերն իրենց համերաշխությունն են հայտնում տեղի արդարացիներին և հրաժարվում ստեփանակերտցիների պահանջից՝ Արցախի՝ Մայր Հայաստանի հետ վերամիավորումից: Հնարամիտ հայրն այնպես է փոփոխում տեքստը, որ բառերը մնում են նույնը, բայց իմաստն արդեն՝ ճիշտ հակառակը: Մոսկվայից լուրը հասնում է Բաքու, թե ինչպես թույլ տվիք, որ մասն հեռագիր ուղարկվի, Բաքուն էլ իր հերթին Շուշիի ղեկավարությանն է սաստում, վերջիններս զիջելով ժամը 3-ին գալիս, տնից հանում են Աշոտ Դանիելյանին և փոստատան նուրբուկում այնքան են ծեծում, որ կուրանում է: Հաջորդ օրը ծեծված ու ջարդված նրան բերեցին տուն: Կարինեն շատ ուշ իմացավ հոր հետ կատարվածի մասին և Ռուսաստանից շտապեց տուն: Վերադարձավ ոչ թե Շուշի, այլ՝ Ստեփանակերտ, ուր հարազատները ապաստանել էին տեղի հանրակացարանում: 1989-ի մայիսի 26-ն էր, 5 օր անց հայրը մահացավ՝ այդպես էլ չկարողանալով տեսնել սիրելի դստեր դեմքը. «Հայրս բոլորովին չէր տեսնում, միայն ձեռքերով շոշափեց դեմքս և լսեց ձայն...»: Շուշիի ազատագրումից հետո Կարինեն մոր՝ տիկին Ռինայի հետ

տեղափոխվեց Շուշի, սակայն նրանց տունը հիմնահատակ ավերվել էր... Իմ հարցին՝ ե՞րբ և ինչպե՞ս ընդգրկվեց Շարժումն մեջ, Կարինեն պատասխանեց. «Առաջին քայլերս... տնտեսում շրջել ու փող եմ հավաքել սահմանային գյուղերը պահող մեր ֆիրմաների սնունդը հողալու համար: Քաղաքում ոչ մեկին չէի ճանաչում, բայց դռները ծեծում ու փող կամ պարենամթերք էի հավաքում՝ ցուցակով: Հատերը մեծ գումարներ էին տալիս, բայց իրենց ամուսները չէին թողնում գրեմ: Ես դրանք հանձնում էի»: «Կամազ» կենտրոնում աշխատելիս տղաներին ոգունում էր այնտեղ պատրաստվող գենթերը թաթում քաղաք հասցնել, քանի որ քաղաքի մուտքը հսկող զինվորական պարեկախումքը կանանց զրեթ էր ստուգում: Մի երկու անգամ քիչ մնաց բռնվել, բայց տղաներին հաջողվեց մի շիշ կոնյակով հետգնել աղջկան: «93-ի օգոստոսի 17-ի մարտերը Կուբաթլուում ամենադաժանն էին, - վկայում է Կարինեն: - Նախօրյակի գիշերը բարձունքը գրավելիս տղաներից երեքը վիրավորվել էին: Աղջիկները նրանց տեղափոխել էին դաշտային հոսպիտալ, բայց դեղորայքով լեցուն մի պայուսակ էին թողել՝ հանկարծ պետք կգար: Այդ գիշեր թշնամու ականածները չլռեց: Մենք պատրաստ չէինք, չգիտեինք՝ ինչքան ենք մնալու այդտեղ. ոչ խրամատ էինք փորել, ոչ պատասպարվելու տեղ կար: Կրակի հեղեղ էր տեղում մեզ վրա... Զեմ հիշում, թե երբևէ մեզն ղեկավարում էին զինվորականները, մյուսն էր օգնության կանչում, երկուրդս էլ մեջ մտնում... Ցավով, մերոնցից շատերն կորցրինք...»: Հենց այստեղ էլ, հերթական վիրավոր ընկերոջն առաջին օգնությունը ցույց տալու պահին, կողքին պայթած արկից վիրավորվում է Կարինեն: Նրա վիճակն այնքան ծանր էր, որ բժիշկները ոչ մի հույս չէին տալիս, շաբաթերը շարունակ նա պառկած էր անգիտակից վիճակում, և միայն մայրն էր, որ հավատում էր հրաշքին... Կարինեն պատմում է, պատմում... Բայց մի թե հնարավոր է երկար ու ծիգ օրերի ու ամիսների տառապալից ուղին մի գրույցով սպառել: Ներքուստ գգում եմ, որ նա խնայում է ինձ ու չի տրվում ահավոր ու դաժան մարմնասերին: «Փակ դռներ կան իմ սրտում, որոնք ինձ էլ ի գորու չեն բացելու», - խստտոկանում է Կարինեն: Ես զարմանում եմ նրա նուրբ ու փխրուն կանացի եռթանք, զարմանում եմ, թե ինչպես նա կարողացավ նշան բռնել և կրակել... Նա մի պահ լռեց ու վրա բերեց. «Մեր ջոկատը կրվում էր Լաչինում, դիրքում մտած գրուցում էինք ընկերոջս հետ, իսկ նա հագիվ 18 տարեկան կլինել, ամուրը Գագո էր, տղերքը «ճուտո» էին ասում: Այսօրվա պես հիշում եմ մեր զորույցը: Գագոն հարցրեց. «Տեսնես հիմա ինչ են մտածում թուրքերը, երևի երազում են մորից Շուշիում քե՞ք ամելու մասին»: Ես ասացի, որ Շուշին նրանք միայն երազում էլ կտեսնեն, մա թե. «Ի՞նչ են կարծում՝ կհարթե՞նք», ասացի՝ անպայման, որովհետև մեք զնայու տեղ չուներք, այս հողը մերն է, և մեք եք այս հողի տերը, իսկ իրենք քոչվոր են, ինչպես եկել են, այնպես էլ կգնան: Հետո հարցրի, թե որտեղից է, բայց պատասխան չստացա, մորից կրկնեցի հարցս, դարձյալ լռությունը եղավ իմ պատասխանը: Ես թեքվեցի կրոն կողմ և տեսա պարանոցի քնտարկից հոսող արյունը, իսկ աչքերը բաց էին: Մահից առաջ նա չհասցրեց անգամ մի ձայն արձակել... Ահավոր բան է, քիչ առաջ խոսում, ծիծաղում էինք, իսկ հաջորդ պահին չկա, այնքան երիտասարդ էր, կյանքով լեցուն, ինչքան տեսանքները կիսատ մնացին: Դրանից հետո ինձ համար միևնույն էր, և ես աշխատում էի, որ արձակված ոչ մի գնդակս զուր չկորչի»: ...1993-ի օգոստոսի 17-ի ճակատագրական օրվան նախորդող գիշերը Ռինա մայրիկը խորհրդավոր երազ է տեսնում. ինքն անցնում է Ղազանչեցոց եկեղեցու մոտով, իսկ քիչ հեռ-

վում, խնձորենու տակ, գեղեցիկ կարմիր խնձորներ են թափված: Մտնեցում է, բայց որը վերցնում է՝ փտած է, բոլոր 7 խնձորներն էլ փտած էին, իսկ հաջորդ օրը դստերը 7 վերքով, զրեթե անկենդան, աղջիկները՝ Թառախյան Մարգարիտն ու Թամարայան Անահիտը, վիրակապում, տեղափոխում են հոսպիտալ: Զորս օր անգամ վիճակում մնալուց հետո տեղի բժիշկներն ուղարկում են Երևան: Երեք ամիս օր ու գիշեր մայրը խնամում էր Կարինեին: Բժիշկները զարմացել էին և երբ արդեն հիվանդանոցից դուրս էին գրում, խոստովանեցին, որ աղջիկն իր կյանքով պարտական է մորը, որ մայրը երկրորդ անգամ է կյանք պարզելու դստերը: Հրաշքով փրկված Կարինեն կորցրել է աշխատանքային վիճակը, առաջին կարգի հաշմանդամ է, բայց հեշտությամբ հանձնվողներից չէ մորից սովորած անհրաժեշտությունն ու հեղուկագործությունը լցրին նրա կյանքի պարպը: Նրա ձեռքերն այսօր իսկական արվեստի գործեր են արարում, որոնք իրենց մուրթ բանվածքով ու բազմազանությամբ վկայում են ստեղծողի հոգու գեղեցկության մասին: Նրա հաճախ են այցելում մարտական ընկերներն ու ընկերուհիները, հատկապես Մայիսյան եռատոնի օրերին Հայաստանից ու Արցախից այցելուների պակաս չկա, հյուրանատներ տանտիրուհի տիկին Ռինան և Կարինեն սիրով են ընդունում բոլորին և առանց հյուրասիրության ոչ մեկին ծամփու չեն դնում: Կարինե Դանիելյանի մարտական ծառայությունները բարձր են գնահատվել. պարգևատրվել է «Մարշալ Բաղրամյան», «Մարտական ծառայություն», «Արիության համար», «Վագրեն Սարգսյան», «Մայրական երախտագիտություն» և «ՀՀ երկրապահների միության հուշամեդալով»: Իր բազմաթիվ զինակից ընկերների մասն Կարինեն էլ մտահոգ է հայրենիքի՝ իր ազատագրած այս փոքրիկ հողակտորի ապագայով: «Հանցագործություն կլինի, եթե մեր այսքան թափած արյունը զուր կորչի, արյունով ազատագրած այս հողերից թեկուզ մի սանտիմետր հանձնեն թշնամուն, այդ հողերը փոխգիշունների ենթակա չեն: Դրա իրավունքը չունի ոչ մեկը: Ես կցանկանայի մեր պետական այրերը խորագետ և իմաստուն որդիները կայացնեին՝ հոգուտ մեր ազգի ապագայի, ի հիշատակ այսօրվա ազատության համար իրենց կյանքը զոհաբերած գրասեղանին դրած մեր տղաների»:

Կարինեն այսօր ապրում է մոր հետ: Տիկին Ռինան անտրտունը կրում է իր խաչը. առանց նրա օգնության աղջիկն ի վիճակի չէ հոգավոր ամենամանր կարիքներն անգամ: Թեպետ ծանր է գիտակցել, որ յուրաքանչյուր քայլի կամ գործողության համար կարոտ են կողմնակի օգնության, այդուամենայնիվ, հեռու է Գլուխալուց, լավատեսներն է նայում վաղվան, բանգի ամենամեծ երազանքը դեռ առջևում է՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ճանաչումը աշխարհի երկրների ու պետությունների կողմից: Հայրս է, որ իրեն բախտ է վիճակվել կռվելու և պայքարելու հայրենիքի ազատության համար, իսկ ամենամեծ հպարտությունը փլատակներից հանող ու վաղեմի մշակութային կենտրոնի փառքին ձգող Շուշին է՝ երեսնամյա ուրախ ճովուղունով ու շինարարական եռուզեռով լեցուն առօրյայով: Առաջին կարգի հաշմանդամ մասկին ազատամարտիկի համար դժվար է ներսուղարկալուն և շեղվելով կռվելու և պայքարելու հայրենիքի ազատության համար, իսկ ամենամեծ հպարտությունը փլատակներից հանող ու վաղեմի մշակութային կենտրոնի փառքին ձգող Շուշին է՝ երեսնամյա ուրախ ճովուղունով ու շինարարական եռուզեռով լեցուն առօրյայով: Առաջին կարգի հաշմանդամ մասկին ազատամարտիկի համար դժվար է ներսուղարկալուն և շեղվելով կռվելու և պայքարելու հայրենիքի ազատության համար, իսկ ամենամեծ հպարտությունը փլատակներից հանող ու վաղեմի մշակութային կենտրոնի փառքին ձգող Շուշին է՝ երեսնամյա ուրախ ճովուղունով ու շինարարական եռուզեռով լեցուն առօրյայով:

Մելանյա ՄԻՆՈՅԱՆ

ՔՆԱՐԱԿԱՆ

ՆՈՐ ԲԱՆԱՍՏԵՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արմինե ԱՊՐԵՍՅԱՆ

Բարև, առավոտ: Դու հարատենջ ես... Կարոտի մանրիկ առջնորդի մեջ Ջնագույն հայի զսպված բնույթն է: Իսկ ես ուզում եմ չզսպել ոչինչ, Իսկ ես ուզում եմ լալ ու ծիծաղել եվ անմնացորդ դուրս բերել հոգիս Լուսնայան ժամգուտ, գաղջ մենախցից Յանայն աշխարհի աչքերի առաջ:

Ուզում եմ կանգնել աշխարհի բեմում Ու ողջ էությանս սեր խոստովանել Իմ գերեզմարված վեհ բարդիներին, Իմ Արարատի անհույս աչքերին, Իմ հայրենիքի բզկտված գոյին...

Իմ դավանանքը իմաստությունն է, Որ գալիս է սոսկ տարիների հետ՝ Անխուսափելի ծերության նման...

Եթե արևը ծնվում է նորից Ամեն օր հենց նույն հորից ու նորից, Ապա ինչո՞ւ եմ մարդիկ գողանում Յողը զավակից, զավակին՝ հողից...

Յարգերի անթիվ շարասյունները Չկանխորշված այս բախտին բարձրված Որբերի նման անօթևան են Ու դարեր ի վեր այսպես կմնան, Եթե լինենք զուսպ ու համբերատար...

Բարև, առավոտ: Դու հարատենջ ես: Սակայն թերի ես ու ոչ կատարյալ...

Անտարկելի ճշմարտության հետ, Յանենայն դեպս, ապրում է սուտը...

Յոփացած օրվա ավարտը մի պահ Վերլուծում է իր վատնած ժամերը Ու դռներիս մոտ ինքնասպան լինում...

Ես ծիծաղում եմ անաստված ու խենթ, Բայց հասկանում եմ, որ նա էլ է մեղք...

Վերադարձել եմ այն բանի համար, Որ ինձ հետ տանեմ եղածս խիղճը. Դու դրա հանդեպ թերահավատ ես...

Երկինքն անսահման մոտ է աչքերիս, Ես ազահաբար աստղերն եմ քաղում, Իսկ նրանք անդուլ բազմապատկվում են...

Սա՛՛ էր իմ կամքը անբեկանելի, Որ մի օր հասնեմ հոգուդ երկնքին Ու ներաճելով քո էության մեջ՝ Յոգուդ խորությամբ իմ հոգին լցնեմ:

Սուտը ապրում է այն բանի համար, Որ չկա մեր մեջ համարձակություն՝ Ճշմարտությունը խոստովանելու:

Ես վաղուց արդեն պիտի գժվեի, Բայց որովհետև, գիտեմ, աշխարհում Ոչ ոք երբևէ չի փորձի ներել Եվ կամ գեթ մի քիչ ինձ արդարացնել Խեղազարվելուս բախտորոշ պահին, Շարունակում եմ «խելոք» ձևանալ...

Յագնում եմ նորից բանականության Բազմաբովանդակ, բայց կեղծ հանդերձը Ու իմ դռները անուր փակելով՝ Ինձ վտարում եմ անընդմեջ կանչող Եվ ուղեղիս մեջ ոռնացող տենչից... Ոչինչ, լինում է, աշխարհը մեծ է, Մի անգամ նորից կփորձեմ ներել...

Յուղայի ծեռը մարմինս գրկում Ու ներխուժում է ոսկորներիս մեջ: Ես... միանգամայն հասարակ մարդ եմ՝ Ոմն աղջկա փխրուն մարմնի մեջ, Ու երազում եմ ճաշակել մի օր Ինձ հասանելիք երջանկությունը. Փորձիր չգրկել ինձ այդ հաճույքից, Որ քեզ քվում է քմահաճությո՛ւն...

Անակնկալի եկած աչքերս Լաց ու ծիծաղի զուգերգն են անսում.

Չասված խոսքերը ավելի խորն են, Ավելի սպասված ու... անբուժելի: Որտեղի՞ց հիմա գտնեմ զորություն Այս թուլությունս ներելու համար, Երբ սուր ցավ եմ զգում քիջններիս մեջ...

Ես վաղուց արդեն պիտի գժվեի, Բայց որովհետև, գիտեմ, աշխարհում Ոչ ոք երբևէ ինձ չի հասկանա, Շարունակում եմ «խելոք» ձևանալ:

Աչքեր... Կույր հայացքների մնջախաղ խելառ. Ու գնում ենք միշտ մի ուղղությամբ:

Ու միակ ճիշտը մեր նպատակն է, Այն, որ դարձնում է ես-ը զորավոր Անհավանական հաղթության պահին, Այն, որ մարտում է ցավը դարավոր Ու մղում առաջ հայացքն ու հոգին:

Աչքեր... Յոփացած, անզգա, հեգ, առաքինի. Ու հայացքների հսկա շտեմարան, Ուր ամբարված են նրանք մեկ առ մեկ Ու սպասում են լուռ անենն իր ժամին...

Մարդիկ գնում են միա՛կ ուղղությամբ. Ներքևից վերև կամ՝ վերջից առաջ... Ու էական չէ՛ բարձրանալով վեր, Յանո՞ւն են արդյոք նրանք թիրախին, Թե՞ առհասարակ գլորվում խորքեր: Նրանց քվում է, թե բարձրանում են, Քանզի այդպես է ուզում ուղեղը, Որ պարտավոր է սթափ լինել ու զգոն:

Աչքեր... Կուրացնող ու կույր հայացքներ... Ու գնում ենք մեք միշտ մի ուղղությամբ:

Գիտե՞ս, գիշերը զուրկ է հնայքից Իրականության շղարշների մեջ, Որովհետև ես ուզում եմ... քնել,

Իսկ առավոտյան չհիշել ոչինչ...

Աչքերը հաճախ այնքան են լացում, Որ արթնանում է ժպտալու փափագ, Իսկ այդ փափագը հույսի պատառն է, Որ փրկեց իր հետ Նոյը տապանում: Դրա իմաստը ես չեմ հասկանում...

Աշխարհիկ մարդու գրկանքների մեջ Ցավը առավել ցայտուն է ու սուր, Քանզի երբ դու ես սահմանում եզրեր Քեզ հասանելիք արժեքների մեջ, Տերը թիկունքիդ դավեր չի նյութում...

Գիտե՞ս, ծեռքերը ունակ են հիշել, Ունակ են փնտրել, գտնել ու տիրել, Միրել ու ստել, Եվ՝ անգամ սպանել, Սակայն ծեռքերը ունակ չեն ստել:

Երբեմն անգամ ամառվա տապին Իմ հոգին մի բուռ արև է ուզում Երբեմնի պարարտ մտքերիս համար, Որոնց ես անդարձ կորցնում եմ ասես, Խնդրում եմ՝ միայն ինձ գիժ չկարծես...

Գիտե՞ս, իմ օրը զուրկ է հնայքից...

Մտքի փակուղի Քնած ամբոխի Քներակներում... Յողը դեռ տաք է...

Յողը մինչև իսկ բուրում է մի քիչ Անցած օրերի զգխիչ բույրով. Դա օրհնություն է...

Կամ էլ... հերթական ձախողված մի փորձ՝ Յուշերին երբեք էլ տուրք չտալու: Իսկ դրա համար ուժ է հարկավոր Ու դաժանություն...

Սակայն հուշերը... բունբանգներ են: Կենսագիրներ են՝ միտքը խցանող... Յողը դեռ տաք է...

Շնորհավորանք



Լրացավ հետաքրքիր, հախուռն բնավորությամբ, միշտ արպտող ու անհանգիստ, դժվարություններից չերկնջող, անսպառ եռանդի ու հավատի տեր մեր ընկերոջ, բարեկամի ու բարի խորհրդատուի՝ Անահիտ Բալայանի ծննդյան 50-ամյակը: Մեր հարգարժան գործընկեր, մեր ազնիվ ու պարտաճանաչ տնօրեն: Այդ երբ և ինչպես գլորվեցին գեղեցիկ կենսագրություն հյուսած տարիները քո և զումարվելով՝ դարձան 50:Այդ տարիների կեսից ավելին սերտ ու նուրբ թելերով կապված են մանկավարժի բարձր ու շնորհակալ աշխատանքի հետ, այսօր արդարացիորեն դրվատանքի, գնահատանքի արժանի: Տարիներ առաջ՝ 1996-ին մեր՝ Խնձրիստանի միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվում,

թերահավատորեն ու շշուկով էինք ակնարկում այն մասին, որ բոլորովին երիտասարդ, փխրուն մի աղջիկ պետք է դեկավարի մի ողջ մանկավարժական կոլեկտիվ, մի ողջ միջնակարգ դպրոց՝ 190 աշակերտով (անուն հանած, լավագույն շրջանավարտներ տված մի հասուն կոլեկտիվ): Ո՞նց կարելի է վստահել, մի՞թե մեր խստապահանջ տղամարդ ուսուցիչները, փորձառու, ճանաչված, թրծված, կայացած մանկավարժներն ի վիճակի չեն տնօրեն լինել... Ո՞վ կպատկերացներ, որ տիկին Անահիտի պես նուրբ կազմվածքի ու նույնքան նուրբ հոգու տեր զգայուն էակը կդիմանա այս ծանր ժամանակների ծանր փորձություններին: Դիմացար... Դիմացար քո բարոյական կերպարով, մաքուր, անբասիր խառնվածքով, պարզությամբ ու անմիջականությամբ, աշխատասիրությամբ ու պահանջկոտությամբ: Դիմացար ու օրինակ ծառայեցիր կոլեկտիվի անդամների համար: Այսօր ուզում ենք ներես մեր թերահավատության ու անվստահության համար (դու ոչ միայն արդարացիոր թեզ, այլև գերազանցեցիր մեր սպասելիքները): Յետաքրքիր ու իմաստալից կյանքի ուղի է անցել Ա. Բալայանը: Ծնվել է Ասկերանի շրջանի Սեղիշեն (ներկայիս Խաչեն) գյուղում՝ 1962թ.: Ավարտել է Խնձրիստանի միջնակարգ դպրոցը: Բարձրագույն կրթություն է ստացել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում

(պատմության ուսուցչուհի): Աշխատանքային գործունեության առաջին էջերը գրվել են Խնձրիստանում, ու ամուսնացել, ընտանիք է կազմել, երկու աղջիկ զավակ է մեծացրել, այսօր նաև սիրասուն թոռնիկի տատիկ է: Սկզբում աշխատել է Խնձրիստանի մանկապարտեզում՝ որպես վարիչ: Կոլեկտիվում նրան ընդունել, սիրել ու վստահել են: Այսօր էլ մանկապարտեզի նախկին գործընկերներն ակնածանքով ու ջերմ սիրով են խոսում Անահիտի մասին ու վերհիշում իրենց համատեղ անցկացրած երջանիկ տարիները, տարիներ, որոնք շուտով տիկին Բալայանին մեզ մոտ բերին: Երջանիկ է այն մարդը, որ հետ մայելուց իր անցած տարիների շքերթում տեսնում է ժողովրդի լուսավորությունը, սերունդներին ընծայած իր սրտի թրթիռներն ու հոգու երանգները: Անահիտ Բալայանը Արցախի հայ դուստրերից է՝ հոգին հայրենի բնաշխարհի պես բազմերանգ, նպատակը՝ վճռական, սովորելում՝ պատրաստակամ, սովորեցնելում՝ նվիրյալ: Դպրոցը համարելով ազգային ինքնության պահպանման դարբնոց՝ նա մեծ ուշադրություն է դարձնում արտադասարանական միջոցառումների միջոցով դպրոցականների մեջ այնպիսի որակների արմատավորմանը, ինչպիսիք են հայրենասիրությունը, անձնագոհությունը, ծնողապաշտությունը և այլն:

Դպրոցն ու դպրոցավարությունը նրա համար կենսակերպ են, ապրելու և արարելու ուղղորդող գաղափար, որի իրականացման համար նա կարևորագույն հանգամանք է համարում նվիրվածությունը, տքնաբան աշխատանքը, սերը գործի հանդեպ: Բոլոր տեսակի խոչընդոտներն էլ, ըստ տիկին Բալայանի, հաղթահարելի են, պարզապես պետք է եռանդ ու հավատարմություն մասնագիտությանդ ու կոչմանդ: Եռանդի, նվիրվածության առունով անգերազանցելի է: Երբեք չի հոգնում, չի տրտնջում, մեզ էլ չի թողնում հուսահատվել: Ապրում է ակտիվ հասարակական կյանքով, ամենուր հասցնում է, ամենուր գլխավորն է, ամենուր բարի խորհրդատու: Միշտ էլ աչքի է ընկել աշխատանքային բարձր կարգապահությամբ, պարտքի ու պատասխանատվության զգացումը նրա արժանիքներից մեկն է: Եվ որպես տնօրեն նա այս արժանիքները շատ է կարևորում դպրոցում, ուր կարգապահությունը, իրոք, նախանձելի հիմքերի վրա է դրված: Նրա մարդամոտ բնավորությունը մեզ հնարավորություն է տալիս ամեն պատեհ-անպատեհ առիթով շրջապատել նրան, գրուցել տարբեր թեմաների շուրջ: Ծով լռությամբ, համբերությամբ լսում է մեզ, աջակցում: Միտքն է երիտասարդներին, սկսնակ ուսուցիչներին, նրանց հա-

մար գեղեցիկ միջոցառումներ ու սպորտային մրցույթներ նախաձեռնում, ինքն էլ անձամբ մասնակցում է, ոգևորում, խրախուսում (զուցե և դրա մեջ է նրա միշտ երիտասարդ լինելու գաղտնիքը): Նա նաև դպրոցի բարձր դասարանցիների կուռքն է: Վերջիններս հաճախ են դիմում իրենց բարեկամ տնօրենին և իրենց հուզող հարցերի սպառիչ ու արդարացի պատասխանները նրա մոտ որոնում: Ուշադիր է ու հոգատար: Ոչ մի մանրուք չի վրիպում նրա «խուզարկու» հայացքից: Լավի ու բարու սերմնացանի կյանքի ճանապարհը թող երկար ձգվի, նրա լուսավոր կյանքում երջանիկ ու արևոտ օրերը թող որ շատ լինեն... Սիրելի՛ տնօրեն, թող առողջությունն ու հաջողությունները լինեն ուղեկիցը քո, մարդկային վեհ արժանիքներով ամբարված հարուստ քո հոգու՝ դեռ երկար ու շատ տարիներ մարդկանց ու սաներիդ բաշխելու, տալու, շնայելու համար... Ու թող բազմապատկվեն դպրոց բերող քո առավոտները՝ միշտ ժամանակին, միշտ առաջինը, միշտ ճշտապահ: Քեզ՝ սեր և հարգանք, մեր լավ տնօրեն...

Լավագույն մադրանքներով՝ Խնձրիստանի միջն. դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ՍԵՐՈՒՆԴ

ԱՌՈՂՋ ՄԻԱՄՍՅԱԿ

«Առողջ մանուկ, առողջ սերունդ, առողջ ազգ»... այս կարգախոսով է ամառը դիմավորել ՀՕՄ-ի Ստեփանակերտի «Սոսե» մանկապարտեզը:

ՀՕՄ-ի Արցախի մեկուսի մասնաճյուղի մանկապարտեզների պատասխանատու Ա. Գրիգորյանի առաջարկությամբ, հունիս ամիսը հանրապետության բոլոր «Սոսե» մանկապարտեզներում հայտարարվեց երեխաների առողջության պահպանման միամսյակ:

Ստեփանակերտի «Սոսե» մանկապարտեզն առաջարկն ընդունեց մեծ ոգևորությամբ: Տնօրենի և դաստիարակների համախմբված ջանքերով մշակվեց ծրագիր, և ստեղծվեց համապատասխան միջավայրը՝ միջոցառումն անցկացնելու համար: Վերոհիշյալ կարգախոսով ստեղծվեցին դեպի ջերմ ու բովանդակալից ամառ:

Բայց թող ուշացած չհամարվի, ամռան առաջին օրվան՝ երեխաների պաշտպանության միջազգային օրվան՝ անդրադառնալով:

Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատում կազմակերպվեցին տարաբնույթ միջոցառումներ: Օրվա հերոսներն էին հանրապետության մանկապարտեզների սանիկները: Իր կարևոր մասնակցությունն ունեցավ ՀՕՄ-ի Ստեփանակերտի «Սոսե» մանկապարտեզը:

Արդեն բարի ավանդույթ են դարձել այդ օրը Ստեփանակերտում կազմակերպվող ցերեկույթները: Երեխաները հանդես եկան երգերով, պարերով, ասմունքով: Բոլորն էլ կատարյալ էին յուրովի:

Ստեղծվեցին հանդես եկան հայրենասիրական երգ ու պարով: Ավագ խմբի սանիկ Կարեն Աբրահամյանը «Ձիվորիկ եմ» երգի գեղեցիկ մենակատարման համար կրթության նախարարության կողմից արժանացավ պատվոգրի և նվերների:

Օրը հիշարժան էր մեկ այլ իրադարձությամբ ևս: Արդեն երկրորդ տարին է՝ «Սոսե» մանկապարտեզի դաստիարակները մասնակցում են երեխաների միջոցառմանը զուգահեռ անցկացվող մրցույթ-ցուցահանդեսին: Նրանց աշխատանքներն արժանացան 2-րդ տեղին: Այս տարի դաստիարակները մրցույթին ներկայացան ավելի բարդ աշխատանքներով, բայց արժանացան պատվավոր 3-րդ հորիզոնականին ու պարգևատրվեցին պատվոգրով: Այնինչ՝ աշխատանքները շատ յուրահատուկ էին: Ներկայացված էր «Ծա-

ղիկների կոմպոզիցիա»՝ պատրաստված տարբեր նյութերից՝ թղթից, ուլունքներից, խմորից, կտորեղենից: Ամենատպավորիչը



70X90սմ չափերով «Սոսե» մանկապարտեզի մակետն էր: Այն ամբողջովին համընկնում էր մանկապարտեզի կառուցվածքին. ներկա-



յացված էին մանկապարտեզի բոլոր սենյակները՝ խմբասենյակներ, ննջասենյակներ, տնօրենի կաբինետ, խոհանոց, զուգարաններ, լվացարաններ, հանդերձարաններ՝ ի-

րենց կահավորանքով, ինչը ևս կառուցվածքով և զույգերով համընկնում էր իրական առարկաներին: Բնույթով շատ բարդ ու նրբին աշխատանք էր: Ողջ ցուցահանդեսի ընթացքում մանկապարտեզի տնօրեն Նելլի Ղուլյանը այցելուներին ներկայացնում էր աշխատանքները՝ գնահատելով իր մանկապարտեզի դաստիարակների աշխատանքը: Մեր կարծիքով, դաստիարակներն արժանի գնահատական չստացան, բայց չընկճվեցին, քանի որ կարևորը հաղթանակը չէ, այլ մասնակցությունը:

Պայմանավորվածության համաձայն՝ հունիս ամսվա առաջին շաբաթը մանկապարտեզ այցելեցին Ստեփանակերտի «Արևիկ» մանկական պոլիկլինիկայի բժիշկները՝ ակնաբույժ, ատամնաբույժ, հոգեբան: Նրանք հետազոտեցին մանկապարտեզի բոլոր երեխաներին: Տվեցին նախնական փնտրողումներ, գրանցեցին և իրավիճակները պոլիկլինիկա՝ բուժում ստանալու: Երկրորդ շաբաթում նույն բժիշկները մանկապարտեզում հանդիպեցին ծնողների հետ՝ փորձելով ոգեշնչել նրանց լուրջ զբաղվելու մանուկների առողջությամբ: Շաբաթվա վերջին կազմակերպվեց «Տպավորությունների օր», որի ժամանակ նկարչության և գրույցների միջոցով արտահայտեցին իրենց տպավորությունները:

Երրորդ շաբաթում հանդիպեցին ավտոճանապարհատրանսպորտային պետավտոտեսուչների հետ: Ինչպես բժիշկների դեպքում, երեխաները նրանց դիմավորեցին երգերով ու գեղեցիկ բեմականացումներով: Տեսուչները գրույցեցին փոքրիկ քաղաքացիների հետ, բացատրեցին որոշ ճանապարհատրանսպորտային երթևեկության կանոններ: Նրանք տպավորված էին փոքրիկների գիտելիքներով:

Նախօրոք կա պայմանավորվածություն ԱԻ վարչության աշխատողների հետ, որոնց մասնագիտական գրույցները և խորհուրդները կնպաստեն երեխաների ճիշտ դաստիարակությանը և կկանխեն արտակարգ իրավիճակների ի հայտ գալը: «Սոսեի» սանիկները ողջ հուլիս ամսվա ընթացքում համախմբված են տեսարժան վայրեր, կազմակերպվել է էքսկուրսիա դեպի բերդաքարաք Շուշի, մայրաքաղաքի տեսարժան վայրեր՝ թանգարաններ, լուսավազան, ժամանցի վայրեր:

Ստեղծվեցին՝ նորանոր մտահղացումներ ու հաջողություններ: Եվ չնռաճանք, որ ազատ ու անկախ հայրենիքի գրավականն առողջ ազգն է, որը մեր այսօրվա սերունդն է՝ մեր առողջ մանուկները:

Էմա ՄՈՎՍԻՍՅԱՆ
Դաստիարակ

ՀՐԱԺԵՆՏԻ ԽՈՍՔ



Հիսուն 50 տարեկանում կյանքից հեռացավ վաստակաշատ մանկավարժ, մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության նվիրյալ, բարու և ազնվության տիպար Սվետլանա Արշավիրով-

նան:

Ծնվել է 1962թ. մայիսի 15-ին, Սումգայիթում: 1969-1977թթ. սովորել է Սումգայիթի հ. 15 միջնակարգ դպրոցում, 1977-1981թթ.՝ Բաքվի Սաբիրի անվան մանկավարժական ուսումնարանում:

1981-1988թթ. դասավանդել է Սումգայիթ քաղաքի հ. 1 դպրոցում՝ որպես տարրական դասարանների ուսուցչուհի:

1982-1988թթ. սովորել է Բաքվի Ախունդովի անվան մանկավարժական ինստիտուտի ռուսաց լեզվի և գրականության ֆակուլտետում: 1988-1989թթ. աշխատել է Ստեփանակերտի հ. 1 մանկապարտեզում՝ որպես դաստիարակչուհի: 1989-1993թթ. աշխատել է Ստեփանակերտի հ. 11 դպրոցում՝ որպես ռուսաց լեզվի ուսուցչուհի տարրական դասարաններում: 1993թ. փետրվարից մինչև սեպտեմբեր ամիսն աշխատել է Ասկերանի միջնակարգ դպրոցում՝ որպես ռուսաց լեզվի ուսուցչուհի:

1993թ. սեպտեմբերին ընդունվել է աշխատանքի Ստեփանակերտի հ. 4 միջնակարգ դպրոցում՝ որպես ռուսաց լեզվի ուսուցչուհի և աշխատել մինչև 2012թ. հունիսի 20-ը:

Հարգանքով էր լցված մեծի ու փոքրի, ղեկավարի ու գործընկերների հանդեպ: Ուներ բարձր պատասխանատվության և պարտքի զգացում: Վերջին տարիներին առավել ևս կապված էր դպրոցին ու նրա պատերից դուրս կյանքը չէր պատկերացնում:

Դու ընդմիջտ կմնա քեզ ճանաչողների սրտերում՝ որպես բարի ու անաչառ, նվիրյալ անձնավորություն:

Ստեփանակերտի Մ. Մաչոյցի անվան
հ. 4 հիմն. դպրոցի մանկավարժական
կոլեկտիվ

ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆ Է

«Հայրենիքը եզերք է, ուր գերի է հոգին...»
Վոլտեր

Մարդու առաջին արժանիքը հայրենասիրությունն է, քանզի առանց հայրենիքի մարդ ժամանակի ու տարածության քմահաճույթին մատնված ավազահատիկ է...

Այսօր իբրև հայրենասերի վառ օրինակ, մեր աչքի առաջ ունենք համազյուղացի, ռուսաստանաբնակ Վրեժ Սաֆարյանին, որն ունի ազնիվ մի հիվանդություն՝ կարոտն առ հայրենիք, որը և ամեն տարի նրան կանչում է ծննդավայր:

20-ամյա հաղթանակած, սրբացած հողի կանչով էր, որ եկավ, ու այդ հողն իրենց արյունով ոռոգած կաղարծեցի նահատակների հիշատակին վեր խոյացավ արծվախայաց պատվանդանը...

Նրա կատարածը, հիրավի, ազգապահպան է ու վեհացնող...

Եվ որովհետև ազգի ապագան մանկան ձեռքերում է, ուստի այդ մանուկը պիտի դալայի միայն հայրեն, պիտի երզվի սուրբ պատվանդանով, ճանաչի՝ հայրենի սրբավայրերը՝ ժառանգելով հայրենասիրություն:

Ու շարունակվեց վեհացնող բարեգործությունը. կազմակերպվեց ուխտագնացություն Կաղարծու միջնակարգ դպրոցի աշակերտական, ուսուցչական և ծնողական կոլեկտիվներով՝ դեպի սրբավայր Գանձասար ու պատմական Տիգրանակերտ:

Դեռևս ճանապարհին մեր աշակերտները լցված էին մեկ ուրիշ վարակիչ հայրենասիրությամբ. դա Վրեժի օրինակն էր: Մերք հպարտանում էին նրանով, մերք զգում շոշափելի հայրենասիրությունը, որը, կարծում են, սնուցեց ու հասունացրեց նրանց մեջ եղած գաղափարականը:

Իսկ երբ ուր դիրք պատմական Տիգրանակերտ, աշակերտները ուսուցիչ Նելսոն

Սարգսյանի գլխավորությամբ սկսեցին իրենց բաց դասը բաց երկնքի տակ՝ պեղումներով հաստատված հողի վրա, Տիգրան Մեծի մեծագործությունների մասին...

Նրանք հավերժացան փլատակներից վեր խոյացած բերդ-ամրոցի հիշատակների հետ՝ իրենց հոգում հավերժացնելով ու կերտելով հայրենասիրության մի նոր կոթող, հուշամատյանում թողնելով հայրենաշունչ գրություն. «Ես հետնորդն եմ Տիգրանի ու կերտողն եմ Արցախի» (Հ. Գևորգյան):

Շարունակվեց հայրենասիրություն սերմանող ուխտագնացությունը, և պատարագին արդեն Գանձասարում էինք: Աղոթում էինք, երբ դողանջեցին Գանձասարի զանգերը՝ ի լուր աշխարհի ավետելով՝ ուզեք թե չուզեք, կապի՛ր աղոթող սերունդը, կկառուցի՛ քարակերտ տաճարներ, հացահատիկ կցանի բարեբեր ակունքներում, գինի կքամի՛ ու մեր նահատակների կենացը կխմի՛...

Ռ. ՍԱՅԻՅԱՆ